Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

891.99
Մ-96

Ֆ91.99
Ս-96

Арм.
Н 2-3381₂

Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ

NOV 2011
891·99
Մ-96

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Гос. Публичная Б-ка в Ленинграде
Инв. № 10159

ՊԵՏՀՐԱՏ 1939 ԵՐԵՎԱՆ

09.07.2019

44965

ՃԱՆԱՊԱՐՀԸ

139-87

Նոսրացող շամանդաղի միջից լույսի առաջին շողերը հետզհետե թափվում էին ճանապարհի վրա։ Այնտեղ, ձորափին, բացվում էր մի նոր տեսարան։ Բրիգադի յերեք ողակներն իրենց քրտնաջան գործի հետ էին։ Որը նոր էր սկսվում, բայց յերևում էր, վոր նրանք վաղուց էին գործի անցել։ Ինչ վոր ցանկապատ քանդված՝ մի կողքի յեր թափված, թարմ ծառերը կարված՝ մի կողմ էին գցված, ապա կային քարի նոր կիտած կույտեր, բահ, քլունգ, կացին...

— Դե, տղերք ջան, ա՛յ, ճամբեն հսենց պետք է տանենք. հենց անենք, վոր ժամանակին պրծնենք։

— Ի՞նչ է, վախում ես չկարևնանք,—բրիգադիրին փորձել ուզեց Սեթը։

— Չե՛, չեմ վախում, համա գործ շատ կա։ Շուտ պրծնենք, վոր անտառի գործից էլ հետ չընկնենք. դե՛, գիտեք, էլի, թե վոնց բոլորը մեզ են սպասում։

— Հա՛, հսոր անշուշտ պետք է պրծնենք։ Արշոյի տասը վոր չկատարենք՝ չեղած բան է։

Խոսքը կոլտնտեսության նախագահի պատվերի մասին էր։

— Բա ինչ. նրա խոսքը գետնովը տալ չի լինի,— խոսակցությանը խառնվեց մի ուրիշը և կանգ առավ՝

Իսկ բրիգադիրին թվաց, թե վերջինն իր միտքը կիսատ թողեց, և ինքը շարունակեց.

— Նա յերեկ վոր ասաց, թե՝ առավոտը շուտ կը-վերցնես քո բրիգադն ու միասին ճամբան կպրծնես, հենց ենպես յեղավ, վոր չկարողացա «չե» ասել։ Կամ ել՝ են տեսակ մարդուն վոնց պիտի «չե» ասես։ Նա վոր մի բան ասում է, մեր բոլորիս սրտիցն է ասում, իսկ թե՝ «չե» ասես, առաջին հերթին քեզ համար ես վատն ուզում։

— Դու ել տեսնում ես, ելի, ճամբեն փուլ է յեկել։ Վոր չդաս ու ժամանակին չշինես, ով է տուժելու։ Նախ վոր՝ մթերման կայանին փայտը ժամանակին չենք կարող հանձնել ու պայմանագիրն ել թերի կը-թողնենք, յերկրորդն ել՝ մեզ բավական աշխոր կպա-կասի...

Անտառը փարթամ եր և ամեն աշնան կաղնուտում սկսվում եր փայտամթերման գործը։ Կոլտնտեսական թե մենատնտես, իրենց դաշտային աշխատանքները վերջացնելով, անցնում եյին փայտամթերմանը։ Փայ-տեղենն անտառից կրելով՝ հանձնում եյին մոտակա մթերման կետին։ Անտառը տանող այս ճանապարհն այնքան կարճ եր, վոր գրեթե կիսով չափ թեթևաց-նում եր աշխատանքը։ Այդ եր պատճառը, վոր բոլորն ել այդ գերադասում եյին հանդը տանող ճանապարհից, վորով նույնպես կարելի յեր անտառ մտնել։ Ցավ, չնա-յած նրան, վոր ճանապարհը ձորի յեզերքին հորդա-ռատ անձրևներից յերբևեն փուլ եր գալիս, բայց միշտ ել փոքրիկ նորոգման յենթարկելով՝ յերթևեկությունը հնարավոր եյին դարձնում։ Հիմնական նորոգումը, սա-

կայն, մինչև այդ որը հետաձգվում եր անլուծելի։ Միայն այժմ եր, ահա, վոր մի ամբողջ բրիգադ ձեռնամուխ եր յեղել ճանապարհը հիմնովին նորոգելու։

— Հերիք է չե՞, ել հո ծառ չենք կտրելու,—նրանց խոսակցության թելը կտրեց Սեթի ողակից մեկը՝ դի-մելով բրիգադիրին և նոր կտրված վերջին ծառը այգու խորքը քաշեց։

—Վոնց վոր յերևում է, ես մի ծառն ել պիտի կտրենք,—յենթադրեց բրիգադիրը, ապա նորից աչքի անցկացնելով՝ վորոշակի ասաց,—Հա, եդ մի ծառն ել կտրի։

Լավեց կացնի թխկոցը, վոր միախառնվեց քլունգ-ների ու բահերի անընդհատ զնգոցին, վորոնք զբաղ-ված եյին այգու ծայրը քանդելով և ձորակի ճանա-պարհին հավասարելով։

— Մի ինձ լսիր, Մանաս,—ասաց բրիգադիրը և յեկավ մոտեցավ իր մի ընկերոջը, վորից հաճախ կար-ծիք եր հարցնում։

Մանասն ընդհատեց աշխատանքը և քլունգը ձեռքին կանգ առավ։ Յերկուսով յերեսները դարձրին դեպի փուլ յեկած ճանապարհը։ Ցավ բրիգադիրը մատնացույց անելով՝ շարունակեց իր խոսքը.

— Ինչ վոր կա, ես ձորն է։ Ես փլվածքի համար մեծ գերաններ պիտի տնկենք։ Իմ կարծիքով չորսը հերիք է։ մեկն ես ծերին, մեկն են ծերին, յերկուսն ել՝ մեջտեղը, իրար հավասար, ուղիղ փլվածքի մոտ։ Գերաններին վերից կամրացնենք ծնկաձև ճյուղերով, իսկ ներսը քար ու խիճ կլցնենք։ Բայց ես չե բոլորը։ Թե վոր մենք եսպես թողնենք, զորձներս զուր կանց-նի, հեղեղը կգա, նորից կքանդի։ Պիտի են գլխից, իր ասելիքն ավարտած համարելով։

տեսնում ես են բլուրը,—մատով ցույց տվեց բրիգադիրը,—հենց դրա վերևից փոքրիկ առու բացենք ու տանենք դեպի ձորակը, որ ելի հեղեղն ես կողմը չանցնի։ Հետո, այդու ես պոչն ել որ հարթենք, կարգին կլինի ու...

— Բա ճամբի ես փոսը։

— Հա, ես փոսն ել քար ու խճով կամրացնենք, որ ել ցեխով չլցվի։

— Եղքան քար ու խիճը չորս գերանը կարանն պահեն։ Ցես կասեմ՝ չորսի տեղ վեց գերան գցենք,—առաջարկեց Մանասը։

— Չե՛, չորսն ել հերիք է, մեծ-մեծ գերաններ կընտրենք, վերից ել, վոնց որ ասի, ծնկաձև ճյուղերով կամրացնենք։

— Մանասն այլևս չհակաճառեց, քանի որ բրիգադիրը ճանապարհ շինելու գործում փորձված մարդ եր։ Դեռ նախքան կոլտնտեսություն մտնելը նա աշխատում եր ճանապարհաշինարարության մեջ և կոլտնտեսության մեջ ել իր շնորհքը ցույց եր տվել։ Բոլորի հիշողության մեջ դեռևս թարմ եր հանդը տանող ճանապարհին փոքրիկ կամուրջ կառուցելու դժվարին աշխատանքի փայլուն կատարումը։ Կոլտնտեսության նախագահ Արշոն նման գործը, ինչպես այժմ ել այս ճանապարհի վերանորոգումը, միշտ նրան եր հանձնարարում։ Գիտեր, թե ում հետ գործ ուներ։

— Հա, լավ է յերևում,—բավական լռելուց հետո ասաց Մանասը.—են առուն որ բացենք, ճիշտ որ լավ կլինի։ Մենակ են է, որ գեմն ամուր պատնեշ պիտի շինենք։ Վայ թե հեղեղը նորից ես ճամբեն քանդի։

— Քանդի՛,—զարմացավ բրիգադիրը։—տնաչեն, տանձ հո չենք ուտում, յեկել ենք մի բան անելու։ Ենենց կշինենք, որ հեղեղն ուզենա ել, չկարենա ես կողմն անցնի։

— Հա, ամուր կշինենք։

Այս անգամ ել Մանասը համաձայնեց բրիգադիրի հետ ու լռեց։ Պարզ յերևում եր, որ լռելու ժամանակ նրա միտքն ուրիշ բան եր որոնում—խո չե՞ր սխալվում բրիգադիրն իր առաջադրած պլանի մեջ։ Բայց ամեն անգամ Մանասի կասածն ու պատճառաբանությունը վիճելու առիթ չեյին տալիս նրան, թեև այլ պայմաններում տաք-տաք կվիճեր հետը։ Այս բոլորից հետո նա ուզեց պարզել, թե ինչու այդ առուն նախանցյալ տարի չանցկացրին։

— Սկզբում որ եդ արիը բացեյինք, հո ես ճամբեն նորից փուլ չե՞ր գա ու վոչ ել սայլը կխորտակվեր։

— Վոնց բացեյինք, չե՞ս տեսնում, որ առուն այդու պոչով պիտի անցնի, բա Ծիկոլանց Միհրանին ինչ պատասխան ելիր տալու։

Մանասը ժպտաց մեղավորի պես։

— Այդու պոչով պիտի անցնի, հա,—ասես նոր գըլխի ընկնելով,—բացականչեց նա։

— Բա վո՞ր տեղով։ Միտդ չի՞, ես այդու պոչի համար չե՞ր, որ Ծիկոլանց Միհրանն ես մեր Սեթի գլուխը չարդեց։

— Հա, հիշում եմ...

Շատ դեպքեր եյին անցել այդ ճանապարհի գլխով։ Աշունը գալիս եր թե չե, մի կողմից անտառի գործն եր սկսվում, իսկ մյուս կողմից անձրևները տեղում

— Քանդի՛, — զարմացավ բրիգադիրը։— տնաչեն, տանձ հո չենք ուտում, յեկել ենք մի բան անելու։ Ենենց կշինենք, որ հեղեղն ուզենա ել, չկարենա ես կողմն անցնի։

— Հա, ամուր կշինենք։

Այս անգամ ել Մանասը համաձայնեց բրիգադիրի հետ ու լռեց։ Պարզ յերևում եր, որ լռելու ժամանակ նրա միտքն ուրիշ բան եր որոնում—խո չե՞ր սխալվում բրիգադիրն իր առաջադրած պլանի մեջ։ Բայց ամեն անգամ Մանասի կասածն ու պատճառաբանությունը վիճելու առիթ չեյին տալիս նրան, թեև այլ պայմաններում տաք-տաք կվիճեր հետը։ Այս բոլորից հետո նա ուզեց պարզել, թե ինչու այդ առուն նախանցյալ տարի չանցկացրին։

— Սկզբում որ եդ արիը բացեյինք, հո ես ճամբեն նորից փուլ չե՞ր գա ու վոչ ել սայլը կխորտակվեր։

— Վոնց բացեյինք, չե՞ս տեսնում, որ առուն այդու պոչով պիտի անցնի, բա Ծիկոլանց Միհրանին ինչ պատասխան ելիր տալու։

Մանասը ժպտաց մեղավորի պես։

— Այդու պոչով պիտի անցնի, հա,—ասես նոր գըլխի ընկնելով,—բացականչեց նա։

— Բա վո՞ր տեղով։ Միտդ չի՞, ես այդու պոչի համար չե՞ր, որ Ծիկոլանց Միհրանն ես մեր Սեթի գլուխը չարդեց։

— Հա, հիշում եմ...

Շատ դեպքեր եյին անցել այդ ճանապարհի գլխով։ Աշունը գալիս եր թե չե, մի կողմից անտառի գործն եր սկսվում, իսկ մյուս կողմից անձրևները տեղում

եյին անընդհատ, հաճախ շատ հորդառատ։ Յեթե հեղեղներից ճանապարհը փուլ չեր գալիս, ապա միշտ էլ ցեխալճեր եյին զոյանում վրան։ Թե մեկ և թե մյուս դեպքում, սայլով անցնելը վտանգավոր եր դառնում։ Շատ անասուն եր փչացել այդ ճանապարհին, միայն հիշվում եր հինգ դեպք, յերբ սայլն ուղղակի ձորն եր ընկել, իսկ մյուս յեղած մանր-մունր ֆլասներն ՝ ոչ կարող է թվել։ Ամեն անգամ, սակայն, յերբ դժբախտ դեպք եր պատահում, ծայր եր առնում բողոքի կծիկը։

— Չէ, ես չեղավ...— սկսում եյին գյուղացիները։

— Բա յեղավ։ Եսոր քո սելն ընկավ, հագուց իմը կընկնի, ելոր՝ սեկելինը։

— Ե՛լ համբերել չի լինի. պետք է մի ճար անենք...

— Ճարներս են է, վոր կամ պետք է ես ճամբեն թողնենք ու մյուս ճամբով մանր գանք, կամ էլ՝ Ծիկոլանց Միհրանի այգու պոչը կտրենք ու ճամբեն լենացնենք։

— Են մյուս ճամբեն յերկար ճամբա յե։ Սա վոր կա, հենց իսկն է. մի որում անտառ ենք գնում ու հետ գալիս։ Ախպեր, հո չենք կարա ամեն անգամ մեկի տեղ յերկու որ կորցնել։ Չէ, պետք է ես ճամբեն շինենք։

— Քոռն ինչ է ուզում յերկու աչք։ Բա մեր ասելն ինչ է...էլ համբերել չի լինի, գնանք չափարը զոռով քանդենք, տեսնենք ինչ է անելու...— ասում եր Սեթը, վոր այն ժամանակ տաքարյուն և համարձակ յերիտասարդներից եր։

Յեվ մի անգամ, յերբ նորից բողոք բարձրացավ, Սեթը հավաքեց իր կողմնակիցներին ու գնաց Ծիկոլանց Միհրանի մոտ, թե՝ «էլ համբերելու տեղ չկա, քո բաղի պոչը պետք է կտրենք, վոր ճամբեն լենացնենք»։

— Ցես քար ու չոլ չունեմ, վոր ճամբա շինեք։ Բաղ եմ արել, վորդու պես ծառ եմ խնամել ու հիմի կարամ ձեզ բաղիցս տեղ դիջեմ, ծառ կտրեմ...

— Դու ինչու յես կտրում վոր... մենք կկտրենք, ելի։

— Մարդն իր վորդուն մորթել կտա. ենպես էլ բաղիս ամեն մի ծառը։ Արյուն-քրտինք եմ թափել, վորդու պես մեծացրել ու հիմի...Գնացեք, ուրիշ ճամբա կա, յես էլ են ճամբով եմ գնում-գալիս, ինչ անենք, թե մի քիչ յերկար է։ Չէ, յես իմ բաղից մի թիզ էլ չեմ դիջի, թեկուզ արյունս էլ թափեք,— վճռականորեն ասաց Ծիկոլանց Միհրանը։

Յերբ խոսքը չանցավ, Սեթն ուժի դիմեց. գնաց ցանկապատը քանդեց, Ծիկոլանց Միհրանը արյունը գլուխը տալով, բահը տվեց Սեթի գլխին։ Տուր ու դրմբոցի լուրը գյուղխորհուրդի նախագահի ականջը հասավ։ Նախագահն ինքն անձամբ խառնվեց գործին։ Յեկավ-դիտեց ձորափն ու ճանապարհը։ Նայեց արդելք հանդիսացող այգուն և ուզեց հարցը վերջապես լուծել։ Սկզբում փորձեց համոզել, ապա սպառնաց, բայց Ծիկոլանց Միհրանին վոչ մեկն ազդեց, վոչ մյուսը։

— Կարճ ճամբա յեն ուզում, թող ձորափին կամուրջ շինեն, յես ինչ մեղք ունեմ եստեղ. իմ ամեն մի ծառը մի-մի վորդի յե ինձ համար, բաղս քար ու չոլ չի, վոր ճամբա շինեք։

Գյուղխորհրդի նախագահը ծանր վիճակի մեջ ընկավ։ Ի՞նչպես աներ. Ծիկոլանց Միհրանը միջակ գյու-

զայի յեր, վորն, ինչպես ինքն եր ասում, վորդու պես ծառ եր խնամել ու վորդու պես էլ սիրում եր ամեն մի ծառը։ Կարող եր ստիպել, վոր նա զրկվեր իր այդու մի խումբ ծառերից։ Մյուս կողմից էլ, նրա պատճառաբանությունը ճիշտ եր, քանի վոր ուրիշ ճանապարհ էլ կար։ Յեվ նախագահն անզոր գտնվեց դրա դիմաց։ Ուրիշ միջոց չկար, նա ինչ-վոր բան մտածելուց հետո հայտարարեց, վոր հանգիստ թողնեն Միհրանին։

Ինչպես միշտ, այդ ժամանակ էլ, այդ խնդիրն անլուծելի մնաց։ Զորափի կողմից փուլ յեկած տարածության տեղ մի թեթև կամուրջ շինեցին, ինչպես ասում են, ճանապարհը կոծկեցին և ժամանակավորապես յերթևեկությունը հնարավոր դարձավ։ Այնուհետև նորից ժամանակ անցավ, աղետը մոռացվեց և ամեն ինչ դարձյալ իր առաջվա հունը մտավ։ Առաջ յեկան նոր խնդիրներ և թվում եր, թե այդ ճանապարհի մասին այլևս մտածող չկար։

Կոլտնտեսության նախագահ Արշոն, վոր հարևան եր Ծիկոլանց Միհրանին, տեսնելով նրա համառությունը՝ յերբեմն հանաքով ասում եր նրան։

— Ա՜յ մարդ, վո՞չ բաղիդ պոչն ես զիջում, վոր կանոնավոր ճամբա շինենք, վո՞չ էլ կոլտնտեսություն ես մտնում...

— Չե՛, յես կոլտնտեսություն մտնողը չեմ։ Մտնեմ, վոր իմ բաղն ուրիշի ձեռքը գցեմ։ Վորդու պես ծառ եմ խնամել, վոր ուրիշն իր ուզածի պես ճղակտոր անի՞,—պատասխանում եր Ծիկոլանց Միհրանը։

— Ի՞նչու ուրիշը, նորից դու կլինես ելի։

— Տեսնենք...—վերջը փափկեց նա։

Դրանից հետո Միհրանն սպասում եր դեպքի բերումին։ Շփվում եր հարևան կոլտնտեսականների հետ, ստուգում եր նրանց ապրուստը, վոր չլինի թե հանկարծ սխալվի։ Կոլտնտեսության նախագահ Արշոն էլ իր հերթին շարունակում եր համոզել նրան, վոր կոլտնտեսություն մտնի։ Բայց խոսքն իր ազդեցությունը չեր ունենա, յեթե Միհրանը գործնականում չհամոզվեր։ Բերքաբաշխման ժամանակ, յերբ հարևան կոլտնտեսականները բավական մթերքներ ստացան և սկսեցին տան համար ամեն ինչ ձեռք բերել, Միհրանը համոզվեց, վոր ինքը կոլտնտեսությունից դուրս յերբեք այդքան չեր կարող վաստակել։ Ուստի և, մի անգամ մոտեցավ նախագահին, բարևեց նրան և մեղավորի պես ժպիտը դեմքին խաղացնելով ասաց.

— Ուրեմն ասում ես, թե իմ բաղն ուրիշի ձեռքն չի ընկնի, ելի, թե վոր կոլտնտեսություն մտնեմ։ Ախր, վորդու պես ծառ եմ խնամել...

— Խնամել ես ու վորդու պես էլ կխնամենք։ Զգիտես, վոր կոլտնտեսության այդին խնամողն ամեն մի ճյուղի համար էլ պատասխանատու է։ Ո՞վ կթողնի, վոր մեկն ու մեկը ծուռ աչքով նայի կոլտնտեսության կայքին։ Վոր եղպես լինի, ո՞ւր կերթա...

Ծիկոլանց Միհրանը կոլտնտեսություն ընդունվեց այն ժամանակ, յերբ արդեն այգու բերքը հավաքել եր և այլևս աշխատանք չեր մնում։ Նա անցավ այլ աշխատանքի, ինչպես մյուս կոլտնտեսականները։ Նրանց հետ միասին սկսեց անտառից փայտեղեն կրել սայլով և հանձնել մթերման կայանին։ Կարճ ճանապարհը գեռևս կարելի յեր ոգտագործել առանց վերանորոգման, քանի վոր հորդառատ անձրևները չեյին սկսվել։ Մի

անգամ նախագահ Արշոն նրան հեռավոր ակնարկ արեց ճանապարհի հիմնական վերանորոգման մասին, իսկ Միհրանը նորից իր հին դարդը լացեց։

— Արշո ջան, ախր, բաղի ամեն ծառը մի-մի վորդի յե, մարդը վոնց մորթի եղ վորդիներին,—ասաց Միհրանն այն համոզումով, վոր պտղատու ջահել ծառը յերբեք չի կարելի կարել։

— Ճիշտ ե, այդու ծառերը թանկարժեք են, բայց ավելի մեծ գործի համար կարելի յե մի քանի ծառ կարել,—ասաց Արշոն մեղմորեն, քանի վոր նախատեսված եր հետագայում յերբ փայտամթերման պլանը կատարելին անցնել ճանապարշինարարությանը, և համոզված եր, վոր այդ գործում այլևս վոչ մի արգելք չեր լինի։

Մի դեպք, սակայն, շտապեցրեց այդ գործը։

Մի որ Միհրանը մի խումբ կոլտնտեսականների հետ սովորականից շատ վաղ գնաց անտառը։ Յերբ տեղ հասան, յեղներն արձակեցին, կապեցին սայլի ճաղերից ու կեր տվին, իսկ իրենք սկսեցին նախ ծառերը կտրտել, ապա անհրաժեշտ յերկարությամբ մաս-մաս անել ու սայլերը բեռնել։ Կեսորից անց եր, յերբ սայլերն արդեն բեռնված եյին։ Յեղները լծեցին և իրար ձայն տվին, վոր պատրաստ լինեն։ Սակայն Միհրանը, փոխանակ սայլը լծելու, կացինը ձեռքին մոտեցավ մի ծառի։

— Ա՜յ մարդ, եղ ինչ ես անում, բա չե՞ս գալիս,—հարցրեց մեկը զարմացած։

— Ես մի պուճուր ծառն ել կարեմ, վոր յեղներիս բեռը թամամի։

— Եղ չեղավ, ե՜, կուշտանաս, համ ել յեղներիդ շատ կը զոռես։

— Բա չե՞ս ուզում ոգնենք,—ասաց յերկրորդը։

— Ձե՜, չե՛, դուք գնացեք, յես ել ես ե, գալիս եմ...

Ընկերները սայլերը լծած՝ քշեցին, դուրս յեկան անտառից։ Միհրանը, սակայն, դեռ փայտի գործով եր զբաղված։ Յերբ ծառը կտրեց, մանրացրեց և սայլի բեռն ավելացրեց, անտառը հետզհետե սավերվեց, սև ամպերը բարձրացան արևմուտքից ու ծանրացան անտառի վրա։ Ոգն այնքան խոնավ դարձավ, վոր ասես կաթկթում եր։ Յեվ Միհրանը շտապեց, վոր անձրևի տակ չընկնի։ Սայլը լծեց ու խարազանը շարժեց ոգում։

Գնալով, յերկինքը մթնեց, մոտիկ ձորերից քուլա-քուլա մառախուղը բարձրացավ, այնպես վոր, թվում եր, թե գիշերային մութն իջավ։ Միհրանը մեծ հույս ուներ իր հաղթանդամ յեղների վրա, վոր յերբեք չեյին դավաճանել իրենց տիրոջը։

Նա անտառից հազիվ եր դուրս յեկել, յերբ հանկարծ աշխարհը լուսավորվեց. մի հրե լեզու զիգզագ տալով անցավ յերկնքով մեկ, և ամպերը ճայթեցին այնպես, վոր ասես յերկինքը պատռվեց։ Յեվ, ահա, թափվեցին խոշոր կաթիլները։ Անձրևը գնալով հորդացավ, ասես կժի բերանից եր թափվում։

Միհրանն այլևս ճանապարհը չեր տեսնում, մյուս կողմից ել՝ խիստ ցեխակալվեց, և նա բարձրացավ սայլի վրա ու հանձնվեց իր փորձված յեղներին։ Խարազանն այլևս չեր գործում, վախենում եր շարժել—չլինի թե յեղները ճանապարհից շեղվեն։ Միայն յերբեմն նրանց զգացնել եր տալիս իր առկայությունը։

139-87
Հանրապետական գրադարան
Գր. Գիրքի հոտեր
Հայ-Դրա ՍՍՀ
Գր. Գ. Մասիկյան

— Քելե, Ծիրան ջան...ուս տուր, Մարալ ջան...— ձայն եր տալիս նա։

Ճանապարհը, սակայն, դժվարացավ, յերբ մոտեցավ իր նախկին այգու ծայրին։ Այդտեղ յեղնեբը շատ դանդաղեցրին իրենց ընթացքը։ Յեվ մի մխաք սկսեց անհանգստացնել Միհրանին։ Նա հիշեց իր այգու շուրջը յեղած պատմությունը և ապա այն դժբախտ դեպքերը, վոր կատարվել եյին ճանապարհին։ Ահա նրան թվաց, թե իր սայլն ել գլորվեց ձորը և մի պահ նրա մարմինը փշաքաղվեց։ Ու նա վախից ձայն տվեց ձորափնյա յեղանը։

— Քելե, Ծիրան ջան, ուս տուր Մարալին...

Նա ճգնում եր ճանապարհը տեսնել, գոնե վայրկենական կայծակի փայլի տակ, բայց ասես դիտմամբ կայծակն ել չեր փայլատակում, և ճանապարհն այնքան մութն եր, վոր վոչ մի կերպ չեր նշմարվում։ Յեզներն ինքնագլուխ քայլում եյին դանդաղ, և Միհրանը հանձնված նրանց՝ մտածում եր ու յերբեմն սարսռում եր մտքերից։

— Դե, ձեզ տեսնեմ, իմ թև ու թիկունք յեզներ, —վախից խրախուսում եր Միհրանը յեզներին։

Հանկարծ յեզները կանգ առան, ինչ արեց-չարեց՝ տեղից չշարժվեցին։ Միհրանը սոխրված ցած իջավ սայլից։ Խոր ցեխ եր, շոշափելով հազիվ դուրս յեկավ սայլի առաջ. շոյեց յեզներին, քիչ հանգստացրեց և ապա նորից խրախուսելով ուղեց քշել։ Սակայն յեզներն անզորությունից այս ու այն կողմ շարժվեցին և չկարողացան սայլը փոսից հանել։

Բո հալալ հախն ե, Ծիկոլանց Միհրան, ինչի՞ չեյիր թողնում, վոր կարգին ճամբա շինեն...—նախատում եր նա ինքն իրեն։ Ի՞նչ աներ, այժմ ով կգար իրեն ոգնելու։ Ընկերներն արդեն վաղուց տեղ հասած կլինեյին, իսկ ինքը... Սայլը թողներ-գնար ոգնության կանչելու, իսկ ինչ կասեյին իր գոված յեզների մասին։ Զեյին ասի, թե՝ մի սայլ փայտ չկարողացան տեղ հասցնել։ Յեվ նա ուզեց իր սեփական ուժով սայլը փոսից հանել։

Անձրևն այլևս առաջվա սաստկությամբ չեր գալիս։ Միհրանը մի անգամ ել շոյեց յեզներին, նորից խրախուսեց, բայց յեզները դարձյալ չկարողացան սայլը փոսից հանել։ Նա բարձրացավ, սկսեց խարազանել ու սպառնալ։ Յեզները վախեցան, ամբողջ ուժերը լարեցին և այնպիսի թափով դուրս բերին սայլը փոսից, վոր այլևս չկարողացան գլուխ պահել, պտավեցին ու... գլորվելով ընկան ներքև...

Մյուս որը գյուղում խոսում եյին այդ դեպքի մասին, և բոլորը հետաքրքրությամբ շտապում եյին դեպի անտառը տանող ճանապարհը ու Ծիկոլանց Միհրանի նախկին այգու մոտ կանգ առնում։ Այդտեղ փուլ եր յեկել ձորափնյա փոքրիկ կամուրջը, իսկ խոր ձորում ընկած եր ջարդված սայլն իր յերկու յեզներով, վոր հսկայական բարձրությունից ընկնելով՝ շունչները փչել եյին արդեն։ Մարդիկ նայում եյին յեզներին և ափսոսանքով գլուխները շարժում։

— Հայ գիդի հա...ինչ յեզներ եյին։

— Ծիկոլանց Միհրանի հախն ե։ Բա վոր ասում եյինք, թե գեղին ճամբա յե պետք։ Եսոր իմ սելը կընկնի, եզուց՝ քոնը, ելոր՝ մեկելինը։ Ենպես վոր ճամբա պետք ե շինենք։

— Հախն եր, թե վոր կոլխոզում չլիներ։

— Հա, բա, կոլխոզի յեզները փչացան...

Իսկ վոմանք նույնիսկ հեգնում էին Միհրանին՝ կրկնելով նրա սիրած խոսքերը.

— Ա՜յ ապա, վորդու պես ծառ է խնամել, վանց կլինի. մարդը վորդուն կմոռթի, վոր Միհրանն իր ծառը կարի...

Միհրանը, սակայն, ձայն չեր հանում, նույնիսկ այն ժամանակ լուռ մնաց, յերբ Սեթը, վոր Միհրանի բանի հարվածով գլխին վերք եր ստացել, նրան դաղելու համար չարախնդաց՝ «հը՜, վոնց ես, խո չեմ ուզի, մեկի գլուխն էլ ճղես»։ Նա լսեց Սեթի խայթիչ խոսքերը և բան չասաց, միայն խեղճ-խեղճ նայեց նրան։ Ապա մոտեցավ այգու ծայրին, կանգնեց ձորափին, նայեց մի խումբ ծառերին, վոր պետք է կտրեյին, հետո հայացքը ձորը գցեց, տեսավ իր ջարդ ու փշուր յեղած սայլն ու յեղները։

* * *

Գերանները փոսերն իջեցրին։ Բրիգադիրն աչքով չափեց ու նշան արեց, թե ինչ ուղղություն պետք է տային։ Հետո սկսեց իր ձեռքով քար լցնել։ Ողակի անդամները հետևեցին նրան։ Արևի պես բարձրացող տրամադրությամբ կատակով ու սրախոսությամբ շարունակեցին գերաններն ամրացնել։

— Մեր դժվարն ես փլվածքը լցնելն է ու են արխը հանելը,—ասաց բրիգադիրը Մանասին։

— Հա,—համաձայնեց Մանասը և անմիջապես ավելացրեց.—ես փլվածքն ենքան չէ, ինչքան են արխը։

— Չէ, յերկուսն էլ դժվար են։ Են էլ արդեն սկսել ենք, Սարգսի ողակն ենտեղ է աշխատում։ Դուք էլ ես գերաններն ամրացրեք, հետը լավ քարեք. ես է գնամ

այգու պոչի հողը բերել տամ-ետեղ, վոր փռեն։

— Գնա շտապեցրու, ես է՝ պրծանք։

Տնկված գերանների շարքից ներս ուրիշ գերաններ էլ շարեցին և սկսեցին լցնել քար ու խիճով։

— Շուտ արեք, տղերք, ես հողը պետք է փլվածքը տանենք,—մոտենալով յերկրորդ ողակին՝ ասաց բրիգադիրը։

— Ես է, ես մի քոքն էլ հանենք,—պատասխանեց Սեթը և ապա իր ընկերներին շտապեցնելու համար ձայնեց.—տղերք ջան, քաշեք, հա՜...

Ծառի կոճղը հողից հանեցին։

— Հայ գիդի Միհրան,—խոսեց յերկրորդը.—ես յոթ ութ ծառի համար քանի՞ զալմաղալի տեղիք ես տվել։

— Էլ ինչ զալմաղալ, տեսա՞ր մարդը կոլխոզում վոնց շուտ խելքի յեկավ։

— Խելքի կգար, բա ինչ։ Եղպես գիտի կոլխոզը, ետեղ «իմն» ու «քոնը» չկա, աշխատիր ընդհանուր մեծ գործի համար։

— Համ էլ մարդն ես ճամբի տղեն իր կաշվի վրա զգաց,—լրացրեց մի ուրիշն իր նախորդի խոսքը։

— Ե՛գ դենը կենա, տղերք, հալա մի Սեթի գլխին նայեք, դեռ ետոր էլ Միհրանի դրած նշանը յերևում է,—կատակելով խոսակցության մեջ խառնվեց մի ուրիշը։

— Հա բա, գլուխս ջարդեց անխիղճը,—ծիծաղելով պատասխանեց Սեթը և հետո հին վրեժ լուծողի տոնով ավելացրեց.— բայց վոչինչ, թող իմանա, վոր նրա բաղը փորողն ելի յես եմ։

Ցեվ ճի՛ տ վոր առավոտը շուտ, յերբ բրիգադիրն իր բրիգադը յերեք ողակի բաժանեց և ամեն մեկին մի

գործ տվեց, Սեթը խնդրեց նրան, վոր իրեն «արխն» անցկացնող ողակից հաներ և նշանակեր այգու ծայրը փորող ողակում։ Բրիգադիրը չհարցրեց Սեթին և վոչ էլ նա ասաց, թե ինչու յեր տեղափոխվում, միայն հենց այնպես հարցեց նրա խնդիրը։ Յեվ այժմ Սեթն արդեն ծառերը կտրած և արմատահան արած՝ այգու ծայրի հողն եր փորում չտեսնված յեռանդով։ Գուցե այդպես չփորեր տարիներ առաջ, յերբ նա մի խումբ մարդկանց վերցրած՝ ուզեց զոռով հենց այդ տեղում աշխատել։

— Փորում ես, համա կաց մի Միհրանը դուրս գա, հեշտ չես պրծնի նրա ձեռքից,—կատակեց նորից այն մեկը։

— Ճիշտ վոր մարդն իր ծառերը վորդու պես եր սիրում։

— Սիրելս վ՞որն ե, ասա՝ պաշտում եր, ելի,—սկսեց նորից նույն կատակ անողը՝—տղերք, յես չեմ տեսել, համա ասում են, իրը թե ամեն գարնան ես մեր Միհրանը ծառերին մոտեցել, հալ ու քեֆ ե հարցրել։ Ծառերն ել հետը խոսելիս են յեղել։ Տեսնողներ կան, վոր ամեն գարնան Միհրանը խոսելիս գրկել համբուրել ե ծառերին և նրանց հետ խելք-խելքի տված՝ պլան ե քաշել, թե ով ինչ պետք ե անի։ Միհրանն ասել ե, թե ձեզ վորդու պես կսիրեմ, ծառերն ել թե՝ քո ուզածի չափ բոլ պտուղ կտանք...

Մի քանիսը ծիծաղեցին։ Նման բաներ շատ եյին պատմում Միհրանի մասին՝ ամեն մեկն իր յերևակայությանը զոռ տալով։ Իրականությունը, սակայն, այն եր, վոր նա շատ լավ եր խնամում ծառերը, ամբողջ որն այգում ծառերի հոգսն եր տանում։

— Տղերք, մի բան ասեմ, ես ֆանի որ ե, Միհրանը չի յերևում, ինչ ե յեղել նրան,— հետաքրքրվեց մեկը։

— Տնաշեն, մարդը յեղների գարդից անկողին և ընկել, դու հալա հարցնում ես։

Պատմում եյին, թե սայլը ձորն ընկնելու դեպքից հետո Միհրանը մի քանի որ դրսում չեր յերևում, իրը թե վշտից հիվանդացել, անկողին եր ընկել։ Ո՛վ գիտի. գուցե վշտից չեր, այլ անձրևի տակ թրջվել-մրսել եր։

Բա հիմի վոնց ե,—հետաքրքրվեց նույն մարդը։

— Կինը պատահեց, ասաց, թե՝ հիմի լավ ե, եգուցվանից գործի կանցնի։

— Հա՛, գործի կանցնի ու ճամբեն ել շփե-շիտակ կտեսնի։

— Դե, տղերք ջան, բերան շարժելու ժամանակ չկա, հենց անենք, վոր իրիկունը պրծնենք,—շտապեցրեց Սեթը։

— Ճիշտ ե ասում տղերք, շտապենք,—ասաց բրիգադիրը,—հիմի հարկավոր ե հողը փլվածքը տանել։ Այ, արդեն գերանները պատրաստ են։ Դե, ձեզ տեսնեմ, տղերք ջան։

Յեվ ահա, սրանք հարվածային կարգով յերեկոյան պետք ե ավարտեին ճանապարհի նորոգումը։ Դա սովորական աշխատանք չեր։ Նախորդ յերեկոյան՝ մյուս որվա աշխատանքների պլանը հայտարարելիս, կոլտնտեսության նախագահ Արշոն մոտեցավ առաջին բրիգադի ղեկավարին և հանդարտ, բայց գործնական տոնով ասաց. «Եգուց կվերցնես քո բրիգադը և կգնաս, ճամբան կշինես. իրիկունը պատրաստ պետք ե լինի, թե չե՝ փայտամթերման պլանը շատ կտուժի, առանց են ել՝ անձրևները խանգարեցին»։ Բրիգադիրը մի փոքր մտահոգության մեջ ընկավ, մտքում չափեց-ձևեց ճանապարհի գործը և խոսք տվեց՝ «Լավ, յերբ վոր եղպես ե, իրիկունը կպրծնեմ»։ Յեվ հիմա արդեն գործը թնդում եր գետափին։ Աշխատանքը բացի հրատապ լինելուց, նաև պատվի և ինքնասիրության գործ եր։

Յեբը բրիգադիրն այդ գործը սահանձնեց մի որում կատարելու, վոմանց կատակ թվաց, վոմանք նույնիսկ բացարձակ ասացին.

— «Զուր է, ջանըմ, ինչ մի որ, հաղիվ յերեք-չորս որում պրծնեն»։

Իսկ վոմանք էլ կատակեցին.

— «Շուտ, քանի Միհրանը չի յերևում»։

Բրիգադիրի խոսքը, սակայն, Արշոյի համար նշանակում էր, թե արդեն գործը ժամանակին կատարված էր, այդքան բարձր էր նրա հեղինակությունն Արշոյի աչքում։

— Քարը քիչ է լցված, Մանաս, պետք է մի քիչ էլ լցնել, վոր ամուր լինի։ Հողն էլ ես կողմը թափեցեք,— ասաց բրիգադիրը։

— Եզուց Միհրանը գործի գալիս ես ճամբեն տեսնի թե չէ, կշլանա,— ասաց Սեթը՝ հողը փլվածքը թափելով։

— Դեռ հալա պրծնենք, հետո նոր շլացնենք։ Վախում եմ քարը պակասի ու գործը հետ ընկնի,— կասկածեց Մանասը։

— Վոր պակասի, հետո։

— Հետո,— բրիգադիրը մի պահ մտահոգվեց,— դե, մի բան կանենք,ելի։

Բրիգադիրի համար դժվար վիճակ ստեղծվեց։ Յեթե, իսկապես քարը պակսեր, նոնրից պետք է բերելին ձորից. պարզ է, վոր գործը բավական հետ կընկներ։ Նա լուռ նայեց արևին։ Մանասը հասկացավ, նրանք յերկուսով նորից գործի անցան և շտապեցրին ընկերներին։

— —

Իրիկվա մշուշը նստել էր, յերբ կոլտնտեսականներից շատերը վերադարձել էին աշխատանքից, վոմանք էլ հանդը տանող ճանապարհով անտառը մտնելով՝ սայլը

բեռնել-տեղացել էին այնտեղ, վոր մյուս որը ծեգին ճանապարհ ընկնեին։ Գրասենյակի առաջ բավական մարդ էր հավաքվել։ Հավաքվածների մեջ էր նաև կոլանտեսության նախագահը։ Նա սպասում էր առաջին բրիգադին, վորը դեռ չէր վերադարձել։

— Ա՜խր, չպետք է ուշանային,— ասում էր Արշոն։

— Յերևում է՝ չեն պրծել։

— Դա մի որվա գործ չե, վոնց պրծնելին։

— Ասի, չե՞, յերեք-չորս որ է պետք։

— Չի կարող պրծած չլինեն,— պնդում էր նախագահը։

Հանկարծ մի վոտնաձայն հասավ։

Մոտեցողը Միհրանն էր։

— Պահ, Միհրան, եղ դու յես, քեֆդ-հալդ...խո լավ ես,— հարցրեց Արշոն։

— Լավ կլինի, բա։ Եզուցվանից փայտը նոր ճամբով ենք կրելու, համա բաղիդ պոչը գնաց։

— Բաղս էլ կոլխոզինն է, յես էլ։

Միհրանի այս խոսքերն ընդհանուր ուրախություն առաջացրին։ Նրան շրջապատեցին և սկսեցին կատակներ անել։ Հեռվից ինչ-վոր խոսակցության ձայներ հասան։

— Տղերքն են, հա։

Մոտեցողները նրանք էին։ Նախագահ Արշոն յերեխայի պես վեր ցատկեց։

— Տղերք ջան, գործը վոնց է։

— Գործը շատ լավ է, համա...

— Համա ինչ։

— Հեչ, քիչ անփորձություն արինք։ Քարը քիչ էլինք բերել, պակասեց։ Նորից բերինք ու գործն ուշացավ, թե չե...

— Խո շինեցիք։

—Մի ճամբա յենք շինել Արշո, մի ճամբա, վոր տեսնի, Միհրանն էլ հավանի,—ասաց բրիգադիրը։

— Միհրանն արդեն հավան է,—խոսեց իր անունից ինքը՝ Միհրանը։

Ուրախությունն ընդհանուր էր։

«ՍԱՏԱՆԻ ՀՈՂԸ»

— Ցեռ «Սատանի հողն» եմ գնում, գործը հետ է մնում...—ասաց կոլտնտեսության նախագահը վարչության անդամներից մեկին.—մինչև իմ գալը լավ նայիր գործին։

Ցեվ իսկույն թռավ ձիու վրա ու մեկնեց։

Կոլտնտեսությունն այս տարի ցանքի տարածությունը մեծացնում էր։

Հովտում, գետափին բավական տարածություն էր ընկած՝ խոպան, անմշակ։ Ցեվ վոչ վոք չէր մոտենում այդ հողին։

— Սատանի հողն է,—ասում էին գյուղացիները։

Իսկ ավելի հասակավորներն իրենց աչքով տեսածն էին պատմում, թե ինչպես մի տարի Զիլախենց Մաքին վեր է կենում ու այդ հողը մշակում։ Ցերը ցանում-վերջացնում է, շատ ժամանակ չանցած՝ տարերի ճայունը հալչում է, գետը կատաղում ու այլևս չի ճանաչում իր ափերը։ վարարելով ծածկում է ամբողջ ցանքը։

— Եսպես վերջացավ Զիլախենց Մաքու ցանքը... Նրա թափած քրտինքը սատանեն տարավ, ենդուր վոր սատանի հողն է, չի լինի վրեն աշխատել։ Մեր պապերը խելոք են եղել, վոր հեչ չեն մոտեցել եդ հո-

ղին,—ծերունիներն այս խոսքերով էին վերջացնում իրենց պատմությունը։

Սակայն կոլտնտեսության նախագահը մի կողմ թողեց այդ պատմությունը։ Մի որ նա այդ խնդրով հատկապես զուրս յեկավ գյուղից, իջավ գետափ և բավական յերկար շրջեց։ Դիտեց հովիտը, դիտեց գետը։

— Սատանի հողն է, աչ Արշո, միտդ չի՞ Զիլախենց Մաքու պատմությունը։

— Աշխատանքը զուր տեղը ջուրը միք թափի։

— Վրեն թափած աշխատանքը սատանեն կտանի։

Ասում էին ծերունիները կոլտնտեսության նախագահին։ Իսկ վոմանք նույնիսկ չարախնդում էին։ Մի ուրիշն արդարացնում եր այդ գործը՝ «Յերբ-վոր արիը կա, ավելորդ ջուրն իր կողմը կքաշի»։ Մի ուրիշը թե՝ «Մեկ է, արիը չէ, ինչ էլ վոր լինի, գլուխ չի գա»։

— Շատ անգամ այդ խոսքերն Արշոյի ականջն էին հասնում, և նա ասում եր. «Հետևից խոսելը պարապ մարդու գործն է։ Բարեխիղճ աշխատողը գործը թողած լեզվին զոռ չի տա»։ Իսկ յերբ իրեն դիմող ծերուններին չեր կարողանում համոզել, կարճ եր կտրում՝ «Ճտերն աչունքը կհաշվեն», կամ թե՝ «մեկ էլ հունձ անելիս կխոսեմ»։

Նա դիմեց համապատասխան մարդկանց։ Նրանք հատուկ հետաքրքրություն կատարելուց հետո յեկան այն յեզրակացության, վոր գետը վարարման դեպքում ցանքը ջրով կծածկի։ Ցեվ կոլտնտեսության նախագահը նրանց խորհրդով ձեռնարկեց աշխատանքի։ Ցանքը հեղեղումից ապահովելու համար նախքան գարնանացանը, գետը հատուկ ջրանցքով միացրեց մոտակա ձորի հետ, վոր ավելորդ ջուրը ձորը թափվի։

Իսկ այժմ արդեն բրիգադներից մեկը վարում եր «Սատանի հողը»։ Աշխատանքը, սակայն, դանդաղ եր ընթանում։ Ջնայած հողը հովտում եր գտնվում, բայց խոպան լինելով՝ ուժեղ դիմադրություն եր ցույց տալիս գութանավորներին։ Ծանր եր աշխատանքը։

Արշոն կամքի տեր մարդ եր, նա յերբ իմացավ, վոր «Սատանի հողում» աշխատող բրիգադը հետ ենում, անմիջապես մեկնեց այնտեղ։

Նա ինքն էլ չնկատեց, թե ինչպես դուրս յեկավ գյուղից։ Զգաց, վոր ձին արդեն հովտումն է քայլում։ Նայեց «Սատանի հողին», վորի միայն մի մասն եր սևին տալիս։ Ձիու գլուխը թեքեց այդ կողմը և մտրակեց։

Դեռևս հեռվից նա նկատեց գութանավորներին, վերոնք շարժվում էին ձիերի հետևից, սև գծի վրա, այնքան դանդաղ, վոր կարծես կրիաներ լինեին. վորքան մոտենում եր, այնքան պատկերը փոխվում եր՝ շարժումն աշխուժանում։

Ահա նույնիսկ վոմանց ճանաչեց։ Նրանք սրտանց վար էին անում, ձիերը յեռանդով առաջ էին շարժվում, իրենք էլ՝ հետևից։

Նախագահը ձին թեքեց Հաբեթի կողմը։ Մոտեցավ։ Ժպտալով նայեց այդ յեռանդուն յերիտասարդին։

— Բարի՛ աչողում, Հաբեթ, վոնց են գործերը։

— Գալդ բարի, Արշո։ Ա՜յ, տեսնում ես, խոփը քսան սանտիմ խորության եմ բռնել։

— Հա, բա, որենքն եդ է...Դիտես ընկեր Ստալինն ինչ է ասել հարվածայինների մասին...

Ցերը Արշոն հանդիպում եր աշխատողներին, նա անզուսպ յեռանդով խլում եր նրանց ձեռքից ինչ վոր պատահեր՝ բահ, քլունգ, մաճ, թիակ և ինքն եր շա-

բունակում։ Ասում էին նրա մասին, թե՝ «գործ տեսնելիս ձեռքերը քոր էին գալիս»։ Յեվ այժմ էլ անհամբերություններից մաճը խլեց Հաբեթի ձեռքից ու սկսեց ինքը տանել։ Վերադարձնելիս, իր սովորության նման ասաց.

— Հա՜-բա, ձևը գիտես...

— Յես ձևը գիտեմ, համա... մարդիկ կան, վոր չգիտեն...

— Եդ վոնց...

— Դե, մարդ էլ կա, մարդ էլ։ Մարդ կա՝ ազնիվ աշխատող է և առանց բրիգադիրի էլ իր գործը գիտի։ Մարդ էլ կա, վորին միշտ հարկավոր է սանձը քաշել։ Բրիգադիրը չի կարողանում գրանց իր ձեռքը հավաքել...ենդուր էլ գործը դանդաղ է գնում...

— Հա՜-բա...

Արշոն սկսեց շրջել բոլոր գութանավորների մոտ։ Տեսավ կատարած աշխատանքը և հանդիմանեց.

— Ե՜յ ընկեր կոլխոզնիկ, գործի ձևն եդ չի, Ե... Գիտես, ընկեր Ստալինն ինչ է ասել լոզունգների մասին... հա՜-բա, բա, գիտեմ, վոր գիտես...Պետք է քեզ մի քիչ թափ տան. բա վոնց, ամենքս էլ պետք է լավ աշխատենք։

Նախագահը ձի նստեց ու շտապեց առաջ։ Յերբ մոտեցավ, Սեթոն չնկատեց նրան և հարվածում էր ձիերին։ Իսկ ձիերը վախից ակոսը շեղում էին՝ այս ու այն կողմ ընկնում։ Սեթոն իրեն կորցրել էր. Արշոն գոռաց.

— Ե՜յ, ընկեր կոլոզնիկ, գործի ձևն եդ չի...

Սեթոն կանգ առավ, շփոթվեց հանցանքի մեջ բռնված մի պես։

— Ձեն քաշում...Ա՜խր, տանջվեցի...գործից էլ հեռ եմ ընկնում...

Արշոն մոտեցավ ձիերին, գլուխները շոյեց և քիչ հանգստացնելուց հետո քշեց։ Ձիերն ասես հասկացան նմուշ վարողին ու կանոնավոր կերպով առաջ շարժվեցին։ «Ձեն քաշում»...—ծաղրանքով կրկնեց Արշոն Սեթոյի խոսքերը։

— Ի՞նչ ես անմեղ տեղը ծաղր ու ծանակ անում, դե չեյին քաշում, ելի...—բողոքեց Սեթոն։

— Հա՜-բա, անմեղ տեղը...Լավ ես լեզվիդ զոռ տալիս, կեսի չափ վոր կոնեիդ զոռ տաս կարգին բան դուրս կգա։ Ձևն եդ չի, Ե։ Պետք է ձիերին աչքիդ լույսի պես նայես։

— Դե վոր չեյին քաշում...—նորից փորձեց արդարանալ Սեթոն։

Արևը վաղուց արդեն մայր էր մտել. շրջապատը գորշացավ։ Գետի ափին, փոքրիկ թմբի մոտ, վառվում էր կրակը՝ անվերջ ճարճատյունով։ Կրակից վոչ հեռու, հարթության վրա մի ծածկոց կար ձիերի համար։ Իսկ ծածկոցին մոտիկ բավական մեծ ջրան։ Այդ չորրորդ բրիգադի վրանն էր։

Կոլտնտեսականները գործը վերջացրած՝ հավաքվել էին կրակի շուրջը։ Տաքությունը դուրեկան գբրդիոով շփվում էր գիշերային զովությունից սարսռացող, քրտինքից ցամաքած մարմիններին։ Մեկ-մեկ ծուլորեն խոսքեր էին փոխանակում։

Ջիապանն արդեն ձիերին էր խնամում։ Իսկ նախագահ Արշոն նստած էր բրիգադիրի մոտ, կոլտնտեսականներից քիչ հեռու, և հարց ու փորձ էր անում։ Յերբ տեսավ, վոր կոլտնտեսականները հավաքվեցին, վեր կացավ տեղից ու հայտարարեց։

— Մի թեթև ժողովի պես բան կա։—Նա մի պահ

Гос. Публичная Б-ка

դիտեց ժողովականներին և ինչ-վոր մեկին վորոնելով՝ հարցրեց.—Սեթոն եստեղ չի՞։

— Եստեղ եմ,—լսվեց մի անկյունից։

— Իսկ Մոսին։

— Ցես ել եմ եստեղ։

— Շատ լավ է, վոր եստեղ եք։ Բայց դուք գիտե՞ք, վոր ձեզ ետենց չի։ Գիտե՞ք, ընկեր Ստալինը ինչ է ասել...հա-բա...ասել է՝ ով ինչքան աշխոր անի, ենքան ստանա...

— Շատ լավ է ասել,—միաբերան ձայնեց ամբողջ բրիգադը։

— Ցես գիտեմ, վոր շատ լավ է ասել։ Բայց ուզում եմ իմանալ, Սեթոն ու Մոսին ել գիտե՞ն եդ թե չե... Հա-բա, են անգամ ցորենի ավանս եյինք բաժանում։ Սեթոն թե՝ Աբշո Հաբեթին ու Մուշեղին վեց-վեց փութ տվեցիր, ինձ ինչու՞ յերկու փութ ես տալիս։ Ու նեղացավ՝ «փեշքեշ հա չի՞, ավանս է, հետո ինձնից դուրս կգաք»։ Ասում եմ՝ վոչ փեշքեշ է, վոչ ել չորանի հաշիվ.—կոլխոզ է, ինչ վոր բաժանում ենք, բոլորն աշխորների վրա յեն. ով իրեն հասանելիքը քեզ կտա... Ամենքիդ ել հայտնի յա, վոր՝ ով ինչքան աշխատի, ենքան ել կստանա։ Իսկ շատ ստացողը, այսինքն՝ ազնիվ աշխատողը, մեզ մոտ փառք ու պատիվ ել ունի. եդպես չի՞, ընկերներ։

— Եդպես է։

— Հա-բա, եդպես է...եսոր ականջիս դիպչում է, թե՝ չորրորդ բրիգադը գործից յետ է մնում։ Ցեկա-տեսնեմ՝ առաջավոր ել կա, հետ մնացող ել։ Ասենք՝ Հաբեթն ել է մաճ բռնում, Սեթոն ել։ Հաբեթը վոր ակոսն է քաշում, յերևում է, վոր աղնիվ աշխատող է. Սեթոն, Մոսին ուրիշ են. նրանք լավ չեն աշխատում...

— Բաս մենք պարապ նստած ենք. ելի։

— Հա, յես ել եդտեղ եմ գալիս։ Թող բոլոր ընկերներն իմանան, վոր դուք պարապ նստած չեք, բայց կարգին գործ ել չեք անում։

— Դեռ լսեցեք մինչև վերջը, ընկերներ։ Եսոր բոլորի մոտ մեկ-մեկ ման յեկա։ Մոտեցա Մոսուն։ Եդ ժամանակ եր, վոր հեռվից նկատեցի, մեկը ձիերին ծեծելով սպանեց։ Մոտեցի՝ Սեթոն կլինի. ձին թոցրի, տեսնեմ, ճիշտ վոր նա յե։ Ասի՝ ընկեր ջան, եդ ինչ ես առնում. թե՝ չեն քաշում, ինչ անեմ...

— Բա հետո քաշեցի՞ն վո՞ր...—լսվեցին մի քանի ձայներ։

— Վո՞նց չե...—Ու մի նախատական պատուգա տալով՝ շարունակեց.—մոտեցա, շոյեցի ձիերին, հանգըստացնելուց հետո Սեթոյի աչքի առաջ քշեցի. ենպես գնացին, վոնց վոր ես մեր գետի ջուրը։ Մտքներիդ ե, չե՞, ընկերներ, մի անգամ սրանք նեղացել եյին, վոր իբր թե իրենք ուրիշներից շատ են աշխատում, բայց հաշվի մեջ ամենքից քիչ է գրվում։ Սեթոն, Մոսին և սրանց նմանները, վորոնց յես լոգրի կանդիդատ եյի համարում, հետևիցս խոսել եյին, թե՝ իրենք հարվածային դառնալ են ուզում, յես չեմ թողնում։

Բոլորը ծիծաղեցին։

— Հա-բա...ընկերներ, դուք՝ բոլորդ ել լավ տեսաք, թե վոնց սրանք հանձն առած գործից փախան։

— Խոսքն արտը տանող փուլ յեկած ճանապարհը նորոգելու մասին եր։

— Հետո հարվածային ընկերներին ել տեսանք,—շարունակեց նա,—թե վոնց ժամանակին կատարեցին

— Բաս մենք պարապ նստած ենք. ելի։

— Հա, յես ել եդտեղ եմ գալիս։ Թող բոլոր ընկերներն իմանան, վոր դուք պարապ նստած չեք, բայց կարգին գործ ել չեք անում։

— Դեռ լսեցեք մինչև վերջը, ընկերներ։ Եսոր բոլորի մոտ մեկ-մեկ ման յեկա։ Մոտեցա Մոսուն։ Եդ ժամանակ եր, վոր հեռվից նկատեցի, մեկը ձիերին ծեծելով սպանեց։ Մոտեցի՝ Սեթոն կլինի. ձին թոցրի, տեսնեմ, ճիշտ վոր նա յե։ Ասի՝ ընկեր ջան, եդ ինչ ես առնում. թե՝ չեն քաշում, ինչ անեմ...

— Բա հետո քաշեցի՞ն վո՞ր...—լսվեցին մի քանի ձայներ։

— Վո՞նց չե...—Ու մի նախատական պատուգա տալով՝ շարունակեց.—մոտեցա, շոյեցի ձիերին, հանգըստացնելուց հետո Սեթոյի աչքի առաջ քշեցի. ենպես գնացին, վոնց վոր ես մեր գետի ջուրը։ Մտքներիդ ե, չե՞, ընկերներ, մի անգամ սրանք նեղացել եյին, վոր իբր թե իրենք ուրիշներից շատ են աշխատում, բայց հաշվի մեջ ամենքից քիչ է գրվում։ Սեթոն, Մոսին և սրանց նմանները, վորոնց յես լոգրի կանդիդատ եյի համարում, հետևիցս խոսել եյին, թե՝ իրենք հարվածային դառնալ են ուզում, յես չեմ թողնում։

Բոլորը ծիծաղեցին։

— Հա-բա...ընկերներ, դուք՝ բոլորդ ել լավ տեսաք, թե վոնց սրանք հանձն առած գործից փախան։

— Խոսքն արտը տանող փուլ յեկած ճանապարհը նորոգելու մասին եր։

— Հետո հարվածային ընկերներին ել տեսանք,—շարունակեց նա,—թե վոնց ժամանակին կատարեցին

եղ գործը, վորից սրանք խայտառակ կերպով փախան։ Հիմի էլ եսեղ...

— Հո էլի չեն փախչում,—սրախոսեց մեկը։

— Չե, չեն փախչում։ Բայց դրանից էլ վատ բան են անում, ընկերներ։ Աշխատելու ձևն էլ չի...—Նա մի փոքր կանգ առավ և մտածելուց հետո շարունակեց.—ընկերներ, բոլորիդ էլ հայտնի է, վոր հին կյանքը մեզ շատ ճնշից։ Շատերս տուն տեղ թողինք, սար ու չոլեր ընկանք, ինչ ե թե՝ մեր գլխի տերը լինենք։ Հիմի, յերբ արդեն մեր գլխի տերն ենք, պետք ե մենք մեզ խաբենք. Ինչու՞ յետ մնանք մեր գործից, մեր յերկրի ու իշխանության գործից...

Արշոն բորբոքվեց։

— Ի՞նչ ե նշանակում Սեթոյի աշխատանքը,—հուզված ձայնով շարունակեց նախագահը.—ծեծել ձիերին ու նորման չկատարել, դա արդեն թագնված թշնամություն ե մեզ ու մեր կոլխոզի համար։ Բրիգադիրն էլ մի յերկու անգամ նկատողություն ե արել, բայց եղ էլ գործին չի ոգնել։

Յեվ բրիգադի քսանհինգ անդամներից տասնինների մատները բարձրացան, յերբ նախագահը քվեարկեց Սեթոյին հեռացնելու հարցը։

— Վեր կաց, գնա,—վճռականորեն ասաց Արշոն.—քեզ մի շաբաթ ժամանակ, թե վոր ուղղվեցիր, լավ, նորից դիմիր...—Յեվ ապա դարձավ մյուս կոլտնտեսականներին։

— Հա՜-բա...ամենքս էլ պարտավոր ենք լավ աշխատելու. բա վո՞նց...Եսոր աշխատանքը նայելիս՝ Մոսու հերկն էլ դուր չեկավ ինձ։ Ասին իսկական խորքից չեր տանում. ասի՝ եղ ի՞նչ ես անում, ընկեր. թե՝ ձիերը խորը չեն տանում...

— Դե, չեն տանում, էլի,—լսվեց մի վորոշակի ձայն։

— Վո՞նց թե չեն տանում։

— Ցես իմ, չեն տանում։

—Դե, յես եմ վերցնում քո ձիերը, Մոսի։

— Բա յե՞ս։

— Սեթոյի ձիերը վերցրու...խո լավ են։

— Հա, դրանք ուրիշ են...

— Լավ, վերցրու Մոսու ձիերը, հաջող վար արա, հա...Ցես էլ պարապ չեմ մնա, քո ձիերով վար կանեմ և որինակով ցույց կտամ, վոր ձիերը մեղավոր չեն... ի՞նչ ե, համաձայն չե՞ս։

— Վերցրու,—համաձայնեց վատահ ձայնով Մոսին և քիչ մտածելուց հետո ասաց.—բայց յես ականջս կկըտրեմ, վոր Սատանի հողում սրը հեկտարից ավելի հերկես։

— Հա՜-բա, տեսնենք, իրիկունն ինչ ես ասելու։

Աղջամուղջը դեռևս նստած եր հովտում, յերբ չորրորդ բրիգադի կոլտնտեսականները մեկ-մեկ վեր կացան տեղներից։ Ձիապանն արդեն վոտի վրա յեր, ձիերի մոտ, ստուգելով նրանց, վոր պատրաստ դուրս գային վարի։

Մոսին վեր կացավ տեղից և շտապեց դեսուդ, լվացվելու։ Նա ճանապարհին հանդիպեց նախագահին և գլուխը կախեց՝ չտեսնելու համար։

— Եղ ի՞նչ ե, ընկեր, քիթդ քաշ ես արել, թե՞ քեզ դժվար տեղն եմ լծել. հա՜-բա, շտապիր, գործից հետ ես մնում...—դիմեց Արշոն նրան։

— Ա՛խր, Սատանի հողն է...Դե, վեճեր, ասենք... Եղքան հնարավոր չէ...խայտառակ կլինենք...—մեղմացավ Մոսին։

— Ե՞յ, ընկեր կոլխոզնիկ, լավ չես խոսում, եղ թշնամու սրտով ես անում...իրիկունը տեսնենք...

— Լավ, տեսնենք,—փոքր հետո անվստահ ասաց Մոսին։

Արևը դեռ գլուխը չեր հանել դիմացի լեռներից, յերբ հովտում լսվեցին աշխատանքի կանչերն ու անիվների միալար ճռճռոցը։ Ձիերն ընթանում եյին հանգիստ և միաժամանակ աշխույժով։

Արշոն բռնել եր մահը, յեռանդը խաղում եր նրա բազուկներում։ Սիրով հետևում եր ձիերին՝ մեկ-մեկ խրախուսելով նրանց։ Հողի սև շերտերը ծալվում եյին իրար հետևից, ամեն մի ծալվող շերտը նոր ուրախություն եր տալիս նրան։

— Քելեք, թառլաններ, քելեք,—ձայն տվեց Արշոն ձիերին։

Ձիերը քայլում եյին արագ, Արշոն մահը ձեռքին հետևում եր նրանց և նորից ծալվում եյին արգավանդ հողի շերտերը։ Վարում եր նա և նրա մտքերը դառնում եյին հողի շերտերի պես յերկար ու ձիգ։

Նախաճաշին Արշոն գութանը հերկի ուղիղ ծայրին հասցնելով՝ ձիերին հանգիստ տվեց։ Ճակատի քրտինքը սրբեց, նայեց ծայրե ծայր իր հերկին, ապա մի պահ գլուխը վեր բարձրացրեց ու հայացքն ուղղեց արևին։ Ցերը տեսավ, վոր արևն իր կես ճանապարհն անցել է, նորից նայեց հերկին և այդ իրեն շատ քիչ թվաց։ Կասկածը պատեց նրա սիրտը։ Նա մի պահ մտածեց,

վոր նորման չի կատարելու և Մոսին պիտի չարախանդի։ Քրտինքը նորից ճակատը պատեց։

— Չէ, պետք է կատարել, չեմ թողնի...—ասաց ինքն իրեն նախագահը։

Իրիկնացավ. վարը դադարեցրին և կոլտնտեսականները յեկան-հավաքվեցին ոթևանում, Մոսին այնտեղ եր, բայց Արշոն դեռ չեր վերադարձել։

— Նա պետք եր վոր չուշանար։

— Հալբաթ նորման չի պրծել։

— Անկասելի բան է, վոր պրծած չլինի։

Ասողը Հաբեթն եր։ Նա փորձով դիտեր և մեծ կարծիք ուներ Արշոյի մասին։ Այդ կարծիքին եյին նաև շատերը։ Արշոն պետք է վոր նորման կատարած լիներ։ Այնուամենայնիվ, միակ յենթադրությունն այն եր, վոր՝ «դեռ չի վերջացրել»։

— Եղ էլ քո Արշո ամին. պրծավ,—հեգնեց նորման թերակատարողներից մեկը։

Նույն պահին, ինչ-վոր վոտնաձայն հասավ։ Արշոն դանդաղ, հոգնած քայլերով մտավ ներս։ Ոթևանում Մոսին դեմ յելավ նրան և կիսավստահ ձայնով հարցրեց.

— Հը՞, վարեցի՞ր։

— Ինչ խոսք, վարեցի,—հանգիստ պատասխանեց նախագահը։

— Ինչքա՞ն վարեցիր։

— Ինչքան ես կարծում, վոր վարած լինեմ։

— Ցես իմ, ինչքան ես վարել...մի հեկտար կա՞։

— Չէ։

— Բա ինչքա՞ն։

— Նորմայից հինգ շերտ ավելի յեմ վարել։

— Մի հեկտար ու հինգ շերտ։

— Հա՞-բա, մի հեկտար ու հինգ շերտ։ Եգուց ավելի շատ եմ ուզում վարել,—պատասխանեց նախագահը։

Մոսին գլուխն իջեցրեց և մի պահ մտածելուց հետո շարժվեց դեպի վարելատեղը։ «Ցերեկի գնաց իմ հերկը ստուգելու»,—մտածեց Արշոն։

Մութն արդեն բավական ծանրացել եր, յերբ Մոսին գլուխը կախ, անորոշ քայլերով յեկավ ու նստեց կոլտնտեսականներից հեռու, լուռ ու մտածկոտ։ Արշոն զգաց նրա տխրության պատճառը։

— Եդ ինչ է, ընկեր կոլխոզնիկ, քեթդ քաշ ես արել, վախում ես, թե ականջդ կտրեն,—հարցրեց նա։

— Քեֆս տեղը չի.—կեղծեց Մոսին։

— Հա, բա, քեֆդ տեղը չի։ Ընկեր ջան, եդ ինձ համար լույսի պես պարզ է...Տեսար հերկս չե՞։

— Տեսա...

— Ուրեմն կարելի յե վարել չե՞։

— Դե՛, վարել ես, ելի։

— Հա, բա, աշխատելու ձևն եդ է։ Վոր ասի՝ իրիկունը տեսնենք։ Տեսնում ես՝ ձին մեղավոր չի, մեղավորը դու յես, վոր կռներիդ զոռ չես տալիս։ Հայտնի յե, թե չե...Պետք է քեզ մի քիչ թափ տաս...Հա, բա, ընկեր Ստալինն է ասել...Գիտեմ, վոր գիտես...

Մոսին նստել եր հանցավորի պես գլուխը կախ։ Նա ինքն եր իրեն պախարակում, ամոթից ու բարկությունից մինչև ականջները կարմրել եր...«Ձե՛, պետք է լավ աշխատել»,—վորոշեց նա յերկար ու ծանր մտքերից հետո։

Արշոն մինչև վերջը մնաց չորրորդ բրիգադում։

Ինչպես գարնան արևը ժպտում է արտերին ու իր ջերմ շնչով հաղարավոր ծիլեր դուրս քաշում հողից՝ կանաչ ծով կապելով անսահման արտերին, այնպես էլ Արշոն շունչ տվեց այդ բրիգադին։ Ցեռանդն ու կորովը ծովի պես հորձանք տվեցին բոլորի բազուկներում։ Իրիկունն առանց նորման կատարելու՝ ոթևան դալն ամոթանք եր բոլորի համար։ Նրա ճառագայթի պես թափանցող հայացքին չեյին դիմանում ծուլերն ու փնթիները, վորոնց վերաբերմամբ անխնա յեր, քըրքրում եր ամեն հանդիպելիս, թեկուզ որը տաս անգամ հանդիպեր.—«Ե՛յ, ընկեր կոլխոզնիկ, աշխատելու ձևն եդ չի...

Վերջին որը, ժամկետից մի որ առաջ, իրիկվա մեղմ հովի տակ, Արշոն հայտնեց ոթևանի մոտ հավաքված կոլտնտեսականներին.

— Ընկեր կոլխոզնիկներ, ձեզ՝ բոլորիդ էլ հայտնի յե, թե ասոր ինչպիսի մեծ որ է. «Սատանի հողն» արդեն արտ ենք դարձել...Ասել ենք ու կատարել։ Գիտեք, ընկեր Ստալինն ինչ է ասել ցանքի համար ..հա՞-բա, ընկերներ, գիտեմ, վոր գիտեք...Պետք է մեծացնենք ցանքերը...Մ՛յ, կատարեցինք մեր յերկրի ու իշխանության կամքը, նրա հաստատ խոսքը։ Մեր գործի համար բոլորս էլ պարտավոր ենք լավ աշխատել, բայց դեռ ելի կային հատ ու կենտ ընկերներ, վոր գործից հետ եյին մնում, ա՛յ Մոսին, Քրիստը, Ստեփանը. թե վոր սրանք կռներին զոռ չտային, Սեթոյի համբեն կըբռնեյին...Հա՞-բա, յերեկ Սեթոն յեկավ, թե՝ ախպեր, սխալ արի, նորից ընդունեք, կարգին գործ կանեմ։ Ասի՝ գնա, նորից դիմում տուր։

Յերբ Արշոն խոսքը վերջացրեց, վերջալույսը դժգունեց ու մարեց, մութը կամաց-կամաց բարձրացավ։ Սակայն սրտերը զարկում էին խնդությամբ և նրանց ներսում վառվում էր արշալույսը։

Մի քանի օրից հետո, յերբ շրջանային թերթի բրիգադը լավագույն հարվածայիններին լուսանկարեց, Արշոն սկզբում համառում էր, չէր նկարվում...

ԶԻԿՈՐԸ

1.

Նրա իսկական անունը մոռացվել էր, մնացել էր «Զիկոր» մականունը։ Միշտ թռվռան ու անհանգիստ էր Զիկորը, միշտ պատրաստ կոլտնտեսական պարտականությունները կատարելու։ Բոլորը գիտեին, որ նա վորբ էր և մի որ կոլտնտեսություն չեկավ ինչ-վոր տեղից։ Բայց թե վորտեղից՝ ինքն էլ չգիտեր։

— Արա, Զիկոր, չուշանաս...

— Զիկոր, մի ամսագիր պակասեց...

— Զիկոր, թուղթ չկա, պետք է բերես...

Ցեվ նա վազ էր տալիս։

Զիկորն, այսպիսով, կոլտնտեսականների համար կապավոր դարձավ, որվա թերթերը տեղափոխում, աշխատանքի վայրն էր հասցնում՝ ընդմիջումին զբաղվելու։

Հոլի պես էր դառնում Զիկորը։ Կոլեկտիվ աշխատանքը հիացնում էր նրան։ Ցերբ որվա թերթերը թևի տակ դրած *) դաշտ էր տանում, — հպարտորեն կանգնում էր հանգրվանում, խոհարարի մոտ։ Բարձրանում էր պճեղների վրա և նշմարում ճաշի համար դեպի հան-

*) Զիկոր—վր. նշ՝. հոլ։

Գերվանը շարժվող կոլտնտեսականներին։ Հետո հիացած սկսում եր պատմել, թե թերթերն ինչպես ստացավ փոստից։

Ամեն անգամ հաջող կատարած գործը յեռանդով եր լցնում նրան։

Դեռ արևը չծագած, Զիկորն արդեն վոտի վրա յեր։ Նա սիրում եր շուտ վեր կենալ, անցնել պահեստի մոտով, գնալ ձիապանի մոտ, ոգնել սրան-նրան...

Մի որ եկ այդպես շուտ վեր կացավ։ Ցեղանակը պարզ եր, արևը դեռ չեր բարձրացել։ Շտապեց ձիապանի մոտ։ Զարմացավ յերբ ճանապարհին նկատեց պահեստից բարձրացող ծխի պես ինչ-վոր բան։ Պահեստի դուռը փակ եր։ Զիկորը շտապեց պահեստապետի մոտ։

Ցերբ պահեստապետը դուռը բացեց, ծուխը քուլա-քուլա դուրս յեկավ։ Ներսն ամբողջովին ծխով եր լցված։ Պահեստապետը գունաթափ յեղավ, ինչպես մոխիր։

— Շո՛ւտ, թիակներ ու ջուր,—գոռաց Զիկորը և ինքն առաջինը նետվեց պահեստը։

Այնտեղ, դռան մոտ, մի թիակ նկատեց, ձեռքն առավ և սկսեց թիակով մի կողմ թափել, ծխացող մթերքներն ու սախտակյա իրերը։ Սիրտը թպրտում եր։ Ինչ եր կատարվում իր հետ՝ նա չեր հասկանում։ Միայն զգում եր, վոր այրվող շոգը խեղդելու չափ նեղում և իրեն։ Գիտեր, վոր այրվում եր պահեստը և պետք եր այն փրկել։

Վրա հասան կոլտնտեսականները թիակներով, ջուր բերին և ոգակեցին հրդեհը։ Սկսվեց կատաղի կռիվը։ Շուտով կրակը հանգցրին։

Դուրսը հավաքվել եյին մեծ ու փոքր, կին ու յերեխա։ Ցեվ բոլորի համար անսպասելի յեղավ, յերբ յերկու կոլտնտեսական Զիկորին դուրս բերին։ քրտնաթաթախ, մրոտ ու նվաղած։ Զախ ձեռքն այրվել եր հրդեհից։ Իսկույն ջուր շաղ տվին վրան, մաքրեցին և ուշքի բերին։

Սրանից հետո Զիկորն ավելի սիրելի դարձավ։

2.

Սիմֆինդի փարթամ արտերն այլևս առաջվա պես բարեբեր չեյին։ Հողն ավելի նպաստավոր եր այլ մշակույթների համար։ Գյուղատնտեսը յեռանդով կազմակերպեց թեյի գործը։ Հիմնեց թեյագործական խմբակ, վորին միացավ նաև՝ Զիկորը։

Նա ուշի-ուշով լսում եր գյուղատնտեսի խորհուրդները։ Առաջին իսկ որից թեյի գործը դուր յեկավ նրան։ Ցեվ Զիկորը վորոշեց, ինչ գնով եկ լինի՝ տիրապետել թեյի մշակույթին...

Ցեռանդուն ու միշտ շարժուն Զիկորն ավելի մեծ յեռանդով ու կենդանությամբ լցվեց։

Քանի վոր կապված եր որվա թերթերի հետ, ուրիշ միջոց գտավ։ Դեռ արևը չծագած, առաջինը շտապում եր թեյի տնկարանները։ Նայում եր կանաչ թավշյա գորգի պես փռված տունկերին, մոտիկից դիտում եր փայլուն սաղարթները և իր դիտողություններն ամրացնում եր գլխում։ Ցերբեմն տերևները վաղորդյան հովից մեղմ շարժվում եյին, և Զիկորին թվում եր, թե տունկերը լեզու եյին առնում ու խոսում հետը։

Զիկորը յերեխայի պես ուրախանում եր, մերթ մեկին եր նայում, մերթ մյուսին։

«Մեր թեյը ...մեր թեյը»...մտածում էր նա ու սիրով լցվում։

Նա տնկարանից շտապում էր թերթի։ Ցեվ միշտ ժամանակին կարողանում էր հասնել։ Ցերբեք հետ չէր ընկնի գործնական պարապմունքներից, յերբ գյուղատնտեսը տունկերի վրա կոլտնտեսականներին ցուցմունքներ էր տալիս։ Իսկ յերեկոյան, կլանված լսում էր մասնագետի խորհուրդները...

Շուտով Զիկորը գյուղատնտեսի ուշադրությունն իր կողմը դրավեց։ Ցերիտասարդ մասնագետը շատ մոտեցավ ու սիրեց նրան, անսահմանորեն հիացած էր նրա անսպառ յեռանդով ու հնարագիտությամբ։

Զիկորն ազատվեց թերթերի տարածման գործից։ Ցեվ իր ամբողջ եյությամբ նվիրվեց թեյի տունկերին։ Այսպիսով նոր շրջան սկսվեց Զիկորի համար։

Նա նայում էր ու խնամում թեյի ամեն թուփը, ինչպես իր աչքի լույսը։ Ցեվ գործը յեռանդ էր տալիս նրան, ուրախացնում...Ասես տունկերն էլ ուրախանում էին, յերբ Զիկորը շոյում էր նրանց։ Թեթև էին նրա մատները և թեյի թփերի վրա խաղում էին այնպես, ինչպես դաշնակահարի մատները՝ դաշնամուրի ստեղներին...

Նա գիտեր, թե զանազան պարարտանյութերն ինչ ազդեցություն են ունենում թեյի թփի վրա։ Լավ սովորեց նրանց գործածությունը, ինչպես նաև պայքարը վնասատուների դեմ...Բայց Զիկորը դրանով չէր բավարարվում։ Նա ջանում էր, էլ ավելի լավ տիրապետել թեյի գործին, սովորել նրա բարդ արվեստը...

Գյուղի շարունակությանը վրա, գետի աջ ափին, տարածվում են մշակվող հարթ հողեր և այդ հողերում այգաբացի անուշ զեփյուռից ասես ինչ-վոր շշնջում են թփերը, այնքան մեղմ, վոր կարծես չեն շշնջում, այլ միայն թվում է այդպես։

Թփերի միջև, դանդաղ հոսում են մարդկային խմբերը, նրանք շոյում են թփերը՝ մատները սահեցնելով նրանց գանգուրներին։

Գետափին կա թեյի մի մարգ։ Թփերի շարքով առաջ է շարժվում մեկը՝ թեթև, ինչպես հոլ։ Նա մոտենում է ծանոթ թփերին, կլանվում նրանց սիրով։

Ահա կանաչ փայլփլուն տերևները բուռ առ բուռ լցվում են ուսից կախ արած զամբյուղը։ Հոլի պես շարժվելով, նա դուրս է գալիս շարքից զամբյուղը դատարկում զգուշությամբ։ Հետո նրի շարունակում քաղը, ու զարձյալ սահում են մատները։ Նորից լցվում, նորից դատարկվում է զամբյուղը և կրկին անդուսպ յեռանդ է խաղում նրա բաղուկներում...

Միջորյա դադարի զանգն է հնչում։ Պարսատիկի պես նա անցնում է տարածությունը և հայտնում բոլորին, վոր կատարվում է տերևի ընդունելություն։ Գործն սկսում է կամաց-կամաց դադարել։

Ահա, տնկարաններից մեկ-մեկ դուրս են գալիս կոլտնտեսականները, տերևը պահեստին հանձնելու։ Հոլի պես շարժվողը նորից աշխույժով է քայլում։ Պահեստ է հասնում բոլորից շուտ, տերևը հպարտորեն մեկնում է կշռողին, գրած թուղթը շրշյունով յերկծալ է անում, գրպանը դնում։

Կոլտնտեսականները գալիս, հանդիպում են հոլի պես շարժվողին։ Մեկը հետաքրքրվում է՝ «Զիկոր, ինչ-քեն ես քաղել յերեկ»։ «Քսան կիլո»,—իր սովորական հպարտությամբ պատասխանում է նա։ «Ետոր քառասուն կիլոյից ել շատ ես հանձնելու»,—քթի տակ ասում է հարցնողը, և մի պահ նախանձի կայծ է շարժվում նրա սրտում..

Յերկրորդ որը հանգստյան որ եր։ Առավոտը թերթեր բերեցին։ Զիկորը բացեց մի թերթ ու սկսեց կարդալ։ Հանդիպեց զոնբասցի հանքափոր Ստախանովի նամակին և առաջին տողից հուզմունքը պաշարեց նրան։ Կարդում եր Զիկորն ուշի-ուշով, և մեկն ասես ականջին ձայն եր տալիս՝ «Մեր հայրենիքում ամենքն ել կարող են հերոս դառնալ։ Ա՜յ, Ստախանովը շարքային բանվոր եր, բայց տես, հիմի նրան ամբողջ աշխարհը ճանաչում է»։

Յեվ նա բռնկվեց, յերակներում արյան չտեսնված հոսանք զգաց ու թերթը ձեռքին սլացավ իր ընկերների մոտ։ Ընկերներին զարմացրեց Զիկորի անսովոր տրամադրությունը։

— Ի՞նչ կա։

— Ի՞նչ պատահեց։

— Ե՛լ ի՞նչ պետք է պատահեր...Ա՜յ, կարդացեք։ Նայեցեք ես նկարին։ Բանվորը պլանները հնգապատիկ է կատարել։ Աշխատանքի արդյունքի նոր, դեռ չտեսնված նորմաներ է ստեղծել, իսկ մենք...

Սովորականից արագ ասաց նա այս խոսքերը և ընկերներին մեկ-մեկ ցույց տվեց թերթում Ստախանովի ժպտացող պատկերը...

Վերակազմվեց մի բրիգադ Զիկորի նախաձեռնությամբ։ Առաջինը Շուշիկն եր, վոր իր ցանկությունը հայտնեց այդ բրիգադում աշխատելու։ Բարեխիղճ կոլտնտեսուհի յեր նա։

Ընկերուհիները, սակայն, սկսեցին կատակել նրա հասցեյին.

— Դրան մտիկ, ե՜, հեռվից վոր բանը չհաջողվեց, մոտը գնաց։

— Համա լավ տղա յե, հա, շատ ել ճարպիկ է...

— Ճարպիկս վոնքն է, ասա՝ կրակ է, կրակ։

— Շուշիկին հենց եդ է հարկավոր...

Շուշիկը կարմրեց։

— Դե, լավ, ե՜...—այսքան կարողացավ ասել նա և խուսափեց նրանցից։

4.

Զիկորը բոլորին ծանոթ եր ու սիրելի։ Նրան կարելի յեր տեսնել աշխատանքի վայրում, ժողովներին ու պարապմունքներին, միշտ ուրախ, ժպիտը դեմքին։

Կյանքն ավելի ուրախ է դարձել։ Յեվ նա իր համար յերջանիկ կյանք եր ստեղծում, վորպես նոր մարդ՝ ստախանովական։ Իր մեծաթիվ աշխորերի դիմաց հրակայական արդյունք ստացավ։ Յեվ նա այդ արդյունքով մի դեղեցիկ տնակ կառուցեց իր համար, ձեռք բերեց տան կահ-կարասիք և տնակի առաջ փոքրիկ այգի տնկեց մերձարևադարձային պտղատու ծառերով։ Իսկ մի պատեֆոն ել պարգև ստացավ կոլտնտեսությունից։

Աշխատանքից հետո, յերբ պառկում եր ձյունի պես մաքուր անկողնի վրա՝ հանգստանալու, սովորաբար բաց պատուհանից նայում եր դուրս։ Տնկարանների

շարունակության վրա ամեն մի չորրորդ-հինգերորդ բակում յերևում եր գյուղական նոր շենք։ Նա մաքով շրջում եր գյուղը, անա կոլտնտեսության վարչության շենքը, դպրոցը, դեղատունը, ակումբը, սղոցարանը... Բոլորն էլ նորաշեն։ Մոտակա տներից լսվում եր նվագի ու յերգի ներդաշնակ ձայնը։ Մի տեղ պար եր սկսել, լսվում եր պարի աշխույժ յեղանակը և թնդում եր յերիտասարդների ծափն ու ծիծաղը...

Պառկած եր Զիկորը և այդ ամենի մեջ մաքով վորոնում եր մեկին։ Սիրտը սիրո հուշերով եր պարուրված։ Ահա և նա,—կանգնեց աչքի առաջ, սովորականի պես ժպտուն ու դյուրաշարժ։ Ծիծաղեց չարաճճի կերպով ու մոտիկ կանգնեց։ Արդյոք սիրում է նա էլ...

Զիկորը դուրս յեկավ։ Նստեց պատշգամբի ճաղի մոտ։ Լսում եր կենսախինդ ձայները և այդ ձայների մեջ մեղրի պես ծորացող նվագը, վոր ներդաշնակությամբ հյուսվում եր յերգ ու պարին...Նա չգիտեր, թե էլի վորքան ժամանակ մնաց այդպես։ Մեկ էլ պոկվեց տեղից։ Բուռն ցանկություն ուներ գնալու, նրան գտնելու, հետը խոսելու...

Այդ գիշերն ու մյուս որը Զիկորը չկարողացավ իր սրտին ասել նրան, ասես լեռվի ծայրին մի մեծ քար եր դրված ու չեր թողնում լեռուն շարժվել։ Ցերեկոյան էլի յեկավ-պառկեց՝ սիրակարոտ հուշերով։ Իսկ յերրորդ որը, Զիկորն այլևս անորոշ դրության մեջ չեր։ Ցերեկոյան, յերբ գործը վերջացրին, շտապեց դեպի գյուղ։ Ճանապարհին հանդիպեց աղջկան։

— Շուշիկ...—կանչեց մի տեսակ ձայնով, վորի մեջ այնքան փաղաքշանք կար։

Աղջիկն զգաց ու սիրտը դող բռնեց։

— Զիկոր...—հազիվ ձայնեց նրան։

Նրանց հայացքները հանդիպեցին իրար։ Ամպերի արանքից լուսինը ցույց տվեց իր ժպտուն դեմքն ու մնաց վորպես վկա գրկված յերիտասարդներին։

Աղջիկը հանկարծ դուրս թռավ տղայի գրկից։

— Շուշիկ...—դողացող ձայնով ասաց Զիկորը։

— Կտեսնեն...ամոթ է...

Ու չքացավ տղայի աչքից։

Մի շաբաթ հետո բոլորը շնորհավորում եյին նորապսակ զույգին։

5.

Այժմ ավելի կենդանի եյին նրա աչքերը։ Բիբերը՝ կրակի պես բոցկլտացող։ Այդ բիբերի պես միշտ բոցկլտում եր նրա գործը և հաջողությունը՝ հաջողության հետևից եր գալիս։

Զիկորն աշխատում եր մեծ սիրով։ Գործը նրան յեռանդ եր տալիս, ուրախացնում...Գնում եր մի թփից մյուսը, խնամում ամբողջ հոգով։ Նա մեծ ծրագիր ուներ։ Ցեվ գիտեր, վոր անշուշտ կհաղթանակեր...

Զիկորը խանդավառված ու կլանված եր ծրագրերով։ Նրա սրտում քաղցր ցանկություններ կային և նա ամբողջ եությամբ մի նպատակի յեր ձգտում...

Խաղաղ յերեկո յեր։ Կոլտնտեսականները գալիս-հավաքվում եյին ակումբում։ Բոլորին հետաքրքրում եր այդ որվա նորությունների փոխանակությունը բրիգադների միջև և հատկապես այն, թե ինչ պետք է ասեր Զիկորն իր բրիգադի նվաճումների մասին։

— Մարդն իր նպատակին հասավ,—ասում եր կոլտնտեսականներից մեկը նրա հասցեին։

— Աշխատանքը գիտի,—պնդում էր յերկրորդը։

— Դե, մենք ել ենք աշխատում...

— Քո տունը շինվի, աշխատանք ել կա, աշխատանք ել, մարդ ել կա, մարդ ել։ Նրան Զիկոր կասեն...

— Աշխատանքը հնարագիտություն է ուզում ու մարդն էդ հնարագիտությունն ունի։ Ա՜յ, ինչ եմ ասել էդ տեսակ մարդուն...

— Բա հո հանաք բան չի՞ նորմայից չորս անգամ ավել տերև տալ...Ասում են՝ յերկու ձեռով ենպես է տերև քաղում, վոր դու հազիվ թե մի ձեռքով նրա պես լավ քաղես...

— Մենակ ինքը հո չի՞, նա իր ամբողջ բրիգադին հենց եղպես ել սովորեցրել է...

— Ա՜յ քեզ բան, մենք էդ բանն իսկի մտքով ել չենք անցկացրել, իսկ նա...ա՛յ թե ինչու յեր եղքան արդյունք տալիս...

— Մենք ել կտանք, թե վոր Զիկորի պես աշխատենք։

Հանկարծ Զիկորը յերևաց։ Բոլորը նրան նայեցին, նայեցին այնպիսի հայացքով, ասես առաջին անգամ եյին տեսնում...

Ցեվ Զիկորն իր փորձը մասսայականացրեց մյուս բրիգադներում, հետո գնաց նաև հարևան կոլտնտեսությունները։ Նրանք ևս սկսեցին յուրացնել այդ արժեքավոր փորձը։ Որինակելի յեր Զիկորի աշխատանքի ձևը, արդյունքը՝ քառապատիկ, և ավելի վորակով...

Զիկորին ճանապարհ եյին դնում։

— Գնում ես, ելի՞...Գնում ես մեր սիրելի Ստալինի մոտ։ Գնա ու մեզնից շատ-շատ բարև արա։ Ասա, վոր լավ տղերք կան կոլխոզում, բոլորն ել պայքարում են, վոր յերկիրը լցնեն խորհրդային թեյով, աննման թեյով...

— Զիկոր ջան, ահա ես փոքրիկ կապոցը, կտանես ու իմ կողմից կտաս մեր սիրելի Ստալինին, թող ասուշ անի։ Կասես՝ հերոսուհի կին ունեմ, ինձ հետ կողքկողքի պայքարեց ու ինձ ել հաղթեց...

— Ես փոքրիկ կապոցն ել տար...

— Գնա, սիրելի ընկեր, գնա։ Զեկուցիր մեր մեծ ու մեծ Ստալինին։ Ասա՝ մեր գյուղի մասին, թե մի ժամանակ ինչքան աննշան ու հետամնաց եր, իսկ հիմի հենց ասես նորաշեն քաղաք լինի, ունի թեյի ծով տնկարաններ և այդ տնկարաններում՝ շատ ու շատ հերոսներ...

Աղջամուղջն եր նստել լեռների քերծերին, յերբ վերջին հրաժեշտը տվեցին նրան գետի կամուրջի մոտ։ Գետը թշշում եր ու կատաղորեն զարնվում ափերին։ Սակայն այդ նման չեր նրա հին վայնասունին։ Նա հիմի լույս եր տալիս գյուղերին, յերգում եր հպարտորեն, և գիշերվա աղջամուղջն առատորեն ասեղում եյին ելեկտրական նոր լույսերը։ Իսկ առվակում՝ ճանապարհն եր ձգված—յերջանիկ ու խնդուն կյանքի ճանապարհը։

ԿԱՄՈՒՐՋԸ

1.

— Թող մի տակից դուրս գան ու հետո խոսեն մարդու վրա,—ասում եր ինքն իրեն Արշո ամին։

Յերեկվա դեպքը հոլի պես դառնում եր նրա գլխում, և Արշո ամին ուրախ եր, սիրտը զարկում եր այնքան քաղցրությամբ, վոր թվում եր, թե հենց նոր և վերադարձել պարտիզանական կռիվներից, թվում եր, թե նոր և ծագել իր հոգու արևը։ Ինչ-վոր լեղուներ եյին պտտվում, և ինքն էլ անձամբ լսել եր այդ՝ իր հասցեյին յեղած խոսքերը։ Թեև նա գիտեր, վոր այդ խոսքերին հավատացողներ չեն լինի, իսկ յեթե լինեյին էլ, հազարից մեկը գուցե, բայց էլի մի հարմար առիթի յեր մտնում գալիս, վորպեսզի ապացուցեր նրանց, վոր ինքը ճիշտ է։

Ցեվ այդ առիթը գտավ։ Գարնանացանից հետո յերկարատև ու հորդ անձրևներ սկսվեցին, այնքան հորդ, վոր, ինչպես ասում են, ամեն ինչ վողողեց, տարավ։ Այդ անձրևներից եր, վոր ձորակի մոտով անցնող, կոլտնտեսության արտը տանող հանապարհը փուլ յեկավ։ Ջիսսայլով անցնելն այլևս հնարավոր չեր։ Մի նեղ շավիղ եր մնացել, այնքան նեղ, վոր յերկու մարդ

հալիվ իրար կողքի անցնեյին։ Ճիշտ է, մի ուրիշ ձիասայլի ճանապարհ էլ կար, որ գնում էր արտի մյուս կողմից, բայց դա այնքան հեռու էր, որ, ինչ գնով էլ լիներ, պետք է ձորակի մոտ փուլ յեկած ճանապարհը նորոգեյին։ Զնայած, որ արտերի կանաչը նոր էր բարձրացել և արտերն անափ ծովի պես ծփում եյին, բայց և այնպես առաջուց պետք էր նախապատրաստություն տեսնել, որ բերքահավաքին կազմ ու պատրաստ դիմավորեյին։

Արշո ամին առիթից ոգևվեց, և յերեկոյան դեմ, գործից հետո, յերբ կոլտնտեսականները հավաքվեցին դրասենյակի առաջ, մի «թեթև» ժողով արեց։

— Ընկերներ, ասոր հատկապես մի թեթև ժողով ենք անում,—հայտարարեց Արշո ամին,—ես ժողովի նպատակն են է, որ բոլորիս էլ հայտնի լինի, թե ինչ է արվում մեր ես կոլխոզում։ Բոլորիդ էլ հայտնի յե, որ հատկապես մեր են արտը տանող ճամբան փուլ է յեկել, պետք է շինել, որ մեր հետագա աշխատանքները վոչ մի արգելք չունենան։ Մեր ես կոլխոզը հատկապես յեղել է առաջավոր շարքերում և միշտ էլ պետք է լինի։ Մենք՝ բոլորս էլ որ սրտով աշխատենք, հետ մնացող չի լինի մեր շարքերում։ Հետ մնալն ամոթանք է, ընկերներ։ Բայց ցավոք սրտով եմ ասում, որ էլի ունենք ենգլիսի տղերք, որ փոխանակ գործին զոռ տալու, լեզվին են զոռ տալիս...

Փոթկոցի պես մի բան անցավ կոլտնտեսականների շարքերում, մի պահ լսվեցին շշուկներ ու ձայներ։

— Այո, ընկերներ,—շարունակեց նախագահն իր խոսքը,—հատկապես լեզվին են զոռ տալիս ու անգործ պառավների պես պատերի տակ նստած՝ սրա-նրա մասին են խոսում, բամբասում։ Բայց չեն իմանում, որ իրենց արածը միայն պառավներին է վայել, են էլ հատկապես անգործ պառավներին թե չե, հիմիկվա պառավները որտեղից են անգործ։ հատկապես հիմի անգործ մարդ չկա մեր յերկրում։ Գործ ենքան ունենք վոր... թե կարաս աշխատի, բայց... Եսպես ասած, մեր ես՝ մարմնով ջահելներն ու հոգով պառավները...

Ծիծաղ։ Կրկին շշուկներ ու ձայներ Արշո ամու սուր ու հեգնական խոսքերի առթիվ։ Սկսեցին նույնիսկ ակնարկներ անել։ Նախագահը հանգստացրեց նրանց և շարունակեց իր խոսքը։

— Ընկերներ, հատկապես աղմուկ անելու բան չկա։ Յես հիշտ եմ ասում՝ մեր ես՝ մարմնով ջահելներն ու հոգով պառավները...

Նախագահը չկարողացավ իր խոսքն առաջ տանել։ Ծիծաղը փոթկոցի փոխվեց։

— Եդ ում վրա յեք ծիծաղում,—հանկարծ բորբոքվեց Սեկոն այնքան ուժեղ, որ մի պահ բոլորն ապշած՝ լռեցին։

Սակայն շուտով ծայր առավ աղմուկը։

— Լռեք, ընկերներ, ասպես չի լինի, ժողով է, մեր առաջ հատկապես հարց է դրված, պետք է լուծենք,—հանգստացրեց նախագահը և ապա դիմեց Սեկոյին,—ինչ է, Սեկո, ինչու հատկապես եդպես հանկարծ վառվեցիր։

— Ինչու...Ի՞նչ ես ծամոնի պես բերանդ դրել՝ «ես պառավները», «ես պառավները»։ Ո՞վքեր են քո եդ «պառավները» ասա տեսնենք...

— Քո մասին չե՞ խոսքը, Սեկո,—կեղծեց նախագահը՝ ավելի սուր խայթելու համար,—այլ են պառավների

մասին, վորոնք, ճիշտ վոր, քյոխվի ժամանակի պառաջների պես նստում են պատերի տակ ու բամբասանք են թափում սրա-նրա գլխին։ Ա՛յ, եդ պառավներից են, վոր փոխանակ ինձ մոտենան, ասեն՝ ես-պես-ենպես, տաս վերստ հեռու յեն փախչում ինձնից ու բամբասում, թե՝ յես խնամիություն եմ անում, իրենց ցածրորակ ձեռք եմ համարում, իսկ բարեկամներիս...

Նախագահին նորից ընդհատեցին բացականչություններով.

— Լավ խնամիություն արիր...

— Ախպորդ տղին դուրս արիր ու...

— Պոչավոր սուտ է։

— Ա՛յ քեզ բամբասանք։

Յեվ այսպես անվերջ։

— Լսեք, ընկերներ...,—հանգստացրեց նախագահը և իր ընդհատված խոսքը շարունակեց,— յես եվ դրա համար չե՞մ ասում վոր...Դիտեմ, հավատացող չի լինի, դուցե իրենց նման պառաջները հավատան, բայց ախր, չի լինի, չե՛.սուտ ասելը լավ չե, են եվ յերեսին չասել ու հետվից խոսե՞լ։ Ա՛խր...Դե, հասկանալի յե ինքնաքննադատությունը շատ եվ լավ բան է, կարող ենք իրար յերեսին խոսել բացերի մասին, վոր ուզենք, բայց...ինչ է նշանակում բամբասել...

— Ի՞նչից ես վախում, Արշո ամ՛ի,—լսվեց մի ձայն։

Տեղ-տեղ ծիծաղեցին ու շուտով եվ լռեցին։

— Վախենալու բան չկա, Հաբեթ. դա նույնիսկ ծիծաղելի յե, բայց...լավ բան չե, հատկապես հին սովորություն է, պետք է վերջ տանք. վայել չե խորվան համար, մեզ ու մեր կոլխոզի համար, մեր յերկրի ու իշխանության համար։

Նա մի պահ կանգ առավ, մտածեց ու նորից շարունակեց.

— Եսպես խոսում ենք, բայց հատկապես մեր գլխավոր հարցը մնում է։ Ճիշտ է, դեռ շուտ է, բայց պետք է հատկապես հիմիկվանից պատրաստություն տեսնենք, քանի վոր ծանրաբեռնված չենք, վոր բերքահավաքին կազմ ու պատրաստ դիմավորենք. վոնց վոր ասի՝ ես մեր փուլ յեկած ճամբեն պետք է շինենք։ Անհրաժեշտ գերաններ ու նյութ ունենք, չորս-հինգ հոգով կարելի յե հատկապես մի որում պատրաստել. եդ գործի համար յոթ աշխոր եմ տալիս։ Ո՞վ կարող է հանձն առնել եդ գործը, վոր հատկապես պատվով կատարի ու ինձ եվ համոզի, վոր ինքն իսկական հարվածային է։

Ձեռքեր բարձրացան և տեղ-տեղ եվ լսվեցին ձայներ։ Նախագահը նայեց նրանց, նայեց Սեկոյին և գլուխն որորեց, յերբ տեսավ, վոր հանգիստ նստել եր։

— Սեկո, եդ վոնց է, դու չե՞ս կարող,—ասաց Արշո ամ՛ին վերջապես։

— Վախում ես չկարենամ։

— Ձե՛, չեմ վախում, բայց...ուզում եմ վերցնես ու ապացուցես ինձ, վոր ես մեր Հաբեթի, Ռութի, Մուշեղի և նրանց նման հարվածայինների շարքումն ես, վոր նոր կյանքի, ունեվոր կոլխոզնիկ դառնալու համար ես կանգնած։

Ծիծաղը հազիվ պահեցին։

— Բա մենք ի՞նչով ենք պակաս,—ասաց Սեկոն նեղացած։

— Ինչով եք պակաս...դեռ ելի շատ բանով։

— Շատ բանով,—կրկնեց Սեկոն նախագահի խոս-

քերը և ապա ավելացրեց.—Ինչ է, նրանց պես չե՞նք կարող աշխատել։

— Ի՞նչու չէ, իմացած յեղիր, վոր անկարելի բան չկա աշխարհիս յերեսին։

— Դե վոր եղպես է, էլ ինչո՞վ են զրանք մեզնից ավելի։

— Նրանով, վոր յեթե նրանց տամ եղ գործը, վաղը ծեզին չորս հոգով կգնան ու մի որում կարդին ճամբա կշինեն, իսկ դուք...

— Ի՞նչ ես զրանց գովում, յոթը յերկինք բարձրացնում...դե տուր տեսնենք, ով է իսկական հարվածայինը։

— Տալիս եմ։ Յերբ վոր եղպես է, Սեկո, վաղը քո գլխավորությամբ կվերցնես չորս մարդ՝ Վաղոյին, Վարդին և...ելի մի մարդ էլ իմ դեմ բողոք ունեցողներից, դու էլ հետը՝ չորս հոգի, կգնաք, մի որում հատկապես եղ ճամբան կշինեք։ Ժամանակին կշինեք և ծլավ, վոր համոզեք ինձ, թե յես սխալված եմ յեղել, իսկ յես են ժամանակ կգամ ու կասեմ՝ ներեցեք ինձ ընկերներ, դուք հարվածային եք յեղել...

— Բարձրացավ ընդհանուր ծիծաղ։

— Ուրեմն եղպես,—շարունակեց նախագահը՝ ծիծաղը դադարելուց հետո,—վաղը գնացեք ու գործով ցույց տվեք, վոր դուք ճիշտ եք, եղ՝ դուք, են՝ ճամբան, ես էլ՝ յես, թե կարաք՝ պատռեք իմ դիմակը...

Ծիծաղը կրկնվեց, նախագահն ավելացրեց.

— Իհարկե, յես ձեզ չեմ սաիպում...Իսկ թե համաձայն չեք, ասեք, են ժամանակ վաղը չորս հարվածայինի կուղարկեմ և ձեռաց շինել կտամ։

— Համաձայն ենք,—ասաց Սեկոն՝ ընկերների համաձայնությունը վերցնելուց հետո։

— Համաձայն ենք,—հաստատեցին ընկերները։

— Ուրախ եմ հատկապես, վոր եղպես է։ Ուրեմն աջողություն ձեզ,—ասաց Արշո ամին։

Ժողովը վերջացավ։ Կոլտնտեսականները սկսեցին ցրվել։ Վոմանք սրտխոսում էին.

— Համա կպատռեն հա Արշո ամու դիմակը...

— Բա ինչ կանեն, վոր խնամություն եր անում,—ինչ եր մտածում։

Առավոտը վաղ Սեկոն իր ընկերներին վերցրեց ու գնաց աշխատանքի՝ Արշո ամու «դիմակը պատռելու»։

Արշո ամին ուրախ եր. սիրտը զարկում եր դուրեկան զրգիռով, և մտքերը նորից դառնում էին գլխում, յերբ նա հասավ իրենց դարբնոցը՝ մեքենա-գործիքների վիճակն իմանալու։

— Բարև, ուստա Կարո, վոնց է մեր հնձիչի հալը. ելի խո հիվանդ չե՞,—ասաց Արշո ամին՝ ուրախ-ուրախ ներս մտնելով։

— Ես ա, պրծնում ենք, Արշո ամի, քիչ ա մնում։

— Ով դիտի, Վարդը կռանը լավ չի խփում, վոր դեռ հիվանդը հալին չե,—ասաց նախագահը՝ ժպիտը դեմքին։

— Ո՞վ, Արշո ամի, յես...կուզես փորձենք։

—Արի՞ փորձենք.. տուր ինձ...

Արշո ամին կռանը վերցրեց Վարդի ձեռքից։

Արշո ամուն բոլորը սիրում էին ու հարգում. նա իրեն այնքան մոտ եր պահում կոլտնտեսականներին,

վոր իր շուրջը ընկերական մթնոլորտ էր ստեղծել։ Չնայած նրան, վոր բոլորի հետ էլ շատ մոտ էր պահում իրեն, բայց և այնպես շատ պահանջկոտ էր գործի աշխատանքը։ Նա հաճախ գնում էր այս ու այն բրիգադը. կատակի ժամանակ կատակ էր անում, գործի ժամանակ՝ գործ, և վոգեվորում էր կոլտնտեսականներին։ Բոլորն էլ գիտեին նրա բնավորությունը։

Պատմում էին, թե ինչպես մի անգամ, յերբ կոլտնտեսությունն իր ցանքի տարածությունն էր ընդարձակում գետափին խոպան ընկած հողերից, Արշո ամին իմանում է, վոր այդ հողամասին կցված բրիգադը յետ է մնում աշխատանքից։

— Ցես չորրորդ բրիգադ եմ գնում, աչքիդ լույսի պես նայիր գործին,— ասում է վարչության անդամներից մեկին, և ինքը գնում է դաշտը՝ գործը կազմակերպելու։

Նախագահը մինչև վերջը մնում է այդ բրիգադում։ Քննում է բրիգադի յետ մնալու պատճառը և նորից տեսնելով իր յեղբորորդու անփութությունն ու համայնական ձիերի նկատմամբ թշնամական վերաբերմունքը, վորի համար մի քանի անգամ նկատողություն էր տացել, նրա հարցը դնում է բրիգադում։ Ցերը բրիգադի քսանմինգ անդամներից տասնինների մատը վեր է բարձրանում, Արշո ամին գոռում է.

— Դուրս կոլխոզից. ետորվանից էլ կոլխոզնիկ չես։ Գնա, լավ մտածիր, յերբ տեսար, վոր ուղղվեցիր, նորից դիմում կտաս...

Մյուս որը վերցնում է իր յեղբոր վորդու ձիերը և բրիգադի յետ մնացող անդամներին կենդանի որինակով ցույց տալիս, վոր հնարավոր է նորման կատարել, նույնիսկ ավելին։

Ինչպես գարնան արևը ժպտում է արտերին և իր ջերմ շնչով հողից ծիլեր դուրս քաշում կանաչ ծով կապելով, այնպես էլ Արշո ամին շունչ է տալիս այդ բրիգադին։ Ցեռանդը խաղում է բոլորի բազուկներում, և ամեն մեկն աշխատում է ուժերը լարել, նորման կատարել. ու դեռ ավելին։

Ցեվ վերջին որը, ժամկետից մի որ առաջ, յերբ արևը նստում է գիմացի սարերին, Արշո ամին բրիգադի անդամներին իր խորին հրճվանքն է հայտնում.

— Ցես հատկապես գոհ եմ և վարչության կողմից էլ շնորհակալություն եմ հայտնում հետևյալ գութանավոր-հարվածայիններին, ինչպես որինակ՝ Հարութին, Մակարին, հետո՝ Ռուբին, Վասակին, նույնպես Դանիելին ու Ստեփանին։ Սրանք հատկապես ենպիսի մարդիկ են, վոր արևի պես փայլում են և վոսկու պես ազնիվ են. մարդիկ, վոր նվիրված են աշխատանքին...

Այսպես և ավարտվում այն գարնանացանը, և դրա համար էլ Արշո ամու կոլտնտեսությունն արժանանում է կարմիր տախտակին։

Գործին նվիրված մարդ էր Արշո ամին։ Ցեվ ահա, այժմ էլ կանգնած սալի առաջ, կռանը ձեռքին, վոր վերցրեց Վարդի ձեռքից, հենց այն է, ուզում էր բարձրացնել յերբ հանկարծ նրա մտավ Սեկոն սաստիկ գժգոհ.

— Ուղարկիր եղ քո հարվածայիններին, տեսնենք վոնց են մի որում շինում. ինչ մի որ, յերեք որում հազիվ շինեն...

— Լավ, վաղն իրիկուն կտեսնենք,— պատասխանեց Արշո ամին հանդիստ։

2.

Զորակի մոտ, առավոտվա եղջամուղջին, դեռ հեռվից նկատելի էին ինչ-վոր անորոշ սավերներ ու շարժումներ. թվում էր, թե այնտեղ կատարվում է անսովոր մի գործ։ Իսկ մոտենալիս՝ այդ անորոշ սավերներն ու շարժումները դառնում էին պարզ ու վորոշ։ Ցերևում էր, թե ինչպես ձորակի մոտ բարձրանում են քարի կույտեր, գերաններ ու ցախի կապոցներ, և այնտեղ, մոտիկ թափված քլունքներ ու կացիններ։ Իսկ չորս առողջ ու հաղթանդամ յերիտասարդներ, լինգը ձեռներին, ձորակը մտած՝ անոպատ յեռանդով գերանների համար փոսեր էին փորում։

Քրտինքն առու-առու ակոսում էր նրանց ճակատը։

— Արագ, տղերք ջան, արագ գործեք, վոր ժամանակից էլ շուտ պրծնենք,—ասում էր Հաբեթն իր ընկերներին։

— Բա ինչ, շուտ անենք, վոր մեր պատիվն էլ գետնով չտանք,—վրա յեր բերում Մուշեղը։

—Գլխավորն են պատնեշն է,—բացատրում էր Հաբեթը.—թե ամուր շինեցինք՝ համբան էլ ամուր կլինի, թե թույլ շինեցինք՝ պարզ է, վոր համբան էլ անպետք կլինի, վոնց վոր առաջվանն էր։ Ախպեր, ես համբան նախանցած տարի շինեցին. ինչու պետք ա քանդվեր վոր.. պարզ է, պատնեշը վատ էր շինված, և հեղեղը քշեց-տարավ...Պատնեշի ամրության համար գլխավորն են է, վոր՝ նախ պետք է թեքություն ունենա, վոր ջուրը սահելով գնա, հետո՝ գերանների հիմքն էլ պետք է խորը լինի, հողում լավ թաղված, և յերբորդն էլ՝ հարկավոր են հոնի ծնկաձև ճյուղեր, վորոնք պետք է դեմ անել գերաններին ծայրերին, իսկ մյուս ծայրերը հողում խորը թաղել, վոր կարողանան գերաններն ամուր պահել։ Հետո ուզում է տասնյակ տարիներ էլ անցնեն, իմացած յեղեք՝ բան չի լինի։

— Բա ինչ, եղպես էլ հարկավոր է, վոր համբան յերկար դիմանա,—հաստատեց Մուշեղը և կռանալով սկսեց փոսից քանդված հողը հանել։

— Եղպես, տղերք ջան, ես է պրծնում ենք փոսերը. վոր կարենանք պատնեշի հիմքն ամուր դցել,—ասում էր Հաբեթը, վոգեվորելով տղաներին։

Հաբեթի ողակը գործում էր յեռանդով։—Ցեվ ճանապարհի նորոգումը ժամանակին կամ ժամանակից շուտ ավարտելը նրանք վոչ միայն իրենց ինքնասիրությունն ու պատիվն էին համարում, այլ և մեծ պատիվ՝ Արշո ամուս համար։ Վորովհետև դուրս չգալ վերցրած գործի տակից, նշանակում էր ծաղր ու ծանակի առարկա դառնալ։ Մյուս կողմից էլ՝ իրենց վատ կզգային, յեթե Արշո ամուսն տված խոսքը չկատարեին։ Նրանք շատ էին հարգում ու սիրում այդ մարդուն. չէ՞ վոր Արշո ամին էր ուղարկել իրենց, վոր մի որում ճանապարհը նորոգեն, և այդպիսով Սեկոյին և նրա նմաններին ապացուցեն, վոր դժվար վոչինչ չկա, հարկավոր է միայն կամք և ուժ...

— Ես վոնց, վոր նրանք ետեղ հեչ բան չեն արել ու ձեռաց ճղել են,—հետաքրքրվեց Արեյը։

— Բան չեն արել, վոնց թե...չտեսաք առավոտը վաղ ետեղ-ենտեղ խոզի նման փորփրել են էին,—ասաց Հաբեթը՝ ժպիտը դեմքին։

— Ցերևի ես փլված քը վոր տեսան, խեղճերի լեղին ճաքեց,—ծիծաղելով վրա բերեց Մուշեղը։

— Բա վոր հանձն առան, սա նրանց գործն եր,— հաստատեց Ռութը։

— Վոնց եք ուզում, չպիտք է «պատուհին Արշամու դիմակը», վոր նայում ես անգամ խնամիությունչանի...մեզ,— կատակեց նորից Հաբեթը։

— Զուր հո չեն ասում լողրիր. ինչքան ասես, զոհեն տալիս լեզվին, իսկ ձեռքերն ազատ ման են ածում, ասես ճամբա շինելը տանձ ուտել լինի...

— Ջե,— Ռութի խոսքը կտրեց Աբելը.— ինչ տանձ, ինչ բան, ախպեր, դրանք կարծում են, թե կարող են աշխատանքի ժամանակ շվաքում նստեն, իսկ փոխվախտը՝ ամենից շուտ մեջտեղն ընկնեն։

— Սաղ ել, Արշո ամի, վոր նրանց նմաններին կարողանում ես տանել,— շարունակեց Ռութը,— յես վոր լինեյի, ախպեր, մինչև հիմա դրանց հազար անգամ եյի դուրս արել կոլխոզից։

— Դուրս անելը միշտ ել կարելի յե, բայց բանն ինչն է, վոր նրանց ուղղենք։ Արշո ամին աշխատում է վոր ուղղի,— պատասխանեց Հաբեթը։

— Ե՛, ուղղվեն, չե մի բան...

***

Արդեն փոսերը պատրաստ եյին։ Գերանները մեկ-մեկ բերին և փոսերն իջեցրին։ Այնուհետև մի առ մի ուղղեցին և թեք ուղղություն տալով՝ սկսեցին հիմքերը քարով ու խիճով ամրացնել։

— Աբել ջան,— ասաց Հաբեթը սիրալիր.— հենց ապրես, մի կացինը վերցրու, գնա են մոշուտը, ութ հատ հոնի լավ ծնկաձև ճյուղեր բեր, ես ա, մեզ պետք կգան։

Աբելն ամիջապես գնաց անհրաժեշտ ճյուղերը բերելու, իսկ իրենք շարունակեցին գերանները հողում ամրացնել։ Գերաններն ամրացնելուց հետո Հաբեթը նորից ստուգեց նրանց ուղղությունն ու ամրությունը, մի անգամ ել վերհիշեց ճանապարհը նորոգելու իր նախագիծը, համեմատեց նրա հետ և համոզվեց, վոր ճիշտ եյին անկված։ Ապա ամրացված գերանների տակ, ներսի կողմից, ուրիշ գերաններ ել շարեցին, բերին նույնպես ցախի կապոցները, սկսեցին տեղավորել գերանների արանքներում և լցնել քարով ու խիճով։

Արևը բավական նվաճել եր յերկնքի բարձունքները, երբ շողերը շիկ խուրձերի նման թափել ձորը, յերբ Աբելը հոնի ճյուղերն ուսն առած և կացինը կոնատակին՝ յեկավ ու կանգնեց ձորակի յերեքքին։ Նա ճյուղերի կապոցն իջեցրեց ուսից և մի կասկածելի հայացք նետեց իրենց աշխատանքին, ապա նայեց արևին։ Նրան թվաց, թե արդեն բավական ուշ է և գործն ել քիչ է արված, այնպես վոր հնարավոր չե ժամանակին վերջացնել։ Ապա շարժվեց անվստահ քայլերով և մատախոհ ասաց։

— Արևը հրես մեր գլխավերևն է, բայց դեռ քիչ գործ ենք արել։

— Դժվար թե ժամանակին պրծնենք,— ավելացրեց Ռութը։

Հաբեթը, վոր մինչ այդ վոգեվորում եր ընկերներին իր համոզմունքով ու վճռականությամբ, այժմ լռությամբ գլուխը բարձրացրեց դեպի յերկինքը։ Ընկերներն զգացին, վոր Հաբեթը նայեց արևին՝ ժամանակ վորոշելու։ Արդեն կեսոր եր։

Նա շուտով իրեն հավաքեց, զգաց, վոր ինչ էլ լիներ պետք է վերջացնել գործը։ Իրենց խոսքը, հետևապես և՝ պատիվը գետնով չպետք է տալ։ Հաղթը

ամոթ, յեթե Արշո ամու կամքը չկատարեին, այն մարդու, վոր ամբողջովին իրենցով՝ հարվածայիններով եր տարված, աշխատում եր իրենց հետ, ուրախանում եր ու պարծենում իրենցով, վոգեվորում եր իրենց։ Ի՞նչպես չկատարել նրա կամքը... և հանկարծ Հաբեթի մեջ ծովի պես ծփաց յեռանդը, ուժեղ հորձանք տվեց, և նա արագ կողմնորոշվեց ու վստահ ասաց.

— Կվերջացնենք ժամանակին, գործի դժվարն արել ենք։

— Այո, կվերջացնենք, դեռ շուտ է,— հաստատեց Մուշեղը։

3.

Մութը սև շղարշի նման իջնում եր դանդաղ և ծածկում ձորերը, դաշտերն ու սարերը։ Կոլտնտեսականները, գործը վերջացրած, գալիս-հավաքվում եյին կամաց-կամաց գրասենյակին կից փոքրիկ հրապարակում, և սովորաբար զրուցում իրենց անելիքների մասին, ծրագրում վաղվա կատարելիքը։ Բացի դրանից նրանցից շատերին այժմ հետաքրքրում եր նաև մի ուրիշ բան. նրանք անհամբեր սպասում եյին Սեկոյի շուրջը պատվող գործի վերջավորությանը։ Բոլորն էլ գիտեյին, վոր Հաբեթի ողակը դեռ չեր վերադարձել աշխատանքից, ուշանում եր։ Այս հանդամանքը Սեկոյին և մի քանի նմաններին ուրախացնում եր։

Յերբ Արշո ամին մոտեցավ հավաքված կոլտնտեսականներին և բարևեց, Սեկոն ուղղակի տեղից վեր կացավ և չարախինդ ժպիտը դեմքին՝ ասաց.

— Վո՞րտեղ են հապա քո սիրած հարվածայինները։ Շինեցին...

Այնքան սուր ու խայթիչ եյին լոգրի այդ չարախինդ խոսքերը և այնքան հեգնական նրա ասելու յեղանակը, վոր Արշո ամին բարկությունից մինչև ականջները կարմրեց, բայց իրեն զսպելով՝ վոչինչ չպատասխանեց։

— Լռիր, անպատկառ, եղ ում վրա յես խոսում...

Լսվեցին մի քանի ձայներ, վորոնք կարգի հրավիրեցին Սեկոյին։ Մինչդեռ Արշո ամին նորից լուռ եր։

«Յերևի չեն վերջացրել»,— մտածում եր նա և շուտ-շուտ նայում դիմացի հորիզոնին, վորտեղից պետք է յերևային իր սիրած հարվածայինները։ Արշո ամին, սակայն, հորիզոնի վրա զուր եր վորոնում նրանց. դեռ չեյին յերևում։

«Վոնց կարող եր պատահել, վոր չվերջացնեյին»,— զարմանքով՝ ինքն իրեն հարց եր տալիս նա։ Յեվ մի պահ կասկածը չքանում եր նրա գլխից, ու յերևակայում, թե ինչպես նրանք ահա գործիքներն ուսին՝ դանդաղ շարժվում են առաջ և հոգնածությունից որորվում անվերջ։

Իսկ կոլտնտեսականները նորից խոսում-ծիծաղում եյին՝ զանազան պատմություններ անելով։

— Տղերք,— սառնասրտությամբ ասաց կոլտնտեսականներից մեկը,— դուք են իմացած, թե առավոտը Սեկոյի հետ ի՞նչ է պատահել։

— Ի՞նչ, - զարմացած և միևնույն ժամանակ հետաքրքրությամբ հարցրին խոսակիցները։

— Ա՛յ թե ինչ,— անմիջապես յեռանդով սկսեց առաջինը,— յերեկ առավոտը վաղ-վաղ ես մեր Սեկոն վեր է կենում իր ողակով, գնում ձորը, թե համբան չինի։

Լսողները փոթկացին։

— Ա՜յ քու տունը շինվի, մենք ել ասինք, թե բան ա պատահել,—հանդիմանելով ասին մի քանիսը։

— Համբերեք,—հանկարծ վրա բերեց նույն մարդը։—կարծում եք, թե պրծավ...Հա, գնում են։ Դեռ մութն ա լինում. հենց են ե, վախվխելով ձորն են մտնում, վոր են մյուս կողմից անտեր գելը ռատա ե գալիս մերես հերոսներին։ Խեղճերը ինչ ճամբա, ինչ բան, ամեն ինչ մոռացած՝ լեղապատառ թողնում-փախչում են։

Լսողները նորից ծիծաղեցին։

— Բա վոր փախչում են, Արշո ամու դեմակը չեն պատռում, ծիծաղելով հարց ավեց նրանցից մեկը։

— Վռնց չե, դեռ պետք ե պատռեն...թող Արշո ամին մի անգամ ել մեզ խնամիություն անի,—իսկ հետո խոսքը փոխելով ասաց,—Հաբեթի ողակն ուշացավ։

— Ճիշտ վոր ուշացան, վռնց ե նրանց բանը,—լուրջ տոնով ասաց մեկ ուրիշը։

Այսպես անհամբեր սպասում ելին նրանց, իսկ վոմանք այն կարծիքին ելին, թե գործը յերևի չեն վերջացրել, վոր ուշացան, գուցե չկարողանան ել վերջացնել. վոմանք ել համոզված ելին, վոր յեթե ուշացան, նշանակում ե՝ չեն ուզում գործը կիսատ թողնել, մինչև չվերջացնեն, չեն գա։ Այսպես թե այնպես, բոլորի հետաքրքրությունը բորբոքվում եր, և բոլորն ել սպասում ելին գործի վերջավորությանը։

Մինչ այսպիսի կարծիքներ ու խոսակցություններ ելին տեղի ունենում, հանկարծ հորիզոնի վրա յերևացին ինչ-վոր սև կետեր, վորոնք կամաց-կամաց մեծացան և դարձան ավելի վորոշ։ Իսկ մի քառորդ ժամ հետո՝ այդ անորոշ ստվերներն արդեն ճանաչելի ելին։ Այդ Հաբեթի ողակն եր տուն վերադառնում։

— Տղերք ջան, յեկաք,—անհամբեր հարցրեց Արշո ամին, մինչդեռ մյուսները շրջապատեցին նրանց, ականջները լարեցին՝ սպասելով թե ինչ կասեն։

— Ցեկանք, Արշո ամի, համա ուշացանք,—մեղմ ժպտալով պատասխանեց Հաբեթը։

— Ինչու՞ ուշացաք, տղերք ջան, հո բան չպատահեց ձեզ։

— Ի՞նչ պետք ե պատահեր, Արշո ամի, պատահելն էն ե, վոր ամուր հիմք դցեցինք, լեն ու խոր փոսեր արինք և վեց գերանի տեղ ութն ամրացրինք հողում, հիմքն ել քարով ամուր լցրինք, վոր հեղեղն առաջինն պես չկարենա քշել-տանել...Տղերքը շատ չարչարվեցին, համա...

— Խո պրծա՞ք,—անհամբեր վրա բերեց Արշո ամին։

— Բա թողնե՞նք,—հանգստացրեց Հաբեթը։

Արշո ամու հոնքերն իջան. նա ուրախությունից փաթաթվեց նրանց և մի առ մի համբուրեց հարվածայիններին, համբուրեց անսահման սիրով, և նրա դեմքին խաղաց մի խորին բավականության ժպիտ։

ԱՆԽՈՍ ՄԱՐԴԸ

Սատ եր սիրում Արութն իր խնամքին հանձնված
ձիերին, սիրում եր անչափ, վոր թվում եր, թե առանց
ձիերի չի կարող ապրել Ամեն առավոտ, դեռ արևը
չծագած, Արութը վեր եր կենում տեղից, աչքերը տրո-
ում և շտապում եր նրանց մոտ։ Ձիերն էլ այնքան
սովրել-վարժվել էին նրան, վոր դեռ հեռվից իրենց
խնամողի վոտնաձայնը լսելիս՝ խրխնջալով դոփում
էին գետինը։

Սակայն Արութը չեր լսում ձիերի ուրախ խրխն-
ջյունը, նրանց ուրախ դոփյունը։ Չեր լսում, բայց նա
հասկանում եր իր ձիերին և միշտ էլ յուրահատուկ
ձևով, շոյում-գուրգուրում եր նրանց, շփում եր աշ-
խույժով, ապա սկսում եր մաքրել այնքան ժամանակ,
մինչև վոր փայլփլեին։

Բակում, գոմի մոտ մի հսկա ծառ կար, վորի ընդ-
կալում եր ձիերին. սիրում եր նա այն ծառի տակ
խնամել նրանց։ Ամեն մի ամառ գոմի ներսումն եր մաք-
րում իր սիրելի կենդանիներին, իսկ ամառը՝ դուրսը։

Ամառվա օրերին, աշխատանքից հետո, քրտինքի
սպիտակ հետքերը մեջքին ու ազդրերին՝ ձիերը գա-
վեսս էին հանգստանալու, և Արութն ուրախ հանդի-
պում եր նրանց, իսկ ձիերը խրխնջում էին փոխա-

դարձ ուրախությունից և հրճվանքով թափահարում բաշերը։

Հասկանում եր Արութը նրանց, բաց եր թողնում մոտիկ կանաչներում, վոր քիչ հանգստանան, իսկ հետո՝ արդեն տանում եր աղբյուրը՝ Ջրի։

Ջրի ափին նա կապում եր ձիերին և սկսում եր շոյել, դուլլով ջուր ածել վրանները և անվերջ շփել նրանց մարմինը։ Շփում եր իր հաղթ բազուկներով, վոր կեղտը թափվի, և արյունը յեռ գա նրանց ամրանում։ Իսկ ձիերը ծառս եյին լինում ու փնչում ուրախությունից։ Յեվ նա ավելի վոգևորված՝ շարունակում եր իր գործը։

Կոլտնտեսության մեջ բոլորը սիրում եյին Արութին, և տեսնելով նրան ձիերին խնամելիս, ձեռքերով ինչ-վոր շարժումներ եյին անում։ Արութը հասկանում եր այդ և մի մտերմական ժպիտ ծորում եր նրա դեմքից, ու սուր, կոկորդային ճիչ եր արձակում։ Այնուհետև ձեռքը ձիերի մեջքին եր զարկում, ապա բալձրացնում եր ուսերի բարձրությանը, դեռ թաթերը միացնում եր իրար, իսկ հետո կիսաշրջան գծում։ Այսպիսով ուզում եր հասկացնել, վոր ինքը ձիերին ավելի լավ կպահի։ Չե՞ վոր տեսնողներն ակնարկում եյին ձիերի անորինակ խնամքի մասին։

Նրան մոտենում եյին պատկառանքով և խոսելիս դիմում ձեռքերի ոգնության։ Նա ել իր հերթին հասկացնում եր նրանց կոկորդային յուրահատուկ ճիչերով և ձեռքի շարժումներով։

Ի ծնե համր եր Արութը։ Բոլորն այդպես ել հիշում եյին նրան, ասես բնազդաբար, և վատ մտքով

վոչ վոք չեր մոտենում նրան, մանավանդ մի դեպքից հետո։

Արութը չեր սիրում խարդախությունը, ատում եր կեղծիքը։ Մի անգամ յերկու մարդ ինչ-վոր պատճառով կռվան իրար։ Արութը տեսավ, արյունը գլուխը տվեց, ճիչեր արձակելով՝ նետվեց նրանց կողմ։ Անմիջապես բռնեց մեկին մի ձեռքով, յերկրորդին՝ մյուսով և ուժեղ թափով անջատեց նրանց իրարից։ Ապա այնպիսի ազդու հայացք սևեռեց նրանց աչքերին, վոր ասես ներշնչելով՝ ինչ-վոր սարսուռ զգացին նրանք, վախվրխելով թողին իրար ու գնացին իրենց գործին։

Այս դեպքը պատկերազարդվեց և անցավ բերնեբերան։

Բոլորն ել խոսում եյին Արութի գերբնական ուժի մասին և քաշվում նրանից։

Արութին հանձնված ձիերից մեկն ամենից անհանգիստն եր և հաճախ յերեխայական չարաճճիություններ եր անում։ Նրա անունը Սևուկ եր, վորովհետև սև եր ինչպես գիշեր ու կլորիկ։ Նայում եր աշխույժ ու ժիր աչքերով, և մանկական արյունը յեռ եր գալիս նրա յերակներում։ Արդեն յերրորդ գարունն եր բոլորում նա, սակայն դեռևս չեր լծված։ Հաճախ Արութը տարվելով Սևուկի գեղեցկությամբ՝ մոտենում եր նրան ու ձեռքը խփում մեջքին։ Այդ կատակը Սևուկին դուր չեր գալիս, և նա ծառս-ծառս եր լինում ու անսովոր ձայնով խրխնջում։ Դա նշանակում եր՝ «հեռու ինձնից, չմոտենաս»։

— Բը՛...Բը՛..., —բացականչում եր Արութը և մըտ-

քում ծիծաղում նրա յերեխայությունների վրա։ «Դեռ դու խամ ես, արյունդ յեռ է գալիս յերակներիդ մեջ։ շուտով գժությունները կթողնես, իմ լավ Սևուկ»,— մտածում եր Արութը։

Յեվ նրա սիրտը ցնծում եր. ինչ-վոր քաղցր, դուրեկան հոսանք եր անցնում նրա մարմնով։

Մի որ եր, յերբ Սևուկը հասունացավ ու ամրապնդվեց, պետք յեկավ կոլտնտեսությանը. պիտի պայտեյին նրան և գործի դնեյին մյուս ձիերի հետ։

Հանգստի որ եր, և բոլորը հետաքրքրվում եյին Սևուկի գործով։ Արութը մի առ մի ստուգեց ձիերի վոտները, ուղղեց-ամրացրեց պայտերը։

Նա իր գործն այնքան ճարպիկ ու հմտությամբ եր կատարում, վոր ձիերը նույնիսկ տեղից չեյին շարժվում։

Հերթը հասավ Սևուկին։ Արութը դուրս բերեց նրան վղկապից բռնած։ Ձին ականջները խլրած, գլուխը հպարտ-հպարտ վեր պահելով, թռվռում եր նրա հետևից. մերթ փնչում եր ուրախ-ուրախ և մերթ էլ զարմացած՝ նայում եր շուրջը, ասես ուզում եր խլրտալ։

— Բը՜... Բը՜...,— ձայնում եր Արութը։

Բոլորը հիացմունքով նայում եյին Սևուկին, նրա չարաճճի խաղերին։ Արութը կանգ առավ, քաշեց կապից և նորից սիրով նայեց նրան։ Ձին թռվռաց, ապա ծառս յելավ ու թնդաց, ասես փոթորիկ լիներ։

— Բը՜...Բը՜...,—կրկնեց Արութը և մտածում եր՝ «այ Սևուկ, դու նորից գժություններ ես անում, բայց կխելոքանաս, ախպերս»...

Կոլտնտեսականների հետաքրքրությունն ավելի քան մեծ եր։ Նրանք աչքերը չեյին հեռացնում ձիուց։

Նա թռչկոտում եր, մերթ հոխորտում, ինչպես փոթորիկ, մերթ մեղմանում գետի յուրի նման։

Այդ խաղերից ցնծում եյին շրջապատողները, և թվում եր նրանց, թե Արութը անզոր է ծառս լինող Սևուկի առաջ։ Հանկարծ նա ինչ-վոր շորով կապեց ձիու աչքերը, և ձին դադարեց չարաճճի խաղերից, ասես քար կարից։

Յեվ այս գործողությունն այնքան արագ և անսպասելի կերպով կատարվեց, վոր մի պահ բոլորի հետաքրքրությունը զարմանքի փոխվեց։

Մինչդեռ Արութն այնպես եր անում, վոր հետաքրքրությունն ավելի քան շարժի և բոլորին լարված պահի։ Նա հանկարծ՝ նույն արագությամբ Սևուկի վոտը բարձրացրեց. ձին տեղից չշարժվեց, ասես չմտացավ։ Յեվ Արութը սկսեց զգուշությամբ մաքրել ձիու սմբակն ու պայտել։ Ձին թպրտում եր մեկ-մեկ, բայց թվում եր, թե անզոր է Արութի հզոր ու ճարպիկ բազուկների մեջ։

Բոլորը զարմանքից ապշած դիտում եյին նրան և զարմանում Արութի հնարագիտության վրա։ Սևուկը շարժվում եր նորից, մինչդեռ Արութն իր գործն եր շարունակում, այնքան արագ, վոր ձին ասես գլխի չեր ընկնում, թե ինչ է կատարվում իր հետ։

Արութը չորրորդ սմբակն եր պայտում, յերբ ձին այնքան ուժեղ թպրտաց, վոր քիչ մնաց ազատվեր նրա ձեռքից։ Բոլորի զարմանքը վախի փոխվեց։ Սակայն Արութն այնպես ամուր բռնեց ձիու վոտը, վոր խկույն ստատեց Սևուկի քմահաճույքը։ Ձին հանգստացավ, և Արութն անցավ իր գործին։ Նորից թպրտաց ձին, Արութը նորից ստատեց նրան, և վերջապես ձին յենա-

թարկվեց, ասես զգալով իր հակառակորդի գերազանց ուժը։

Արութը, գործը վերջացրած, բաց թողեց ձիու չորրորդ վոտը և արձակեց աչքերի շորը։

— Ղոչաղ Արութ...ղոչաղ...,— թնդացին մի քանի ձայներ։

Սևուկն աչքերը բաց՝ շուրջը նայեց, նայեց զարմացած ալմուկից ականջները խլանում էին և կարծես հասկացավ, թե ինչ և պատահել իր հետ։ Վոտներին ինչ-վոր անսովոր բան եր զգում, վոր թվում եր, թե սեղմում-նեղում է անվերջ։ Ցավ նա խրխնջաց, փոթորկի նման՝ ծառս-ծառս յելնելով թնդաց...

Արութը կայծակի արագությամբ սանձեց Սևուկին և ինքն ել քամու պես թեթև, թռավ նրա մեջքին։ Ձին մի պահ քար կտրեց այդ անսպասելի և անսովոր դեպքից։

Այդ ինչ բան է, ում է գժվել, իր մեջքին նստի,— մտածեց նա ու հանկարծ սլացավ, ինչպես բազե։ Իսկ Արութն ամուր կպել եր նրա մեջքին։

Հանդիսատեսները սրտատրոփ բակից դուրս վազեցին, բայց Արութն ու Սևուկը չքացել էին։ Վոչինչ չեր յերևում հորիզոնի վրա։

Ո՞ւր գնաց, ինչ յեղավ, հարցեր, վորոնք պտըտվում էին բոլորի գլխում։

— Ա՜յ քեզ ղոչաղություն,— նկատեց մեկը։

— Ղոչաղություն ասիր ու պրծար։ մարդը ճանճի պես թռավ ու աչքերիցս կորավ,— վրա բերեց յերկրորդը։

— Ա՜յ, իսկական տղամարդ,— գովում եր յերրորդը։

— Խամ ձի յե, մի տեղ կգցի,— յենթադրում եր չորրորդը։

Այս հանգամանքը բոլորին մտահոգության մեջ եր դրել։ Սակայն ամենից շատ հուզված եր Մինասը, ասես ինչ-վոր ծանրություն եր իջել նրա ուսերին, ինչ-վոր բան ներսից սեղմում եր նրա կոկորդը, խեղդելու չափ ամուր։ «Ի՞նչ յեղավ Արութը, գուցե ձիուց ընկավ։ Արութ, Արութ...» բառերը խեղդվեցին Մինասի կոկորդում և նա հաղիվ զսպեց իրեն։

— Արութը...Արութը,— հանկարծ լսվեցին ձայներ։

Ճիշտ վոր, հորիզոնի կապույտ գծի վրա յերևաց մի ձիավոր, վոր սլանալով գալիս եր։ Կասկածը միանգամից չքացավ։

Քիչ անց, Սևուկը մոտեցավ հավաքված՝ բազմությանը, և Արութը հպարտությամբ նրա մեջքից ցած թռավ ու սանձից բռնած՝ առաջ շարժվեց։ Ձին հոգնել եր, բավական քրտնել ու խելոք-խելոք հետևում եր Արութին։

— Կեցցես, Արութ,— ձեռները զարկելով նրա ուսին՝ կանչեցին կոլտնտեսականներից վոմանք։

— Բ՜ը...Բ՜ը...,— ժպտում եր Արութն ու հետն ել ձեռք ու վոտով հասկացնում թե՝ «Սրան ենպես եր հարկավոր, կարծում եր, թե մենակ ինքն է, վոր կա»։

Մինասը, ձեռքը մտերմաբար խփեց նրա մեջքին և համբերի լեզվով հավանություն տալով՝ գովեց նրան։

Արութն անսահմանորեն սիրում եր Մինասին։ Սիրում եր այն պատճառով, վոր նա վոչ ծույլ ու անփույթ եր, վոչ ել գող ու խարդախ։ Գործին նվիրված, բարեխիղճ կոլտնտեսական եր Մինասը։ Նա յերկար ժամանակ քաղաքում գործ ունենալով մի այլ համրի

հետ՝ նրանից սովորել էր համբերի լեզվի բոլոր նրբությունները։ Ցերը նա նորից քաղաքը թողեց ու բնակություն հաստատեց գյուղում, ավելի մոտիկից ծանոթացավ Արութի հետ։

Նրանք այնքան մտերմացան, որ բոլորն էլ զարմանում էին, և յերբ Արութի լեզվի նրբությունները չէին հասկանում, Մինասն էր ոգնության գալիս։ Ցեվ զարմանալի էլ չէր, որ գյուղում խոսում էին, թե Արութը Մինասի աղջեցության տակ կոլտնտեսություն մտավ։

Շատ էր սիրում Արութը ժողովներին մասնակցել և սովորություն ուներ միշտ էլ՝ վերջին շարքերում նստել և լռությամբ ու համառորեն հետևել խոսողներին։ Թեև վոչինչ չէր լսում, բայց խոսողների շարժումներից հասկանում էր, թե ում են գովում և ում՝ պախարակում։ Նա հասկանում էր նաև, յերբ իրեն էին գովում, և այդ ժամանակ նրա ուրախությանն արգեն չափ ու սահման չէր լինում։

Հիշում էին, թե ինչպես Արութը ժողովում դուրս էր գալիս խոսելու, բայց շատ հազվադեպ, այն էլ այն ժամանակ, յերբ նա գլխի յեր ընկնում, թե վորևե անկարգության մասին էին խոսում, ճիշտ չէին մոտենում խնդրին։

— Ո՜ւ... Ո՜ւ...,—ձայն էր խնդրում նա։

Ցեվ խկուն դուրս էր գալիս խոսելու։ Խոսում էր ինչ-վոր ճիչերով, միմիկայով և բազմապիսի շարժումներով։ Ցերբեմն խոշոր բռունցքն այնպես էր ճոճում գլխավերևը, որ մարդու զարդանդն էր գալիս։ Բոլորը հասկանում էին այդ շարժումից, որ նա պախարակում է ծույլերին ու անփույթներին։

Բոլորը գիտեին նրան, գիտեին նրա քրտնաջան աշխատանքը։ Նախքան կոլտնտեսության մեջ մտնելը՝ Արութն աշխատում էր այս նրա-նրա մոտ վարձով։ Հնձում էր արտը, հարում էր խոտը և այնպիսի լայն ու կանոնավոր լասեր շարում, որ գերազանցում էր բոլորին։ Նա յեռանդով էր աշխատում և միշտ էլ մի մարդուց ավելի աշխատանք էր կատարում։

Արութը, բացի ծնողներից մնացած մի խրճիթից, վոչինչ չուներ։ Իր քրտնաջան աշխատանքով շատ բան կարող էր ձեռք բերել, բայց ում համար։ Միայնակ էր ապրում. վոչ-վոք չուներ՝ վոչ կին, վոչ յերեխա։

Արութը գառնությամբ էր հիշում անցյալի թույնը։ Նա ավելի խիստ էր զգացել հին կյանքի ծանրությունը։

— Ո՜ւ...Ո՜ւ...,—գանգատվում էր նա և ձեռներով զանազան տխուր շարժումներ անում։

Ցերևի հիշում էր իր առաջին սերը։ Այն ժամանակ դեռ յերիտասարդ էր։ Փանոսը նրան վարձել էր՝ հնձի, Արութն այնքան էր աշխատել նրա տանը, որ բոլորովին ընտելացել էր։ Հաճախ նա տեսնում էր Փանոսի ջահել աղջկան։ Մի անգամ աղջիկը Արութին ժպտաց ինչ-վոր բանի համար։ Արութը սիրտ առած մոտեցավ ու մտերմաբար ձեռք զարկեց աղջկա մեջքին, և...

Դրանից հետո յերբ, որ տանուտերը խրատեց նրան...

Արութն ազատվելով այդ փորձանքից՝ վորոշեց այլևս չսիրել վոչ վոքի։ Ամուրի կյանք էր վարում նա ու գառնությամբ հիշում անցյալը։ Ա՜խ, այդ անցյալը...

Կոլտնտեսություն մտնելով և ստանձնելով ձիապանի դերը՝ Արութը թողել էր իր խրճիթը, որը բավանի դերը՝ Արութը թողել էր իր խրճիթը, որը բավա-

կան հեռու յեր ձիերի գոմից։ Գոմի կողքին մի փոքրիկ ու հարմար տնակ կար։ Նա ապրում եր այդ տնակում, իսկ տնակի ներսը՝ մի մեծ թախտ կար, ամուր կոճղերից, վորի վրա հազար մարդ ել յեթե պառկեր, չեր փլվի։ Այդ թախտի վրա յեր անցկացնում նա գիշերները։

Ձիերին խնամելուց հետո՝ ազատ ժամանակ նա կամ հեղեղից վոդողված ճանապարհն եր նորոգում, կամ ոգնում եր կալի աշխատանքներին։ Իսկ ձմեռը՝ հաճախ ձյունածածկ ճանապարհն եր մաքրում։

Արութը սիրում եր կոլտնտեսային աշխատանքը, ջանասեր կոլտնտեսականներին, սակայն վոչ մի կերպ չեր կարողանում սիրել Փանոսին, վորը թեև վոչ ծուլ եր, վոչ ել անփույթ, բայց իր մեջ ինչ-վոր ատելի բան ուներ մանավանդ այն դեպքից հետո, յերբ նա իրեն բանտարկել տվեց։ Արութն ատում եր նրան, բայց այդ ատելությունը չեր արտահայտում, պահում եր իր հոգու խորքում։

Մի անգամ, յերբ Արութը ձիերին տանում եր աղբյուրը, պատահեց Մինասին։ Մինասը ինչ-վոր բան ասաց նրան։ Արութն ուրախացավ և համաձայնության նշան տվեց։ Հասավ աղբյուրը, ձիերին ջրեց ու յերջանիկ ժպիտը դեմքին՝ հետ դարձավ։

Ու մի որ ել Մինասը մի փոքրիկ լակոտ կրծքին սեղմած՝ յեկավ Արութի մոտ։ Արութն ուրախությամբ վերցրեց նրա ձեռքից նվերը։

Սուր դնչով և բրդոտ մարմնով այդ շնիկը հազիվ յերկու ամսական լիներ։ Նրա աչքերը փայլում եյին

սոսկ յերախտագիտության կրակով։ Նա ուշադիր նայում եր Արութի բոլոր շարժումներին և պոչը՝ շարժում մտերմաբար։

Արութը հոգատար խնամում եր շնիկին. պառկեցնում եր իր կողքին՝ թախտի վրա, վեր եր կենում նրա հետ միասին, կերակրում եր նրան հացի փափուկ պատառներով, ջուր եր խմեցնում... Սկզբում շնիկը կլանչում եր, մեկ-մեկ մոր կարոտն եր քաշում, սակայն շուտով այնքան մտերմացավ Արութին, վոր բոլորովին մոռացավ մորը։

Արութը գոհ եր Մինասից, վոր այդպիսի մի շնիկ նվիրեց իրեն և ուրախությունից հաճախ կրկնում եր՝

— Բռե...Բռե...

Բռե-բռեն գիտեր իր անունը և լավ ել ճանաչում եր տիրոջը։ Նա ճանաչում եր նաև իր տիրոջ ձիերին և յերբեք չեր հաջում նրանց վրա։ Նա ձիերին նայում եր խելոք աչքերով և հետն ել պոչը շարժում մտերմաբար։

Բռե-բռեն միշտ Արութի հետ եր լինում։ Առավոտը ծեգին, յերբ Արութը ժամանակին չեր զարթնում, մոտենում եր նրան և վերմակի մի ծայրից քաշում։

Այդ ժամանակ Արութը վեր եր կենում, գնում եր ձիերի մոտ, Բռե-բռեն ել՝ հետևից։ Նրանք յերկուսով ձիերին դուրս եյին բերում։ Յեվ յերբ Արութը ձիերին կապում եր բակում, իր սիրած ծառից ու սկսում եր մաքրել-թիմարել, շունը պառկում եր Արութից քիչ հեռու, գլուխը դնում առջևի թաթերի վրա և յերախտագիտությամբ նայում տիրոջը։

Ձիերը մաքրելու աշխատանքը վերջացնելուց հետո՝ Արութը տանում եր նրանց աղբյուրը՝ ջրի։ Շունն ել

հետևում էր տիրոջը և սովորաբար գնում էր կողքից կամ առջևից, հոտոտում անընդհատ այս ու այն կողմը, և յուրաքանչյուր հանդիպում էր ապրյուրը, կանգնում էր ու պոչը շարժում։

Արութը ձիերին ջուր էր տալիս և հաճախ էլ լողացնում ամառային որերին, իսկ շունը նստում էր այնտեղ մոտիկ և հետևում տիրոջ շարժումներին։

Գիշեր էր։ Ամպ ու դամպը ծանրացել էր յերկրի վրա։ Այնքան խավար էր, որ յեթե մարդ մեկի աչքը կոխեյիր, չէր տեսնի։ Արութը վաղուց արդեն ձիերի խնամքը տեսել էր և յեկել-պառկել էր տնակում։

Բու-բուն պառկած էր Արութի կողքին, բայց հանկարծ զարթնեց, դրսից ինչ-որ կասկածելի շչուկ լսեց։ Նա մի փոքր հաջեց, ապա լռելով՝ ականջները սրեց և ավելի ուշադրությամբ ականջ դրեց։ Շչուկը կրկնվեց, ապա ուժեղացավ և աղմուկի փոխվեց։ Շունն սկսեց հաջել և հանկարծ վեր թռավ տեղից, իջավ թախտից և զգուշությամբ դուրս յեկավ դռան անցքից, որ պատրաստել էր Արութը։

Գոմի առաջ կանգնած էր մեկը և զգուշությամբ բաց էր անում դուռը։ Յերբ նա շունը տեսավ, ղրպանից հացի կտորը հանեց և կեղծ մտերմությամբ շանը նետեց։

Սակայն, Բու-բուն այդ հացի կտորին չմոտեցավ, մինչև անգամ հոտ չքաշեց...

Մարդը շարունակում էր իր գործը։

Հանկարծ Բու-բուն աննկատելի կերպով ներս ընկավ՝ Արութին իմաց տալու։ Արութը դեռ ելի քնած և հանգիստ քնով և չէր իմանում, թե ինչ էր կատարվում դուրսը։ Շունը բռնեց տիրոջ շապկի փեշից և

սովորականից ամուր քաշեց։ Արութը վեր թռավ հրակայի պես և տեսավ, թե ինչպես շունը դուրս ցատկեց հաջելով։ Կասկածն ոձի պես գալարվեց նրա գլխում, և նա դուրս նետվեց շան հետևից։ Տեսավ, որ գոմի դուռը կրնկի վրա բաց է, և Բու-բուն դռան առաջ ծառս լինելով՝ ինչ-որ մեկին չէր թողնում, որ դուրս գա գոմից։

Արութն անմիջապես ներս ընկավ և իր դեմ-հանդիման կանգնած տեսավ մի ծանոթ դեմք։ Նա թաղիման կանգնած տեսավ մի ծանոթ դեմք։ Նա թափով վրա պրծավ, բռնեց նրա ոձիքից, վերև քաշեց և, իր սովորության համաձայն, հայացքը սևեռեց նրա աչքերին...Արդեն ճանաչեց։ Դա «կոլտնտեսական» Փանոսն էր, որ յեկել էր գողություն անելու։

Արութը բարկացած՝ Փանոսին այնպես խփեց պատին, որ ուժեղ թրմփոց լսվեց, և հետո դուրս նետեց նրան հին լաթի պես։ Ապա գոմի դուռը փակեց ու շանն հետ մտավ իր տնակը։ Այստեղ՝ նա յերկար շոյում էր իր խելոք բարեկամին։

Մյուս որը կոլտնտեսականները խոսում էին այդ դեպքի մասին (Արութը պատմել էր Մինասին) և բոլորն էլ զարմանում էին։ Գալիս էին նրա մոտ, ձեռքերով ինչ-որ շարժումներ անում՝ հասկացնելով, որ պատմի պատահած դեպքի մասին։

Արութն այդ ժամանակ ձեռքը քսում էր շան մեջքին և ներքին ուրախությունից շարունակ կրկնում էր.

— Բռ—բռ...բռ—բռ..

Ուզում էր ասել, թե՝ սա ազատեց մեր ձիերին։

Փանոսի գլուխն ուռած էր, յերբ դյուղխորհրդից յեկան և կոլտնտեսության նախագահի հետ միասին՝ Արութի ցուցմունքներով և Մինասի օգնությամբ արդ-

ձանապարհություն կազմեցին՝ գող-հանցավորին դատի տալու։ Քննությունից պարզվեց, որ Փանոսը կապունի կոլտնտեսության գույքի հափշտակիչների մի շայկայի հետ։

Արութը գազազել էր։ Նա այժմ կխեղդեր Փանոսին, եթե նա բանտարկված չլիներ։

— Ո՞վ կմտածեր, թե եսպես բան կանի. մարդն իրեն ենպես էր ցույց տալիս, թե հոգով-սրտով մեզ հետ է,— ասում էր կոլտնտեսականներից մեկը Փանոսի մասին։

— Բա ինչ. թշնամին եղպես լե. ներս է խցկվում ու կոլխոզը ներսից քանդում, բա նախկին գողլաթի տերը մեզ հետ գոհ կապրի...,—վրա յեր բերում յերկրորդը։

— Բա նա կոլխոզում պահելու բան էր...,—մեջ է մտնում մեկ ուրիշը։

— Կուլակաթափ էր արված ու իրեն էլ խեղճ-խեղճ էր պահում, ասես հոգով-սրտով մեզ հետ էր,—ավելացնում էր չորրորդը։

— Բռ-բռ...,—բացականչում էր իր հերթին Արութը։

Այդ դեպքից հետո Արութն ավելի քան զգույշ էր. ձիերից չէր բաժանվում, որ չլինի, թե մեկն ու մեկը գողանա, հետո ինչ կասեյին իր մասին։ Միանգամից նրա հեղինակությունը շատ բարձրացավ ոչ միայն կոլտնտեսության մեջ այլև ամբողջ գյուղում. բոլորն էլ խոսում եյին այդ դեպքի մասին, գովում Արութին ու նրա ուժը։

Արութը համոզված էր, որ յեթե իր սիրած Բուբուն չլիներ, ձիերը և նրանց թվում նաև ամենասիրված Սևուկն այժմ չեյին լինի, և ինքն էլ պիտի խայտառակվեր։ Նա յերբեմն հանկարծ ներսում ինչ-որ բան էր զգում, ասես անհուն կարոտ, և գորովանքով գրկում էր շանը, շոյում ու փաղաքշում։ Իսկ շունը լիզում էր նրա ձեռները սիրով և յերախտագիտությամբ։

ԶԻՆ ՄՈՍԻՆ

Արևմտյան Վրաստանի սարալանջերը ծածկված են հարուստ բուսականությամբ, իսկ դաշտերում ամառը փռվում են յեգիպտացորենի փարթամ արտերը։ Սակայն Գուբի գյուղը մի ժամանակ վոչ չով աչքի չեր ընկնում։ Հողը քիչ եր, և հաճախ մի կտոր հողի համար գյուղացիներն իրար գլուխ և ին ջարդում։ Բայց ահա, յերբ սկսվեց խորհրդային կյանքը, Գուբու ջրի ափերն իրենց տեսքը փոխեցին։ Գյուղում կոլխոզ հիմնվեց, յեկավ գյուղատնտես, հիմք դրվեց թեյի մշակությանն և, ասես հողը փարթամացավ, կյանքը փոխեց իր նախկին տեսքը։

Գուբու կոլտնտեսականների մեջ մի յերիտասարդ կա, վորը նման չե մյուսներին։ Թեև նա հագնում ե սովորական շորեր, բայց նրա մանրիկ աչքերը, դեղին մորթն ու դուրս ցցված այտերը մոնղոլական ցեղն են հիշեցնում։ Կոլտնտեսականները նրան «Չին Մոսի» յեն կոչում։ Նա արդեն վարժվել ե կոլեկտիվ աշխատանքին, և դեմքը փայլում ե գոհունակությունից։

Չին Մոսին, վորի մատները յերկար ընդմիջումից հետո կարոտով կպան թեյի նուրբ ու փայլուն տերևներին, որեր և հաճախ գիշերներ անց ե կացնում տընկարաններում։

Բոլորը հիշում են, թե ինչպես մի որ նա դիմեց իրենց.

— Ինձ էլ ընդունեք ձեր կոլտնտեսությունը. թեյի գործը լավ գիտեմ, — ասաց նա անվստահ ձայնով։

Այդ յերիտասարդի իսկական անունը Մոս Զին-Ցին եր. նա, բացի իր սեփական ձեռներից, վոչինչ չուներ — վոչ հող, վոչ անասուն, վոչ սերմացու և վոչ էլ տուն ու տեղ։ Հարց ու փորձ անելուց հետո նրան ընդունեցին կոլտնտեսության մեջ։ Ո՞վ եր նա։

— Մեր տեղերն է, աշխատավոր չինացի...

— Ցեկել է մեր յերկիրը յերջանիկ կյանք վորոնելու, — ասում եյին կոլտնտեսականները՝ իրենց հարազատը համարելով նրան։

Նա յեկավ հեռու յերկրից և ամբողջ յեռանդով կպավ իր սիրած-փայփայած գործին։ Աշխատանքի ընթացքում յերբեմն նրա մտքերը թռչում եյին հեռուհեռու։ Ցեվ նա հիշում եր իր հայրենի տունը հեռավոր Չինաստանում, իր և հարազատների կրած դառնությունները։ Հիշում եր հեռավոր տնկարանները, վորտեղ մի ժամանակ աշխատում եյին իրենք ու մի կերպ քաշ տալիս իրենց գոյությունը։ Ե՜, ինչ ապրուստ եր.. կիսամերկ ու վոտաբոբիկ, որական մի ամսան եժանագին ըրինձ, ճակնդեղ կամ կաղամբ։ Շատ անգամ, յերբ հավաքվում եյին տանը և նստում փոքրիկ ճրագով լուսավորված սեղանի շուրջը ճաշելու, Մոս Զին-Ցինի յեղբայրը վոգեվորված խոսում եր Խորհուրդների Ցերկրի մասին, պատմում աղատագրված բանվորների և գյուղացիների կյանքից, և մյուսները լարված ուշադրությամբ լսում եյին։

«Ա՜խ, ինչ յերջանիկ են նրանք», — մտածում եր

փոքրիկ Մոս Զին-Ցինը։ Իսկ հայրը տարված այդ պատմություններով՝ հանկարծ բացականչում եր.

— Եյ՜-հեյ, աշխարհ, յիրը մենք էլ կապրենք նրանց պես։

— Շուտով, շատ շուտով, հայրիկ, — պատասխանում եր Մոս Զին-Ցինի յեղբայրը։

Ցեվ մի որ թեյի տնկարաններում բանվորները գործը թողին, վորովհետև աշխատավարձը նորից կըրճատել եյին ու բանվորական որը յերկարացրել։ Տնկարանի տերը գործադուլը ճնշեց զորքի միջոցով։ Անգեն՝ գործադուլավորների վրա կրակ բացին, և շատ-շատերը թափվեցին հնձած հասկերի նման։

Այդ որը Մոս Զին-Ցինի քույրն ու յեղբայրը տուն չվերադարձան։ Քույրն ընկավ գործադուլի ժամանակ, յեղբայրը, վորպես գործադուլի կազմակերպիչ, բանտարկվեց և հայտնի չե, թե ուր է գտնվում այժմ, իսկ հայրը, վոր ծանր վերք եր ստացել, ազատված ընկերների ոգնությամբ մի կերպ տուն հասավ։

Այդ գիշերը լաց ու շիվան եր նրանց տանը։ Պառկած եր հայրը և տաքության մեջ զառանցում եր շարունակ։ Գնալով հիվանդի դրությունը ծանրացավ։ Իսկ մի գիշեր նա շատ վատ զգաց իրեն։ Ուժերը հավաքելով վերջին անգամ աչքերը բացեց և մի կերպ ասաց Մոս Զին-Ցինին.

— Լսիր, զավակս, յես մեռնում եմ։ Վատ անցավ իմ կյանքը, չափազանց վատ։ Գոնե դուք լավ որ տեսնեք, ինչպես ապրում են մարդիկ Խորհրդային Ցերկրում։

Ցեվ հավիտյան փակվեցին նրա աչքերը։

Քաղցից ու վշտից հյուծված մայրն էլ մահացավ։

Ցեվ Մոս Զին-Ցինի սիրտը վառվեց, ու նա ասեց բոլոր նրանց, վորոնք ծծեցին իրենց արյունը։

«Ա՜խ, ինչ լավ է սովետը, այնտեղ տերեր չկան»,— անվերջ մտածում եր Մոս Զին-Ցինը։

Կոլտնտեսության մեջ Մոս Զին-Ցինը գտավ այն, ինչ վոր վաղուց եր փնտռում։ Նա տեսավ ունեվոր և յերջանիկ կյանքի բոլոր ուղիները։ Այդ եր պատճառը, վոր թեյի թփերը ժպտում եյին նրան, մկանների մեջ զգում եր անսահման ուժ, և աշխատանքը նրան թեռավորում—առաջ եր մղում։

Ցեվ նա շուտով ցույց տվեց իր արվեստը։ Նայում եր թեյի ամեն մի թփին ու խնամում, ինչպես իր աչքի լույսը։ Վոչ վոք նրա ճարպկությամբ ու վորակով չեր կարողանում հավասել թեյի նրբին տերևները։ Ցեվ նա չեր ծածկում իր արվեստի գաղտնիքը, ինչպես սովորություն կա Զինաստանում, վորտեղ աշխատանքի ամեն մի լավագույն փորձ պապից անցնում է միայն վորդուն ու թոռներին։ Ամենայն հոգատարությամբ նա սովորեցնում եր կոլտնտեսականներին, թե ինչպես պետք է քաղել թեյը, վոր վոչ թուփը տուժի, վոչ էլ տերևը։

Կարճ ժամանակում Զին Մոսին իր աշխորի դիմաց այնքան փող ստացավ, վոր մի տնակ կառուցեց իր համար, և ինքն էլ սկսեց մաքուր հագնվել։ Նա, վոր իր ծննդավայրում միայն չարքաշ կյանք, զրկանքներ ու շահագործում եր տեսել, Խորհրդային Ցերկրում գտավ իր յերջանիկ կյանքը։ Ու նրա սրտում ստեղծվեց ընտանիք կազմելու անսահման ցանկություն։

Առաջին անգամ, յերբ Զին Մոսին մոտեցավ և սկսեց սովորեցնել տերևաքաղի նրբությունները, Մարոն ամաչկոտ նայեց նրան, նույնիսկ նրա ձայնն իրեն անծանոթ թվաց։ Մարոն վորբ աղջիկ եր, հորը բոլորովին չեր հիշում, ուներ պառավ մայր և մի յեղբայր, վորը նույնպես կոլտնտեսության մեջ եր աշխատում։

Անցավ ժամանակ, և նրանք մտերմացան։ Յերբ Զին Մոսին ցուցումներ եր տալիս, Մարոն հափշտակված լսում եր, ինչպես մյուսները, և մի ներքին համակրանք եր զգում միջահասակ, մանրիկ ու խելացի աչքերով յերիտասարդի հանդեպ։ Զին Մոսին էլ իր հերթին համակրում եր նրան։ յերբ ազատ ժամանակ թիկնում եր սպիտակ մահճակալի վրա ու բաց պատուհանից նայում դուրսը, նա զգում եր, թե ինչպես դուրեկան մի հոսանք հորդում է յերակների մեջ, և Մարոյի աչքերը ժպտում եյին շարունակ։ Ինչքան լավն է Մարոն...

Ցեվ մի յերեկո, յերբ աշխատանքը վերջացրին, Զին Մոսին Մարոյին հանդիպեց մենակ։ Նա մի անդուսպ ցանկություն զգաց նրա հետ նորից խոսելու։

— Մարո՜...,—ասաց Զին Մոսին՝ մոտենալով նրան։

Պատասխանելու փոխարեն աղջիկը լուռ նայեց նրան։ Հայացքները հանդիպեցին իրար, և դուրեկան մի դող պարուրեց յերկուսին։ Ցերկնքում լուսնյակ չկար, վոչ էլ դաշտում քամի։

Ցերկար զրկախառնվելուց հետո՝ աղջիկը հանկարծ դուրս թռավ Զին Մոսու զրկից և ասաց.

— Կտեսնեն, լավ չե՜...

Մի շաբաթից հետո կոլտնտեսականներն արդեն խոսում էին այդ գեղքի մասին։ Վոմանք նույնիսկ շնորհավորեցին նորաղուլգին։ Չին Մոսին ժպտաց, իսկ Մարոն գլուխը կախեց։ Կանայք Մարոյին բարկացնելու համար մեկ-մեկ կատակում էին.

— Ա՜յ, թե ինչու պակ չեր գալիս նրանից...

— Ինչու պակ գար, յերբ եգիպտի յերիտասարդի հետ եր. տղա՛ջ, ջանասեր, բան ու գործ հասկացող...

— Դե լավ, ինչ եք ուզում, աղջի,—ամաչելով պատասխանում եր Մարոն և աշխատում եր խուսափել նրանցից։

— Լավ փեսա՞ ճարեցիր, Վարդեն,—ծիծաղելով դիմում էին Մարոյի յեղբորը։

— Մեր կոլխոզի փեսեն է. աղջիկն էլ է կոլխոզինը, փեսեն էլ...—կատակում եր մի ուրիշը։

— Ճիշտ վոր լավ փեսա յե,—ասում եր Վարդենը։

Յերիտասարդ եր Վարդենը, յեռանդուն ու ջանասեր կոլտնտեսական։ Նրա հիշողությունից դեռ չեյին ջնջվել այն գրկանքները, վոր անցյալում գրվել էին արյան շիթերով։ Նա հիշում եր իր անճար մանկությունը, յերբ գրկվեց հորից։ Մայրն ունեցած-չունեցածը ծախեց թաղման ծիսակատարության համար։ Յեվ ա՛հա, իրենք՝ ինքը ծծկեր Մարոն ու իր մայրը՝ մնացին չոր տափին։ Ինքը տասնհինգ տարեկան մի պատանի յեր, յերբ անողոք կյանքը մտավ։ Շատ անգամ անքուն գիշերներ անցկացրեց Պավլեյի մոտ. սկզբում նրա հոտաղն եր և ապա, յերբ մեծացավ ու ցավ դաշտային աշխատանքի։ Հնձում եր արտը, խոտը հարում և շարում եր այնպիսի կանոնավոր լասեր, վոր ասես մի փորձված հնձվոր լիներ։ Յեվ այսպես ամբողջ ժամանակ արյուն-քրտինք եր թափում ու մի կերպ ծայրը ծայրին հասցնում։ Ա՜խ, այդ կյանքը... Ինչպես չհիշի այն դառնությամբ, յերբ միայն դառնություն տեսավ...Ինքը դեռ Պավլեյի մոտ եր, վոր սիրեց նրա յերիտասարդ աղջկան. Պավլեն շուտով նկատեց Վարդենի վերաբերմունքը։ Յեվ տանուտերը մի այնպիսի դաս տվեց Վարդենին, վոր էլ մյուս անգամ նման բան չանի, իր դիմացինին լավ ճանաչի։ Դրանից հետո արդեն Վարդենն այլևս Պավլեյի մոտ չեր կարող մնալ և սկսեց սրա նրա մոտ աշխատել ու մի կերպ գոյությունը պահպանել, մինչև վոր նոր արև ժպտաց, հին անուրախ աշխարհին։

Վարդենը, Չին Մոսուն պատմեց իր գլխով անցածը։ Չին Մոսին խորասուզվեց մտքի ծովը. նա նորից հիշեց իր անցած կյանքը, և յերկու ընկերներն իրար հասկացան, թե իրենք վորտեղից եյին գալիս և ուր են գնում, ու համակրեցին իրար, ինչպես մանկության հավասարիմ ընկերներ։ Վարդենը վոչինչ չեր խնայում Չին Մոսու համար, ինչպես ինքը՝ Չին Մոսին՝ Վարդենի համար։ Պատմում եր Վարդենը նոր կյանքի և աշխատանքի մասին, թերթ եր կարդում, և Չին Մոսին լսում եր մեծ հետաքրքրությամբ, ու մի յերջանիկ ժպիտ խաղում եր նրա դեմքին։

«Կյանքը լավ է, յերջանիկ»,—մտածում եր Չին Մոսին, և յեռանդը խաղում եր նրա բազուկներում։ Վոչինչ չեր խնայում նա կոլտնտեսության համար. կոլտնտեսությունն էլ սիրում եր Չին Մոսուն։ Յեվ ա՛հա, նրան պարգևատրեցին ու թերթում էլ նկարեցին։

Զին Մոսին չէր սիրում անփույթ ու կեղծ աշխատողին, ինչպիսին էր Պավլեն. յերբեմն նրա սիրտը գալարվում էր ցավից, յերբ նայում էր Պավլեյի քաղաք թեյի թփերին։ Ամեն անգամ զգուշացնում էր նրան և թվում էր, թե Պավլեն դիտմամբ է այդպես անում, վոր ջնասի կոլտնտեսությանը։ Այ, թե ինչու չէր սիրում Պավլեյին։

Մի որ Զին Մոսին ցույց տվեց Վարդենին մի շարք թփեր, վոր քաղել էր Պավլեն։ Ցույց տվեց՝ թփերին անփույթ քաղելուց մնացած տերևի հետքերը և դանդաղավեց սրտի կսկիծով։ «Դիտմամբ է անում»—մտածեց Վարդենը և Պավլեյի հարցը քննության դրեց։ Պավլեյին խիստ նկատողություն արին վերջին նախազգուշացումով։

Սրանից հետո յեր, վոր Պավլեն սրտի խորքում ատեց Զին Մոսուն, ինչպես ատում էր Վարդենին։ Ատելությունն ավելի քան սատկացավ նրա մեջ, յերբ Զին Մոսուն բրիգադիր նշանակեցին, վորի աչքը միշտ իր վրա յեր, հետևում էր, թե ինչպես է աշխատում ինքը։

———

Զին Մոսին իր ամուսնության առթիվ մի համեստ խնջույք կազմակերպեց, հրավիրեց ընկերներին և ուրախ ժամանակ անցկացրին։ Բաժակ-բաժակի խփելով՝ ընկերները շնորհավորեցին նորապսակ զույգին։

Մյուս որը, յերբ Զին Մոսին վեր կացավ անսահման յեռանդով ու անցավ տնկարանները, նկատեց, թե ինչպես թեյի յերեք թուփը դանակով մաշկահան է արված։ Զարմանքը մեծ յեղավ անսպասելի դեպքից։

Մի պահ նրան թվաց, թե ինքն էր մաշկահան յեղած, այնքան ցավ պատճառեց այդ դեպքը նրան։ Ցեվ նա յուրահատուկ ձևերով այդ մասին պատմեց Վարդենին։ Բոլորն իմացան, և դալիս-նայում եյին ջնասված թփերին ու ափսոսալով գլուխները շարժում։

«Ո՞վ պետք է աներ...» Ամեն մեկն իր կարծիքն էր հայտնում։ Վոմանք դրսի մարդկանց եյին մեղադրում, իսկ Զին Մոսին ու Վարդենը կասկածում եյին Պավլեյի վրա, սակայն ապացուցելու փաստ չունենալով՝ մտքում եյին պահում այն և աչքը չորս արած՝ հետևում եյին նրան, վոր հենց հանցանքի տեղում բռնեն։

Զին Մոսին ամեն կերպ խնամեց վնասված թփերը, ինչպես մայրն իր վորդուն, ամեն միջոց գործ դրեց նրանց առողջացման վրա, սակայն գնալով թփերի սաղարթները թառամեցին ու կուչ յեկան։

Մի որ, յերեկոյան դեմ, յերբ դեռևս վարժ մատները շոյում եյին թեյի թփերն ու տերև հավաքում, ոդը միանգամից ծանրացավ, խոնավացավ, և անձրևի պես բարձրացան յերկնքում։ Մթնեց։ Ապա վորոտը ճայթեց և շուտով անձրև տեղաց։ Աշխատանքը դադարեց, և բոլորը քաշվեցին իրենց տները։

Առավոտյան շատ վաղ, յերբ Զին Մոսին վեր կացավ տեղից, անձրևն արդեն կտրվել էր, ծառախուզն էլ քաշվել։ Նա իր սովորության համաձայն, դուրս յեկավ տնակից՝ տնկարաններին նայելու։ Սակայն մի քանի քայլ էր արել, յերբ մի բան նրա ուշադրությունը գրավեց։ Ճանապարհին յերկու վոտքի հետք նկատեց. նշանակում է, մի մարդ է անցել այդտեղով։

«Ո՞վ պետք է լիներ ես անձրևին», մտածում էր Զին Մոսին և առաջ էր քայլում։ Ու զարմացավ, յերբ տեսավ, վոր հետքը տնկարանների կողմից էր գալիս։ Կասկածն աճեց նրա սրտում, և նա իր նկատած հետքերով գնաց։ Անցավ բավական տարածություն, կանաչուտներում հետքը կորավ, բայց շուտով նորից յերևաց։ Այդ հետքով նա հասավ կոլտնտեսական Պարսամի տնակին, բայց հետքը բակը չէր մտնում։ Այնտեղից դդուշությամբ շեղվում էր և անց...

Կասկածն ավելի քան աճեց Զին Մոսու սրտում, և նա անմիջապես հետ դարձավ, շտապեց թեյի տնկարանները։ Սիրտը կծիկ-կծիկ յեղավ, յերբ տեսավ թափթըփված թփերը։ Հանկարծ արյունը գլուխը տվեց, և նա գրեթե վազելով, գնաց հասավ Վարդենի մոտ։ Վարդենն արդեն վոտի վրա յեր։ Յերբ նա Զին Մոսուն տեսավ այդ վիճակում, թվաց, թե ինչ-վոր դժբախտություն էր պատահել նրան։

— Ի՞նչ է յեղել,—ասաց Վարդենն այնպիսի ձայնով, վորի մեջ և՛ վախ կար, և՛ հարցում։

Զին Մոսին շնչակտուր էր յեղել և կցկտուր բառերով հազիվ պատմեց յեղելությունը։

— Պավլեն,—բացականչեց Վարդենը, յերբ տեղեկացավ յեղելությանը. այդ մի բառի մեջ կար այն ատելությունը, վոր նրա սրտում ամբարվել էր տարիներ շարունակ։

Այդ դեպքի վրա հավաքվեցին կոլտնտեսականները, նրանց հետ նաև Պարսամը, և բոլորը հուզվել էին։ Յերբ Զին Մոսու հետախուզման մասին Վարդենը պատմեց կոլտնտեսականներին, Պարսամը մտախոհ լսեց և

հանկարծ ասես ինչ-վոր բան հիշելով՝ բացականչեց.

— Տղերք, հենց դա յե՛ վոր կա...

Ու պատմեց, թե ինչպես դեռ լույսը չբացված, շունը, վոր կապել էր կապը, հանկարծ հարձակում է գործել ինչ-վոր մեկի վրա, վոր պատառ-պատառ անի։ Անծանոթը լուռ սպառնացել է։ Ինքը վեր է թռել տեղից՝ կարծելով, թե գող է յեկել։ Յեվ տեսել է, թե ինչպես մեկը սավերի նման անցել է բակի մոտով՝ շան կատաղի հաչոցների տակ։

Զին Մոսին ամենից ավելի յեր հուզված. նրա հոնքերը խոժոռել էին, դեմքի մկանները ձգվել։ Խորին ատելությունը լեռնանում էր նրա սրտում։ Ինչու՞ այդպես արեց Պավլեն։ Յեվ նա մտախոհ կռացավ. սրտի մըրմունջով գետնից վերցրեց կորված թփերից մեկը, նայեց նրա փայլուն տերևներին, վոր դեռ թարմ էին, շոշափեց իր սահուն մատներով, նույնիսկ շոյեց ու գուրգուրեց, և ապա ձեռքից վայր ձգեց...

Յերբ Պավլեյին դուրս բերին տանից, նկատեցին, վոր սփրթնել էր աշնան տերևի նման։ Քննությունից պարզվեց, վոր թեյի թփերը նա յե՛ կտրել՝ կոլտնտեսությանը վնաս տալու համար։

Նրան հեռացրին կոլտնտեսությունից և դատի տվին։

———

ԸՆԿԵՐՈՋՍ ՀՈՒՇԱՏԵՏՐԻՑ

Որերը տարիների պես յերկար եյին թվում։ Ամբողջ յերազանքս այն եր, թե յերբ ե գալու այն յերջանիկ որը, վոր յես կարմիր բանակայինի շորեր հագած, հրացանն ուսիս՝ մտնեմ մարտական շարքերը։

Մի որ ել տեղեկություն ստացա, վոր զինակոչի ժամանակը մոտեցել ե։ Ասենք այդ մասին յես ավելի վաղ գիտեյի, չե՞ վոր թերթ եմ կարդում։

Հայրս իսկույն գնաց գյուղխորհուրդ, կոլտնտեսության վարչություն, և ամեն տեղ տեղեկանք տվին, վոր նա խորհրդային քաղաքացի յե, կոլեկտիվի անդամ, սոցիալիստական դաշտերի հերոս։ Այդ տեղեկանքներն անհրաժեշտ եյին, վորպեսզի Կարմիր Բանակը չմերժի ինձ։ Չե՞ վոր սոցիալիզմի պաշտպան բանակին հարկավոր են խորհրդային մարդիկ, կուսակցությանն ու իշխանությանն անձնվեր մարդիկ, հոգեպես և մարմնապես առողջ մարդիկ։

Յես կոմյերիտական եմ, պարապում եմ մարմնամարզությամբ, սովորեցնում եմ ուրիշներին ել։ Ինձ նման են վարվում շատ ու շատ կոմյերիտներ։

Յերբ ներկայացա բժշկական քննության, այնտեղ բժիշկների մոտ հաճախ լսում եյի.

— Առողջ ե։

— Կարիք չկա քննելու։

Ատամներով քար կարող ե փշրել։

Ստուգումից հետո պատշգամբում կային միայն մի քանի տխուր դեմքեր։ Այդ յերիտասարդներին մերժել եյին՝ հիվանդ և թուլակազմ լինելու պատճառով։

Ցեռ չեմ տեսել անցյալը։ Դրա մասին գրքերից ու մարդկանցից եմ իմացել։ Թեև չեմ տեսել, սակայն շատ լավ գիտեմ, թե ինչ եր մտածում աշխատավոր մարդն անցյալում և ինչ զգացումներով եր սալդատ գնում։

Դրա մասին մտածելիս՝ միշտ ել հիշում եմ հորս պատմությունը։

Հայրս վոր ծնվել ե, պապս մտածել ե. «դեռ չեմ կնքի, թող յերեք տարեկան դառնա, հետո... սալդաթության հերթն ուշ կհասնի։ Գուցե շուտով ել կործանվի ես անիծած թագավորի իշխանությունը»։

Հայրս մեծացել ե։ Նրան հետևել են քույր ու յեղբայրներ։ Ցեվ պապս այս անգամ մտածել ե. «ավագ վորդի յե, գուցե չտանեն»։

— Ո՞վ ե նայում...կտանեն,—ասել են պապիս։

Հայրս մեծացել, քսան տարեկան ե դառել։ Մոտեցել ե նրա զինվոր գնալու ժամանակը։ Պապիս ընտանիքն ընկել ե սգի մեջ։ Խոսակցությունը միայն զինվորություն անելու մասին ե յեղել։ Պապս զանգատվել ե, թե ինչ պետք ե լինի իր բազմամարդ ընտանիքի վիճակը, յեթե խնամատար վորդին յերեք ուկես տարով սալդաթ գնա...

Ցեվ պապս նախ գնացել ե տանուտերի մոտ, ապա՝ նահանգապետի ու զինվորական բժշկի։ Խնդրագրեր ե տվել, անվերջ խնդրագրեր, աղաչանք ու պաղատանք, հետն ել՝ կաշառք։ Կաշառք են վերցրել թե տանուտերը, թե բժիշկը, թե նահանգապետը։ Կաշառք ե վերցրել նույնիսկ հասարակ զինապանը, վորը խնդրատուին ներս ե թողել նահանգապետի մոտ։ Մի խոսքով յեղները ծախվել են, և փողը կաշառք ե բաժանվել սրանները։

Զորահավաքից առաջ հայրս մի ամբողջ շաբաթ բան չի կերել. ջուր ե խմել միայն, քիչ ել միրգ կերել վրայից։ Իսկ վերջին գիշերը նա դեղատան վարիչի հրահանգով՝ սիրտն արագ բաբախեցնող դեղ ե խմել և մյուս որն առավոտյան գունաթափ, ինչպես մոխիր, գնացել ե ստուգման։

Բժիշկը, վոր արդեն ստացել եր կաշառքը, ստուգել ե հաղիվ վոտքի վրա կանգնած հորս։ Ցեվ ինչ...

— Պետքական ե,—կարճ հայտարարել ե նա։

«Գնդակ վոր կպչեր, ենպես չեր ցավի»,—ասում ե հայրս։ Նա հաղիվ-հաղ ե դուրս յեկել ստուգման սենյակից։

— Այ տղա, ինչ արիր, վոնց յեղավ,—հարցրել ե պապս։

— Պետքական դուրս բերին... տանում են...

Ցեվ ամեն ինչ վերջացել ե։ Պապս յեղները վաճառելուց հետո՝ մնացել ե անճար ու անհաց, իսկ հայրս մտել ե թագավորի բերդը, բթացնող ու մեռցնող բերդը՝ զորանոցը՝ յերեսի վրա թողնելով տուն ու տեղ, ինչպես նաև ծերացած ծնողներին։

— Հայրիկ, ինչ եյիք անում թագավորի բանակում,—մի որ հետաքրքրվեցի յես։

— Սովորում եյինք, վորդի, սովորում եյինք, թե ինչ է թագավորի անունը, նրա կնկա ու աղջիկների անուններին, նրանց կենսագրությունն եյինք սովորում և եսպես հազար ու մի զիբիլ...

— Բա չե՞ք սովորել, վոր նրանք ազրուկների պես ծծում եյին միլիոնների արյունը, իսկ դուք՝ նրանց գերիներդ՝ ձեր յեղբայրների արյունն եյիք թափում, վոր այդ ազրուկներն ավելի լավ քամեյին ձեր հայրերին, յեղբայրներին ու քույրերին։

— Վռնց չե՞ զլխներիս գելի ավետարան ելին կարդում, թե եսենց-ենենց պետք է լինեք, «պետք է կրռվեք թագավորի ու հայրենիքի համար, վոր թշնամիները չգան վոչնչացնեն մեզ, այլ մենք գնանք, ջընջենք նրանց, վոր մեր թագավորությունն ամուր լինի ու հաստատ»։ Մենք էլ հավատում եյինք ու յերդում.

Ցերդվյալ սալդատ չե՞մ միքե,
Ուր կմեռնեմ, չգիտեմ...

Յեվ հայրս պատմեց, թե ինչպես ինքը սալդատ է գնացել ռուսերենից բորիկ և միայն հայհոյել է իմացել այդ լեզվով։ Բանակում ունեցել են չոռած աչքերով մի սպա, վոր միշտ հարցնելիս է յեղել թագավորի անունը, նրա մոր, կնոջ ու յերեխաների անունները... Մի անգամ էլ նա բռնում է հորս ոձիքից ու մեկ առ մեկ հարցնում այդ բոլորը։ Հայրս ամեն ինչ պատասխանում է, բայց թագավորի մի աղջկա անունը մոռացած է լինում։ Սպան ճիպոտի հինգ հարված է հասցնում հորս, սակայն դարձյալ բաց չի թողնում և շարունակում է իր այդ կարգի հարցումները, մինչև վոր չափն անցնում է։ Հայրս բարկությունից ամեն բան մոռանալով՝ սպային հայհոյում է հայերեն։ Սպան իր հերթին բարկանում է, թե վռնց հայրս համարձակվել է հայերեն՝ «այդ շան լեզվով» խոսել։ Յեվ տանում-բերում, այնպես է խփում հորս ճակատին, վոր խեղճի աչքերը մթնում են...Հայրս ուշաթափ ընկնում է ցած, ճակատն արնոտվում է։ Մինչև հիմա էլ պարզ յերևում է սպայի հարվածից առաջացած սպին՝ հորս ճակատի վրա։

— Ա՜յ, եսենց յեղավ իմ սալդաթությունը,—վերջացրեց հայրս իր պատմությունը։

— Հիմա արդեն ուրիշ է. հիմա դուք գիտեք, թե ինչու յեք բանակ գնում և ում համար։ Դուք մեր որերի յերջանիկ զավակներն եք։ Մենք ծնվել ենք դառնությամբ ու դառնություն էլ տեսել, իսկ դուք սնվում եք քաղցրությամբ ու քաղցրություն է ձեր տեսածը։ Ա՜յ, ես է կյանքը, իսկական, յերջանիկ կյանքը։

—

Այժմ ամբողջ յերկրում ժպտում է խորհրդային արևը, ժպտում և անսահման սիրով փայփայում է մեզ, արևի հուրհուրան շողերի տակ փթթում են ծաղիկները։ Իմ կյանքն էլ է փթթում այդ ծաղիկների նման։ Յես չեմ տեսել յերեկը բայց շատ բաներ եմ կարդացել ու լսել այդ դառն յերեկվա մասին։ Յես աճել եմ ու բարձրացել մեր նոր կյանքի հետ, յես տեսել եմ կենսախինդ նորը, և դա յե ներծծվել իմ մեջ։

Յես Կարմիր Բանակ եմ գնում և հորս դառնաթա-

խիզ պատմությունը լցնում և սիրտս մարտական հույզերով ու ապրումներով։ Ցեղս հազարների հետ բանակ եմ գնում, Կարմիր Բանակ, վոր սովորեմ ռազմի բարձր արվեստը։

Հնորյա յերգի փոխարեն՝ յես յերգում եմ.
Կարմիր բանակ՝ վառ արեվ,
Լույսի դու ծո՛վ ես դառել,
Աբքուն պահակ, իմ սրտում
Մարտի հույզե՞ր ես վառել։

ՍԵՎԻԼՄԻՇ ԴԱՅԻ

Այսպես են կոչում նրան՝ լեռնաշխարհի յերգչին։ Նրա անկենդան աչքերը մեղմ յերերվում են և դեմքից կախվում է բերկրանքի մի ժպիտ։ Ապրում է նա այժմ կյանքի քաղցրություններով, ինչպես յերկարատև յերաշտից կծղած արտերը զուլալ անձրևից հետո։

Ծեր չե Սևիլմիշ դային, սակայն անցյալի դառնությունները վաղուց ակոսել են նրա դեմքը և մազերն արծաթել։ Շատ փորձանքներ են անցել նրա գլխով՝ նա էլ շատերի պես զգացել է կյանքի ծանրությունը։

— Եյ-հեյ, աշխարհ, անիրավ աշխարհ, մեկին քինդ եյիր տալիս, հազար ու մեկին վիշտ ու զրկանք։ Ցեսկյանք չտեսա, ինձ արև չժպտաց,—ասում է Սևիլմիշ դային, յերբ հիշում է անցյալը։

Նրան բրիգադից բրիգադ են տանում, և նա ամեն տեղ յերգում է ու նվագում։ Գովում է ազնիվ աշխատողին, բարեխիղճ կոլտնտեսականին և պախարակում ծուլին, թուլամորթին։ (Թեև նա չի տեսնում, բայց ապրում է նոր կյանքով, մասնակցում է ժողովներին, զգում է ամեն ինչ)։ Ապա ընդհանրացումներ է կատարում, յերգում է նոր կյանքը, գովում՝ ու փառաբանում է աշխատանքը։ Այդ է պատճառը, վոր նրան սիրում են կոլտնտեսության մեջ, նրա անունը գիտեն շրջակա գյուղերում։

— Սաղ ու, Սեիլմիշ դայի, սաղ ու՛, ա՛յ, ինչ ենք ասել քեզ պես յերգչին...—բացականչում են կոլտնտեսականները, յերբ լսում են նրա հուզիչ յերգերը։

Սեիլմիշ դային ասես ուշադրություն չի դարձնում նման խոսքերին (վորովհետև հաճախ ե լսում այդպիսի գովասանքներ) և շարունակում ե իր գործը։

Շատերը ճանաչում են նրան մանկությունից, գիտեն նրա յերիտասարդությունը։ Կար ժամանակ, վոր նա ել ընտանիք ուներ, կին ու յերեխա։ Առավոտից յերեկո արյուն քրտինք եյին թափում. ինքը մի կողմից, կինը՝ մյուս կողմից, ու մի կերպ ծայրը ծայրին հացնում-ապրում եյին։ Ե՜, ինչ ապրուստ եր վոր...պապենական մի խրճիթ ուներ, մի թիզ հող և մի հատիկ ել՝ յեզ։ Նա գտնում եր իր նման մի զյուղացու, յեզները միացնում եյին իրար, զույգ կազմում և հերթով վարում իրենց հողերը։ Իսկ ազատ ժամանակ՝ նա միշտ աշխատում եր սրա-նրա մոտ, քանի վոր հույսը մի թիզ հողի վրա դնել չեր լինի։

Սեիլմիշ դային, ինչպես այժմ, յերիտասարդ ժամանակ ել մի սազ ուներ և ազատ ժամանակ յերբեմն նվագում եր այդ սազը, հետը ձայնակցում, և նրա յերգը միշտ ել հուզում եր լսողին, համակում եր թրթռուն յելևեջներով։ Այդ սազն անցել եր պապից իր հորը, հորից ել՝ իրեն։ Այսպես եր ճանաչված նրանց ընտանիքը լեռնաշխարհում։

Աշնանադեմին, յերբ հարվածային նորակոչիկները կոլտնտեսությունից բանակ եյին գնում, Սեիլմիշ դային նրանց համար յերգ հորինեց ու յերգեց յուրահատուկ քաղցրությամբ։ Նրա յերգն այնքան զմայլիչ եր ու վոգևորող, վոր նորակոչիկներից վոմանք բացականչեցին.

— Ջա՛ն, ջա՛ն, Սեիլմիշ դայի՛...

— Ձեր հոգուն մեռնեմ, տղերք ջա՛ն, ես յերգը ձեզ եմ նվիրում, գնացեք ու սովորեք ռազմի գործը, սովորեք, վոր վոչ-վոք սիրա չանի մեր դեմ դուրս գալ, վոր մեր արևը միշտ վառ մնա։ Դուք ուրախ եք ու յերջանիկ, ձեզ կյանքն ե ժպտում, սովետի արևը, դուք աճում եք նոր կյանքի հետ, իսկ յես...յես..

Սեիլմիշ դային մի պահ կանգ առավ, ներսից ինչ վոր բան կոկորդն եր սեղմում, ասես ուզում եր խեղդել։ Այդ հորդառատ զգացմունքներն եյին, վոր ուզում եր, բայց չեր կարողանում արտահայտել։ Զգացմունքներ, վոր վաղուց դառնությունից կուտակվել եյին նրա սրտում։ Յեվ նա հիշում եր իր գլխով անցածը։ Մեծ պատերազմին եր, վոր շատերի նման իրեն ել կռիվ տարան։ Թողեց տունն ու տեղը, կինն ու յերեխան սոված ու անտեր, և կռվեց ուրիշների համար։ Գնաց աչքի զույգ արևով, բայց վերադարձավ առանց լույսի։ Շատ ժամանակ եր անցել նրա գնալու որից, և յերբ նա հետ դարձավ, տանը վոչ վոքի չտեսավ. վոչ կինն եր մնացել, վոչ ել յերեխան։ Ինչպես հետագայում իմացավ, կինը հալ ու մաշ եր յեղել և մի որ ել հանգել եր ճրագի պես։ Իսկ իր յերկու աղաների մասին լուր չուներ. մեռե՞լ եյին թե կորել...Յեվ նա սկսեց թափառել տնից տուն, գյուղից գյուղ, յերգել ու նվագել, զանգատվել իր դժբախտ կյանքից...

— Հը՞, Սեիլմիշ դայի, ինչու տխրեցիր,—դիմեցին նրան նորակոչիկները, վոր լուռ լսում եյին իրենց սիրած յերգչին։

Սեիլմիշ դային հանկարծ սթափվեց, իրեն հավաքեց և զգաց, վոր խոսքը կիսատ եր թողել և շարունակեց.

— Ցեռ սնվել եմ գառնությունեներով և կյանքի զրկանքն եմ տեսել, իսկ դուք...Ցեռ ուրախ եմ եսոր ձեզ հետ, տղերք, ուրախ եմ ձեզ պես...

Ցեվ նա նորից սազը լարեց, հնչեցրեց դուրեկան յելեջներով ու յերգեց.

Տարիներս սեվով անցան,
Հազար զրկանք յես տեսա.
Արեվն անա ժպտաց սիրով,
Ա՜յ, խակական կյանքն, ես ա...

Բոլորի կողմից սիրված այդ Սեիլմիշ դային իր ամենասիրելի անձնավորությունն ել ունի կոլտնտեսության մեջ։ Այդ մարդը կոլտնտեսական Գալուստն ե, նրա մանկության ընկերը։ Գյուղում խոսում եյին, թե Գալստի շնորհիվ ե, վոր Սեիլմիշ դային կոլընտեսություն ե մտել, կապվել ե նրա հետ իր սրտի անկեղծ կապերով, և յերգում ե նրա աշխատանքը, փառքն ու սերը։

Իր թանկագին ընտանիքի ժամանակ կորստից հետո՝ նա վորոշել եր այլևս չամուսնանալ և այժմ ապրում ե միայնակ իր պապենական խրճիթում՝ շրջապատված՝ իրեն սիրող կոլտնտեսականներով։ Ցեվ բացի կոլեկտիվ աշխատանքից՝ նա յերգում ե մեր առաջնորդներին, նա նվիրում ե նրանց գեղեցիկ յերգեր, պարծենում ե նրանցով։ Ցեվ այդ յերգերը նա ասում ե յերեկույթներին՝ նվիրված այս կամ այն տոնին, վորտեղ արժանանում ե կոլտնտեսական հանդիսականների անկեղծ ժպիտներին և ծափերի տարափին։

Այդպիսի յերեկույթներից մեկին եր, յերբ Սեիլմիշ դային ընկեր Ստալինին նվիրած յերգն ասաց։ Սազի ներդաշնակ հնչյունները, վոր ձայնակցում եյին յերգչի անուշ ձայնին, շոյեցին բոլորի լսելիքը, այնպես հիացրին ամենքին, վոր յերբ յերգը դադարեց, ծափերի և բացականչությունների մի տարափ տեղաց, պարի և բացականչությունների մի տարափ տեղաց, պարհանձնեցին նորից յերգել այն։ Ցեվ Սեիլմիշ դային ավելի վոգեվորված կրկնեց նույն յերգը։

Դրանից հետո յեր, վոր Սեիլմիշ դայուն կոլտնտեսությունը պարգևատրեց և համարեց իր անմիջական սիրելի յերգիչը։ Ցեվ այս հանգամանքը բուռն ծափերով ու խնդությամբ ընդունվեց բոլորի կողմից։ Նամիայն այդ ծափերը լսեց, և սիրտը զարկեց սովորականից արագ, ու նա շնչեց խորը, յերջանիկ կյանքով։ Նրա ուրախությանը չափ չկար։

Այդ ժամանակ եր, վոր ինչ-վոր մարդիկ այցի եյին յեկել կոլտնտեսությունը։ Նրանք դիտեցին ամեն ինչ, ծանոթացան կոլտնտեսականների հետ։ Լսեցին նաև Սեիլմիշ դայու յերգերը և նրա մի շարք ստեղծագործությունները դրի առան։ Իսկ հետո, յերբ ուզեցին լուսանկարել, Սեիլմիշ դային համառեց, չեր նկարվում։ Բայց յերբ Գալուստը միջամտեց, յերգիչը զգաց, վոր լավ չի անում և հնազանդությամբ նստեց նշված տեղը...

Մի որ ել, յերեկոյան դեմ, Գալուստն իր սովորության համաձայն իրենց ընթերցարանը մտավ՝ նոր ստացված թերթեր կարդալու։ Հանկարծ նրա սիրտը

ծփաց, ուժեղ հրճանք տվեց։ Գալուստը նայեց նորից, և նրա աչքերը գամվեցին նկարի տակ խոշոր տառերով գրված տողերին՝ «կոլտնտեսական ստեղծագործող յերգիչ Սեվիլմիզ դային»։

Ապա նայեց աջ, ձախ, վերև, ներքև, շրջանային թերթի ամբողջ կես եջը նվիրված եր Սեվիլմիզ դայու յերգերին։

Գալուստը շտապ դուրս յեկավ ընթերցարանից՝ թերթը ձեռքին բռնած։ Նա քայլերն ուղղեց դեպի իր ընկերը։ Տեսավ դրասենյակի առաջ հավաքված կոլտնտեսականներին, վորոնք զրուցում եյին Սեվիլմիզ դայու հետ։

— Սեվիլմիզ դայի,—ուրախությունից ժպիտը դեմքին խաղացնելով՝ բացականչեց Գալուստը, յերբ բավական մոտեցրել եր նրան։

Սեվիլմիզ դային զգաստացավ, ասես ինչ-վոր նոր բան եր սպասում նրանից, վորովհետև ուրախությունից առաջացած այնքան արտասովոր բան կար Գալստի ձայնի մեջ։ Յեվ մինչդեռ Սեվիլմիզ դային պատասխան կտար, Գալուստը նորից նայելով թերթին՝ ասաց.

— Ա՜յ, թերթում նկարել են քեզ. ես ել քո յերգերը...

Կոլտնտեսականները զարմանքը և ուրախությունը միախառնած՝ նայեցին Գալուստի ձեռքի թերթին։ Գալուստն անմիջապես սկսեց այն կարդալ, տեղ-տեղ նույնիսկ արտասանել, քանի վոր այդ յերգերն այնքան սիրված եյին ու լսված, վոր Գալուստը բերանացի գիտեր։

Սեվիլմիզ դային զգում եր այդ բոլորը, գիտեր, վոր

անշուշտ ինչ-վոր նոր բան և կատարվել, բոլորովին չտեսնված ուրախալի բան։ Յեվ ժպիտն ակոսվեց նրա դեմքին։ Սակայն նա ընկել եր մի դրության մեջ, վոր յերբեմն պատահում և բոլոր կույրերին։ Մի դրությունը, յերբ մարդ դողում և ամբողջ մարմնով։ Յեվ նա ցընցվում եր մերթընդմերթ, դողում հուզմունքից, վորովհետև ուզում եր տեսնել իր զգացածը, բայց չեր կարողանում...

— Հին կյանքն աչքերիս զույգ արևը հանգցրեց...—ասաց Սեվիլմիզ դային և հաղիվ իրեն զսպեց։

ՀԱՆԵՍ ԱՄԻՆ

Ամռանը, վաղ առավոտից, յերբ արևը նոր եր պատրաստվում լեռներից յերևալ, Հանեսը սիրով լսում եր մեղուների կենսախինդ յերգն ու պարը։ Նա նայում եր հիացմունքով, հետևում եր նրանց շարժումներին, հետևում, թե ինչպես նրանք զուրս եյին գալիս փեթակից, ժրաջան պտույտներ գործում ու պտտում հեռու-հեռու, դեպի ծաղկափթիթ լանջերը, վոր ասես զարդարված լինեյին հազար գույնի ու հազար տեսակի գորգերով։

Նայում եր Հանեսը, և հրճվանքի ժպիտ եր խաղում նրա դեմքին։ Ասես ճյունն եր նստել նրա գլխին, այնքան ճերմակել եյին մազերը, նույնիսկ հոնքերն ու բեխերը։

— Թռեք բզզաններս, թռեք, — ասում եր նա խորին հրճվանքով ու նայում փեթակների կանոնավոր դասավորված կարգերին։

Ապա մոտենում եր, փեթակներից մեկի արգելակն եր քաշում ու դռնակը լայնացնում, վոր նրանց աշխատանքը չխանգարվեր, մյուսի կափարիչն եր ուղղում, վոր թեքվել եր գիշերը՝ պատահական քամուց կամ վայրի գազանից։ Մաքրում եր տեղ-տեղ փեթակների առջևի ավելորդ խոտերը և գործը վեր-

ջացնելով, գնում կանգնում էր մեղվանոցի մի ծայրին, թթենու շվաքի տակ ու նորից սիրով նայում էր «բզզաններին»։

— Հանես ամի, եգ խի յին եղենց բզզում, խա սոված չէն,— հետաքրքրվում էր Մուկուչը։

— Չէ, Մուկուչ, սա սովածության բզզոց չի։ Վոր սոված լինեն՝ լաց կանեն, հանց՝ ա խատանքի թևին աված չեն ծիծաղի...

— Վա՛, սրանք էլ են ծիծաղում, յա լաց լինում...

— Բա՛ս, սրանք էլ գիտեն ծիծաղել ու լաց լինել... Ցերը վոր տարին վատ է լինում և թռնում են դես ու դեն ու նեկտար չեն գտնում, իսկ դու էլ կարդին ուշք չես դարձնում—լաց են լինում, թե՝ ձմեռը վոնց պետք է ապրենք, հո կոտորվեցինք։ Իսկ թե վոր տարին լավ է լինում ու դու էլ հոր պես գուրգուրում-խնամում ես նրանց, ծիծաղելով թռչում են, վոր նեկտար հավաքեն։

— Բա՛ վոր կծեցին, Հանես ամի։

— Կկծեն, բա՛ս, թե վատ մտքով մոտենաս, ուզենաս խանգարել կկծեն, իսկ թե վոր ազնիվ լինես, միայն ոգնես ու իսկի չխանգարես նրանց և տարին էլ թե լավ յեղավ, են վախտը բարեկամի աչքով կնայեն ու կսիրեն քեզ։

— Տարին վոնց է, հո լավ է։

— Լավ է բա՛. ենքան մեղը կուենեանք, վոր ծով կկտրի. ա՛յ, ենդուր էլ բզզաններս ենենց թևին են տալիս ու ծիծաղում, ժրաջան թռչում, վոր բոլ նեկտար բերեն ու լիացնեն վոսկի մեղրով։

Զմեռը յերբ մեղվի ամեն տեսակ աշխատանքը վերջանում էր, Հանեսն անցնում էր այլ աշխատանքի,— կամ հեղեղից քանդված ճանապարհն էր նորոգում, կամ վայտից զանազան իրեր էր պատրաստում։

— Ցես պարապ նստել չեմ կարող, ասում էր նա, յերբ հարմար առիթ էր լինում,— պարապությունը մահ է, վոր կա։

— Հանես ամի, ժամանակդ անցել է, ախր, ծերացել, հալից ընկել ես,—կատակով ասում էր կոլտնտեսության նախագահը։

— Սխա՛, ես, Ադամենց տղա, ժամանակը հենց նոր է յեկել, հենց նոր է ծագել սրախս արևը։ Հին կյանքը ցրատոհար արեց, դրսից հանց ճերմակացրեց ինձ, թե չե՝ հաղար տարի պետք է ապրեի։ Ինձ ինչ կպաներ վոր...

— Բա՛ հիմի հավատամ, վոր ծեր չես, ելի,— նորից կատակում էր նախագահը։

— Չէ, Ադամենց տղա, միայն դրսից եմ ծեր յերևում։ Ցեվ հիմի ինչքան աշխատում եմ, ենքան ջահելանում եմ։

— Հա՛յ գիդի, հա՛,— ասում էր նա յերբ խոսք էր ընկնում վորևե տեղ,— կարծում էի, թե յես քար եմ, իսկի չեմ ծերանա, ենքան ամուր էի ու հաղթանդամ, համա շուտով իմացա, վոր դարդը քար էլ կծակի։ Ե՛գ դարդն էր, վոր ձմռան պես նստեց գլխս ու թիփի-բորան արեց...

Նման պահերին նայողը կտեսներ, թե ինչպես նրա քունքի յերակները լայնանում, աչքերը վառվում էին կյանքի կրակով, և նա միրթընդմերթ

ցնցվում էր այն անզուսպ կարոտից, թե ինչն։ Ինքը հիմա ծեր է..

Հանեսը ամին ապրում էր միայնակ խրճիթում և վոչ վոք չուներ՝ վոչ կին, վոչ յերեխա։ Միայն մի բրդոտ շուն ուներ, վոր պառկած էր լինում նրա խրճիթի առաջ, թթենու շվաքի տակ, և ուշադրությամբ հսկում էր իր հավատարիմ բարեկամի մեղվանոցը։ Մի ժամանակ շունն այնքան փոքրիկ էր, վոր հազիվ էր կարողանում վոտի կանգնել ու ման գալ։ Հանեսը նրան հացի փոփ ու փշրանքներ տվեց, խնամեց և վերջն այդ փոքրիկ շնիկը դարձավ այն խելոք շներից մեկը, վոր հազվագեպ են լինում։ Հիմար շների պես յերբեք լուսնահաջ չեր տալիս, հաջում էր միայն այն ժամանակ, յերբ վորևե տեղից կասկածելի շշուկ էր լսվում։

Անունը Փրկարար էր, և իզուր չեր, վոր այդպես էր կոչվում։ Զորս տարի առաջ, յերբ բոլոր ամանները մեղրով լցվեցին, կոլխոզը վորոշեց մեղրը անձնել կոոպերատիվին։ Հանեսը կատարեց այդ պարտականությունը։ Յեկավ գիշերը և քնեց։ Շատ չանցած հանկարծ քնի մեջ լսեց շան վոռնոցն ու հաջոցը։ Լսելն ու վեր թռնելը մեկ յեղավ։ Զգուշությամբ դուրս յեկավ, գիշերը խավար էր, հազիվ նըշմարեց, թե ինչպես գինված մարդիկ հանգիստ մոտենում էին։ Մոտը զենք չկար։ Ինչ-վոր բան մտածեց և զգույշ անցավ մյուս կողմով։ Մեկ էլ մի քանի մարդկանցով Հանեսը վրա տվեց, բայց մոտենալուն պես լսվեց մի պայմանական շվոց, և խրճիթից դուրս թափվեցին անծանոթ մարդիկ։ Հետևից կրակ տվեցին, սակայն վոչ մի արդյունքի չհասան։

— Յերևի կարծել են, թե քաղաքից փող եմ բերել,—ասաց Հանեսը և հանգիստ սրտով մտավ խրճիթ, ու շունը պոչը մտերմաբար շարժելով հետևեց նրան։ Հանեսը յերկար շոյում էր իր Փրկարարին...

— Իմ Փրկարարս, իմ Փրկարարս,—ասում էր Հանեսը, իսկ շունն ավելի յեր սեղմվում նրան և նայում էր յերախտահատույց աչքերով, ասես հիշելով մի դեպք։

Դեպքն այս էր։ Շնիկը, վոր մի փոքր մեծացավ ու սկսեց բակում վազվզել, մի որ կանգնեց փեթակների առաջ և տեսավ, թե ինչպես մեղուներն աշխուժով դուրս ու ներս են անում։ Զարմացավ. սա ինչ բան է, ինչու յեն այդպես անում և ձեռաց ցատկեց տեղից ու պղզեց մի փեթակի առաջ։ Ապա ցանկություն զգաց հետը թաթով խաղալու. մատնելն ու անելը մեկ յեղավ, մեղուները կատաղեցին. ով է այս բրդոտը, վոր համարձակվել է մոտենալ ու խանգարել իրենց հանգիստը։ Յեվ այնպես վրա թափվեցին, վոր տեղ չմնաց նստելու։ Շնիկը կաղկանձեց և այլևս չիմանալով ինչ անել, սկսեց ցավատանջ պտույտներ գործել։ Հանեսը նկատեց իր փոքրիկ շնիկի ծանր դրությունը, վրա թռավ՝ ամեն ինչ մոռացած, բռնեց և իսկույն վազեցրեց խրճիթը։ Վերցրեց մի մեծ դույլ ջուր և թափեց նրա վրա, մինչդեռ շնիկը ցավից կլանչում էր ու կուչ գալիս։ Դրանից հետո յեր, վոր շունն այլևս չեր մոտենում մեղուներին, պառկում էր թթենու շվաքի տակ և նայում նրանց աշխատանքին։

Գյուղում բոլորը ճանաչում էին Հանեսին՝ այս վաթսունամյա ծերունուն, որ զործում էր յերիտասարդական աշխուժով։ Պատմում էին, թե որքան որ նա մեզմ էր յուրայիններին նկատմամբ բարի և զիջող, այնքան անխնա յեր դեպի թշնամիները։

— Ձեմ սիրում կեղծ մարդկանց, նրանք իմ աչքի փուշն են,— ասում էր Հանեսն իր հոգու խորքից, յերբ որևէ տեղ առիթ էր լինում։

Ասում էին, որ մի խավար գիշեր (դեռևս նրա ջահել ժամանակ, յերբ ծառայություն էր անում Զորբայենց տանը) յերկու մարդ Հանեսի մոտ զողության են գնում։ Ինչ-որ տարորինակ աղաղոց և հասնում նրա ականջը, ասես մեղուները լաց էին լինում, և Հանեսը քնահարամ վեր է թռչում տեղից, զգուշությամբ բաց է անում խրճիթի դուռն ու կամաց անցնում դեպի մեղվանոցը։ Յերկու անծանոթ մարդիկ փեթակի գլխին կանգնած իրենց գործն են տեսնում, բայց յերբ նկատում են Հանեսին, փախուստի յին տալիս։ Հանեսն ընկնում է նրանց հետևից և ձորի շավիղով անցնելիս յերկուսին էլ բռնում է։ Գողերը փորձում են նորից փախուստ տալ, բայց Հանեսն ամուր բռնած նրանց ոձիքից՝ հայացքը սևեռում է նրանց աչքերին։ Յերբ ճանաչում է նրանց, տանում բերում, գլուխ-գլխի յե տալիս, ապա հրում, դեն է շպրտում նրանց հին լաթի պես և ձայն տալիս հետևից։

— Գնացեք, վորտեղ ձերն ասեք, ենտեղ էլ՝ իմը։

Մյուս օրը խոսում են այս դեպքի մասին և մեծարում նրա ուժը, սակայն չեն զարմանում, քանի որ առաջուց գիտեին նրան։

Նա իր ուժը ցույց էր տվել դեռ այն ժամանակ, յերբ քսան տարեկան յերիտասարդ էր։ Ամառվա մի որ յեղը խրանել էր, խուրձով բեռնված սայլը շուռ տվել և լծից դուրս պրծնելով՝ վազ էր տվել ճանապարհով։ Գյուղում հարա-հրոց էր ընկել, վախից վոչ վոք չէր մոտեցել, որ չլինի թե հարու տան։ Այդ աղակի վրա դուրս է ցատկում Հանեսը։ Արյունը յեռ է գալիս նրա բազուկներում, գնում թակ է կենում թփի յետևը և յերբ յեզն անցնում է իր մոտով, նա կայծակի արագությամբ վրա յե տալիս ու բռնում յեզան պոչից։ Յեզն ապուշ է կտրում մի պահ, մինչև ուշքի գալը, Հանեսն արդեն տապալում է նրան, գլուխը թեքում կողքի ու սպասում, որ զան-կապեն նրան։

Շատ դեպքեր եյին անցել Հանեսի գլխով ու շատ պատմություններ եյին հյուսել նրա շուրջը։ Ասում եյին, որ նա մի ձեռքով ցորենի լիքը ջվալ էր բարձրացնում, իսկ յերկու ձեռքով արդեն մարդու ն սեղմելով՝ մեջքն ու կողերն էր ջարդում։ Գող ու կեղծ մարդիկ հեռու եյին փախչում նրանից, բայց յեթե որևէ մեկը հանդգնում էր վատ մտքով մոտենալ նրան, առանց գլուխն ու կողերը ջարդվելու չէր ազատվում նրա ձեռքից։ Այսպես թե այնպես, իրականությունն այն էր, սակայն, որ Հանեսը մեծ ուժի տեր էր և շատ անկեղծ։

Բայց քանի՞ կոպեկ արժեր անկեղծ մարդն այն կեղծավոր աշխարհում... Հայրը որ մեռավ, Հանեսը տասնհինգ տարեկան էր։ Զորբայենց տնից պարտք

առան, հորը թաղեցին և յերբ չկարողացան ժամանակին պարտքը տալ, Զորբայենց Մակարը նրանց տասը վեթակ մեղուն ու մի թիզ հողը պարտքի դիմաց զավթեց։ Մայրը դոնե-դուռ ընկավ, բանեց գլխիկոր, մաշվեց, մաշվեց և մի ցուրտ ձմեռ անկողին ընկավ ու էլ վեր չկացավ։ Հանեսը, վոր հորից սովորել եր մեղուների խնամքը, մի որ պատահեց Զորբայենց Մակարին։ Նա կանչեց Հանեսին.— «Ա՛յ տղա, խի՞ չես գալիս ինձ մոտ, մեղուներին կնայես, քիչ էլ ուրիշ գործ կանես ու կտպրես ելի»։ Հանեսը մեղու շատ եր սիրում, գնաց, գործին ձեռք զարկեց, վորպես տղնիվ ու ջանասեր մարդ, մեղվի մեկը յերկուս դարձրեց։ Զորբայենց Մակարը մեծ ոգուտ ստացավ։ Ծառային իր հետ ավելի կապելու համար, իր վորբ աղախնին Կնության տվեց նրան...

— Լավ աղջիկ եր վողորմած հոգին. մեր գ՞ործը թողած՝ նրանցն եյինք անում... Ե՞հ, որ ու արև չտեսանք...—վերջացրեց մի անգամ Հանես ամին իր պատմությունն այս խոսքերով և լռեց, կոկորդն ասես խեղդվում եր։

Մուկուչն այդ նկատեց և նրան ծանր հուշերից ազատելու համար ասաց.

— Վոչինչ, Հանես ամի, հախիցը լավ յեկանք...

— Հախիցը յեկանք, համա... Ի՞նչու շուտ չարինք, սա նրանը չեր, սա մերն եր, մեր աշխատանքը, կոլեկտիվ աշխատանքը։ Հանես ամին խոսում եր սրտի խորքից՝ մեղուների վերնահարկը կարգավորելով։

Մի ժամանակ թեև կուլակաթափ արին Զորբայենց Մակարին և նրա ամբողջ մեղուն կոլտնտեսության սեփականությունը դարձրին, սակայն Հանես ամու մտքից յերբեք չեյին ջնջվում անցյալի հուշումնալից հուշերը։ Նա սիրում եր հալալ աշխատանքը և այժմ միայն, յերբ արդեն աշխատանքի թագավորություն եր, նրա ուրախությանը չափ ու սահման չկար։ Սիրում եր աղնիվ մարդկանց և ինքն էլ սիրված եր նրանց կողմից։

Հանես ամին ժողովներից յերբեք չեր բացակայում. նա սովորաբար նստում եր ակումբի վերջին նստարաններից մեկին և սիրով լսում խոսողներին։ Յերբեմն ինքն էլ եր մասնակցում խոսակցությանը, յերբ վիճելի հարց եր լինում, և միշտ էլ «խելացի կարծիքներ եր հայտնում։ Նա շատ եր զայրանում այն կոլտնտեսականների վրա, վորոնք մատների արանքով եյին նայում աշխատանքին, վորի համար էլ նրանց հարցը ժողովում եր դրվում։ Այդպիսիներին նախ կանչում եր առանձին, խոսում, յուրահատուկ խրատներ տալիս, իսկ հետո, վա՛յ նրան, ով վոր իրեն չեր հավաքի, Հանեսի ձեռքից չեր պրծնի։

— Դու կոլխոզնիկ չես, քո տեղը սա չի...— պախարակում եր այդպիսիներին և հետն էլ այլևս գործ չեր ունենում, վոչ էլ խոսում, իր վերջին յեղրակացությունը հանելով.—նա մենակ իր վատը չի ուզում, նա մեր՝ բոլորիս վատն է ուզում...

Բայց այսպիսի մարդիկ հազվադեպ եյին լինում։ Շատ անգամ Հանես ամու պարսավանքն ու ատելությունը բոլորի պարսավանքն ու ատելությունն եր նշանակում։ Յերկու դեպք եյին պատմում, յերբ Հանես ամին այդպես եր վարվել յերկու «կոլտնտեսականի» հետ տարբեր ժամանակներում և ընդհանուր ժողովը նրանց հեռացրել եր։

Այս վերաբերմունքն եր պատճառը, վոր վոմանք

չէին սիրում Հանես ամուն։ «Մեր գլխին յերկրորդ նախագահ է դառել», — ասում էին նրա հասցեյին։

Այդ զժգոհներից եր նաև Զորբայենց Մակարի վորդին։ Սա մի ժամանակ քաղաքումն եր աշխատում, իսկ հետո, յերբ այնտեղ ինչ-ինչ պատճառներով աշխատանքից հանեցին, գյուղ յեկավ ու սկսեց կոլտնտեսության մեջ աշխատել։

Հանես ամուն դուր չեկավ, յերբ նա իրենց շարքերում յերևաց։ Ատելության պես մի զգացում շարժվեց Հանեսի սրտում, բայց նա այդ չարտահայտեց, յերբ նրա կողմից թշնամական վոչինչ չտեսավ, անցածն անցած համարեց։

Գուցե նրանց հարաբերությունն այդպես էլ շարունակվեր, յեթե Հանես ամին մի անգամ ինչ-վոր ջնասակար բան չնկատեր։ Յեվ այդ բանից Հանեսի սրտում այնպիսի կասկած առաջացավ, վոր նա իրեն այլևս զսպել չկարողանալով՝ գոռաց.

— Ե՜յ, եղ ինչ ես քարողում...

Զորբայենց Մակարի վորդին հանկարծակիի յեկավ։ Նա մի պահ շփոթվեց հանցանքի մեջ բռնվածի պես, հետո արդեն իրեն հավաքելով՝ դեմքին ժպիտ ընդունեց ու ասաց.

— Վռնց է, Հանես ամի, ինչ ասի վոր նեղացար։

— Վռնց թե ինչ ասիր... դու դեմ ես դուրս գալիս մեզ ու մեր գործին...

Զորբայենց Մակարի վորդին զգաց, վոր իր խոսքը նրա մոտ չեր անցնելու և լռեց։ Բայց նրա տեղը մի ուրիշ բազմանդամ ընտանիքավորը խոսեց.

— Ինչու յես բարկանում, Հանես ամի։ Ես վոնց է, վոր յես տանը հինգ հոգի ունեմ պահելու, իսկ վերցնենք, այ, Պետրոսին, նա մեն-մենակ մարդ է, տանը մարդ չունի պահելու։ Բա նա ինձ հետ միատեսակ բաժին պիտի ստանա...

— Կարող է քեզնից էլ շատ կստանա, թե վոր դու նրանից շատ աշխոր չունեցար... Եդ քո բերնից չես ասում, Վաղո, ազնիվ աշխատողը յերբեք իր քրտինքն ուրիշին չի տա, եղպես չի։ Դու ազնիվ աշխատող ես. ինչ կասեն, հերիք չի, ինչ վոր մեր քրտինքն ուրիշին ենք տվել...

— Հանես ամին ճիշտ է ասում, համաձայնեցին շատերը։

— Վորտեղից է ճիշտ,— խոսեց Մակարի վորդու համախոհներից մեկը.—դուրս է գալիս՝ Վաղոն մեղավոր է, վոր հինգ հոգի ունի պահելու... Բա ինչի համար ենք յեկել, մին դառել, վոր շատ ու քիչ լինի մեր մեջ։ Թե ընկեր ենք, հավասար պետք է լինենք։

— Միտոգ է, չե՞, են վոր շվշվալեն ման եյիր գալիս, Զոփուռենց տղա, ձեռքերդ էլ քամակիդ դրած ու հենց ասում եյիր՝ «Կոլխոզ ենք», վոր կասենաս թե մենակ եղ հերիք է ու եղպես էլ, վոր կաս աշխարհքիս պարծանք ես... Եդ վաղ եր. ով հիմի իր աշխորերը քեզ կտա, վոր դու շատ ստանաս, նա՝ քիչ։ Ուզում ես շատ ստանալ՝ խնդրեմ, շատ աշխատիր։ Իսկ դու Վաղոյի մասին մի մտածիր, նա լավ է աշխատում, քո մասին մտածիր, վոր նրա կեսը գոնե ստանաս...

— Ճիշտ է,—նորից համաձայնություն տվին նրան։

Ցեվ այս դեպքից հետո, Հանես ամու և նրա համբերությունը սպառվեց, սկսեցին իրար ատել։ Մակարի վորդու ատելությունն աճում եր, յերբ Հանես ամին իրեն ավելի զգույշ եր պահում և իր փորձված աչքերով հետապնդում եր նրան, հաճախ նրա կատարած աշխատանքի մասին հարցնում եր բրիգադիրին ու յերբ խոսելու առիթ եր գտնում, չեր խնայում նրան։ Այս եր պատճառը, վոր մի անգամ Մակարի վորդին իրեն կորցրեց։

— Դու ինչ ես դառել իմ գլխին... դու քո աշխատանքն իմացիր...—ասաց նա Հանես ամուն։

— Յես իմ աշխատանքը գիտեմ, բայց դու քո աշխատանքը չգիտես։ Եղ է, վոր դու մեզ մոտ լավ ճաքով չես յեկել, հենց տակե-տակ ես ման գալիս...

— Յեռ... Տակե-տակ...— բարկությունից բորբոքված՝ նա էլ չկարողացավ բան ասել, ու ինքն էլ չիմացավ, թե ինչպես հարձակվեց ծերունու վրա։

— Ե՞յ, չհամարձակվես...— շրջապատեցին Մակարի վորդուն մոտիկ յեղածները։

Շրջապատող կոլտնտեսականները յետ շպրտեցին նրան։ Մակարի վորդու վարմունքն ընդհանուր վրդովմունք առաջ բերեց։

— Դու կոլխոզնիկ չես, սա քո տեղը չի...— իր կարծիքը տվեց Հանես ամին։

Մյուս որը, Հանես ամին ծխարարը ձեռքին՝ փեթակի վերնահարկից փուհ-փուհ ծուխ եր անում մեղուներին, վոր հետ քաշվեն ու թույլ տան վերնահարկի մեղրով լիքը շրջանակները հանել։ Զորբայենց Մակարի վորդու իրիկվա վերաբերմունքից շատ եր ջղայնացել, և համոզված եր, վոր նրա կոլտնտեսության մեջ մնալու հարցը շատ սուբ եր դրված... Մի ժամանակ նա կասկած եր առաջ բերել նաև ուրիշների մեջ, վորից հետո արդեն շատ աչքեր եին հետևում նրան, փաստեր հավաքում, իսկ այժմ նա իր վարմունքով արդեն տվել եր հարկ յեղած փաստերը։

— Հանես ամի, յես վախում եմ,— ասաց Մուկուչը, վոր կողքին կանգնած՝ ոգնում եր նրան։

— Մի վախիր, յերեսիդ քող ես գցել, մեղուն բան չի կարա անել,— հանգստացրեց իր ոգնականին։

— Բա դու չե՞ս վախում, Հանես ամի, վոր յերեսիդ քող չես գցել,— հետաքրքրվեց Մուկուչը։

— Յես սովոր եմ, Մուկուչ, իմ ամբողջ կյանքը սրանց հետ եմ անցկացրել, մեծ մասը Զորբայենց Մակարի տանը...— և նա այլևս բան չասաց հուզմունքից։

Մուկուչը, վոր Հանեսի ձեռքից մեղրով լիքը շրջանակներն եր վերցնում, այդ նկատեց։

— Ես մեկն էլ վերցրու,— ասաց Հանես ամին և վերջին շրջանակը մեկնեց Մուկուչին։

Մուկուչը վերցնելով՝ զգուշությամբ դրեց արկղը և իրիկվա դեպքը հիշելով՝ զարմացավ, թե ինչու Հանես ամին այդքան մեղմ վարվեց նրա հետ։

— Հանես ամի, եղ վոր Մակարի տղեն քեզ վրա ձեռք բարձրացրեց, բա չեյի՞ր կարող դրան մի լավ խրատ տալ, վոր մյուս անգամ իմանա, թե ում հետ գործ ունի,— ասաց նա այնպիսի անկեղծությամբ ու լրջությամբ, վոր Հանես ամու ժպիտը յեկավ։

— Վո՞նց խրատ տաս, Մուկուչ,— դիմամբ հարցրեց նրան։

— Դե, ծեծել, ելի...

Հանես ամին այլևս ծիծաղը չկարողացավ պահել։

— Ա՛յ, Մուկուչ, Մուկուչ... Ես աշխարհը իր բոլոնցքի վրա չի հիմնված. մեզ մոտ կարգ ու կանոն կա։ Կարծում ես, թե պրծավ։ Նա իր պատիժը կրանա...

— Վա՛յ, վա՛յ, Հանես ամի՛ն, քեզ կծեցին,—հանկարծ գոչեց Մուկուչը։

— Բան չկա, Մուկուչ, առանց դառը կծելու մեղուն խենց քաղցրություն չի տա,—պատասխանեց նա և փեթակի բերանի շուրն ու բարձն ուղղեց, որ կափարիչը ծածկի։

— Հանես ամի՛ն, բայց ես տարի մեղուներն ասես խելոքացել են։

— Կխելոքանան, բա՛ս, քանի որ լավ բերք կա մեղուները միայն են մտածում, որ շատ նեկտար բերեն, գործից հետ չընկնեն,—բացատրեց Հանես ամին, և մի փեթակի լիքը շրջանակները հանած, որ հազիվ եր բռնել Մուկուչը յերկու ձեռքով, շարժվեցին դեպի «մեղվի տունը»՝ մեղը քամելու։

Քիչ հետո սենյակում լսվեց քամիչի բռռոցը, ասես մի հսկա ողափոխիչ լիներ գառնալիս։

Յեվ այսպես լցվում եյին ամանները վոսկի մեղրով։

Մի որ, յերբ Հանես ամին ըստ սովորականի մեղվանոցում եր և մեղուներին եր նայում, կոլտնտեսության նախագահը յիկավ նրա մոտ, բարևեց ու կատակով հարցրեց, ինչպես վոր սովորություն ուներ.

— Հը՛, Հանես ամի՛ն, վինց են գործերը... քննություն հո լավ ես բռնել։

— Լավ եմ բռնել, բա՛ս, շատ հաջող,—նույնպես կատակով, պատասխանեց Հանես ամին։

— Դու մեղը ասա, հո բոլ ունենք։ Զլինի, թե Մուկուչը լավ չի ոգնում։

— Լավ է ոգնում, մեղրն էլ բոլ է։

Ու մի առ մի պատվելով՝ ցույց տվեց մեղրով լի ամանները։

— Դե՛, ասա՝ ցնծանք ելի։

— Պետք է ցնծանք, բա՛ս։

Արևը մայր մտնելուց հետո ամպերը ծածկեցին յերկինքը։ «Անձրև կգա»,—մտածեց Հանես ամին ու մի անգամ էլ ստուգեց փեթակները, որ անձրևը չվնասեր նրանց։ Ապա յիկավ նստեց տնակի առջև։ Շունը վոր պառկած եր թթենու տակ, պոչը մտերմաբար շարժելով մոտեցավ տիրոջը։

— Փրկարարս, Փրկարարս,—փաղաքշեց շանը։

Հանկարծ ամպերը ճայթեցին, փայլակը մտրակեց յերկինքը, և թավվեցին անձրևի մանր կաթիլներ։ Հանես ամին մի անգամ էլ շոյեց շանը և ներս գնաց։ Անձրևը մի պահ սաստկացավ, ապա սկսեց մաղել։

Կես գիշերվան մոտ եր, յերբ շան հաչոցը զարթեցրեց Հանես ամուն։ Նա զգաց, որ շունը կատաղած հարձակումներ եր գործում ինչ-որ մեկի վրա։ Իսկույն վեր թռավ տեղից և զգուշությամբ դուրս յիկավ տնակից։ Շունը սիրտ առավ։ «Գող է յերևում»,—մտածեց Հանես ամին և քայլերն արագացրեց։

— Ո՞վ ես, հե՛յ...—գոռաց նա, ապա շանը սիրտ

տալու համար՝ ձայնեց։—բռնի՛, Փրկարարս, բռնի՛...

Հանկարծ թպրտոց լսվեց։ Սավերի պես մի բան այս ու այն կողմ էր ընկնում, աշխատում էր փախուստ տալ։ Շունը, սակայն, ամեն անգամ առջևից վրա յեր ընկնում ու կտրում նրա ճանապարհը։

— Ո՞վ ես, հե՛յ... ասա՛ ինչ մարդ ես...—նորից գոռաց Հանես ամին։

Անծանոթը ձայն չհանեց, միայն աշխատեց նորից փախուստ տալ։ Շունը դարձյալ հարձակվեց։ Այս անգամ արդեն, անծանոթը հավասարակշռությունը կորցրած՝ թավալվեց գետին։

Հանես ամին վրա ընկավ, անծանոթին ոտատեց շան ճանկերից և քաշ տալով տարավ մոտակի մոտ, յերբ ճանաչեց նրան, պարանով կապեց թթենուց։ Իսկ շունը պառկած հսկում էր նրան, վորպես պահակ։

Անձրևն արդեն կտրվել էր և յերկինքը կամաց-կամաց պարզում էր։ Հանես ամին լամպը ձեռքին՝ դուրս յեկավ մեղվանոցը։ Ահա աչքի առաջ բացվեց մի ցավալի տեսարան. փեթակներից մի քանիսի խուփը բաց էր, մեղուները ոտոտոց էին գցել...

Մյուս որը հարևաններն իմացան այդ դեպքի մասին, տեսան Զորբայենց Մակարի վորդուն թթենուց կապված։

— Տեսնում ես եղ վոչ ու փուչին... Գայլը գառան մորթու մեջ...

— Ա՛խր, դու կոլխոզ ընդունելու դատ չեյիր, վո՞նց ընդունեցին...

— Տնաշեն, եղ հիմի՞ յես եղպես ասում, յերբ իր դեմքն արդեն գործով ցույց տվեց։ Առաջ իսկի մբաքովդ կանցնե՞ր։

— Ա՛յ քեզ թշնամի... վո՞նց չեյինք տեսնում...

— Հիմի եղպես է թշնամին, պղեր խո չէր ուներ...

— Դե, եղ էլ Հանես ամին գտավ ու իսկական դեմքը տեսանք...

— Եղպես զգույշ պետք է լինեք, բա՛...

Մինչ այդ Հանես ամին զբաղված էր ֆաստված փեթակները կանոնավորելով։ Ամբողջ ժամանակ մեղուները կատաղած կծոտում եյին նրան։ Լուսաբացին նա հաղիվ գործը վերջացրեց։

Առավոտյան գյուղխորհրդից յեկած մարդիկ արձանագրություն կազմեցին, ապա Մակարի վորդուն տարան։

— Բա սա մարդկությո՞ւն է, տո՛, վայրենի գազան,—մեղուների կողմը ցույց տալով գոռաց Հանես ամին։

— Թողեք, յես գամ դրա հախիցը, գոչեց Մուկուչը՝ հարձակման պատրաստվելով։

— Բաց թող... Բարկացան Մուկուչի վրա։

— Հանգստացիր, Հանես ամի՛, հանգստացրին նրան և ֆաստարարին առաջն առած՝ դուրս յեկան մեղվանոցից...

— Հանես ամի՛, եղ վո՞նց իմացար,—հետո հետաքրքրվեց Մուկուչը։

— Իմ Փրկարարս ասաց, իմ Փրկարարս...

Հանես ամին պատմեց գիշերվա դեպքը։ Փաղաքշեց Փրկարարին, իսկ շունը, վորպես պատասխան, լիզեց տիրոջ ձեռքերը և կողքի պառկելով, գլուխը դրեց

տոջևի թաթերի վրա և խելոք աչքերով սկսեց նայել տիրոջ աչքերին։

Այս դեպքից հետո Հանես ամին իրեն ավելի զգաստ էր պահում։ Ի՞նչ կասեին, յեթե մեկն ու մեկը նորից ինչ-որ հասցներ էր սիրելի «բզդաններին»։

Աշնան մի յերեկո, յերբ Հանես ամին մի անգամ ել մոտեցավ մեղուներին և մի առ մի ստուգեց, շունը մեղվանոցի մոտ դիմավորեց տիրոջը, պոչը մտերմաբար շարժելով՝ մի քանի անգամ քսվեց տիրոջ ծնկներին։ Հանես ամին նորից շոյեց ու գիշերվա կեր տվավ նրան։ Շունը կուշտ-կուշտ կերավ ու պառկեց դռան առաջ, իսկ տերը հանգիստ սրտով մտավ տնակն ու քնեց։

Վաղուց արդեն քնել էր, յերբ հանկարծ ականջին ինչ-որ աղեկոուր վոռնոց հասավ, ապա մեջընդմեջ հաջոցներ լսեց։ «Նորից գող է»,—ինքն իրեն ասաց Հանես ամին և այս անգամ արդեն հրացանը ձեռքին՝ դուրս յեկավ տնակից։ Շունը տիրոջը տեսնելով՝ մի յերկու բերան հաջեց, ապա ծառս յեղավ ու ցատկեց դեպի մեղվանոցը։ Հանես ամին հետևեց նրան...

Հանկարծ շունը կաղկանձեց, ասես ինչ-որ մեկը սուր ցավ պատճառեր նրան։ Յեվ նա նորից հետ վազեց։ Ահա դարձյալ հարձակում գործեց և այս անգամ արդեն մի սուր կլանչոց լսվեց։

— Բռնի՛, Փրկարարս, բռնի՛,—ձայնեց Հանես ամին և վազեց նրա կողմը։

Նրա առաջ բացվեց մի սրտաշարժ տեսարան, գիշերային ազատ մթության մեջ նկատեց, թե ինչպես մի հսկա բրդոտ բռնվել էր Փրկարարի հետ, և շունը ցավից կլանչում էր։

Հանես ամին հրացանը մեկնելուն պես դղրդացրեց. արձագանքի հետ մահատանջ կլանչոց լսվեց։ Առաջին գնդակին հետևեց յերկրորդը, վորից հետո մի կատաղի մռնչոց հասավ։ Ու ահա ստվերի պես մի բան շարժվեց, սկզբում պտույտ գործեց՝ ահեղ մռնչալով և ապա առաջ շարժվեց։ Հանես ամին մի պահ ցնցվեց։

«Հասի՛ր, Փրկարարս, հասի՛ր»,—ձայնեց շանը, բայց պատասխան չեկավ։ Զգաց, վոր վիրավոր արջն իր վրա յե գալիս։ Հրացանի մեջ փամփուշտ չկար, ոգնողն ել՝ վոչ մի տեղից։ Յեվ նա վազ տվեց դեպի տնակը։ Հրացանը փամփշտով լցնելով դուրս յեկավ թե չե, արջը վրա հասավ։

Հանես ամին հրացանը պարզեց։ Բայց արջը վրա պրծավ ու բռնեց հրացանից։ Նա փորձեց հրացանը քաշել արջի բերանից, բայց ուժը չպատեց։ «Հասի՛ր, Փրկարարս, հասի՛ր»,—կրկնեց իր խոսքը Հանես ամին։ Արջն սկսեց զոռել։ Շունը կլանչելով վրա հասավ տիրոջն ոգնության, բրդոտը, սակայն կատաղած ապատակեց իր հակառակորդին։ Հանես ամին իրեն կորցրեց ու ընկավ գետին։ Շունն այս անգամ կատաղեց։ Նա գիտեր արջի խոցելի տեղը և իր սուր ատամները այնպես ամուր սեղմեց ազդրերի արանքում, վոր բրդոտն ամեն ինչ մոռացավ, ամբողջ մարմնով դողդողալով՝ թողեց հակառակորդին։ Հանես ամին արջից ազատվելով՝ վեր թռավ տեղից և հրացանին հարմար դիրք տալով, թնդացրեց։ Արջը մի պահ տատանվեց ու ընկավ։

Հանես ամին ազատ շունչ քաշեց։ Յեվ ահա լամպը ձեռքին՝ նորից մեղվանոց գնաց։ Մեղվանոցի

ծայրում մեղուների սրտատանջ ազազոցն էր լսվում։ Նա կսկծով նայեց շուռ տեկած փեթակին։

— Եղ էր քո վերջը, խժռող բրդոտ, ես ինչ ոյին ես բերել իմ բղջաններիս,— ասաց Հանես ամին և փեթակն ուղղեց։ Մեղուները վրդովված խայթեցին նրան։

Հանես ամին դուրս եկավ մեղվանոցից։ Ցերը ձայն տվեց Փրկարարին, շունը չերևաց։ Ո՞ւր է գնացել Կուրծքը, սիրտը կսկծաց։ Ցեվ նա լամպի աղոտ լույսով յերկար ման յեկավ ամբողջ մեղվանոցը, դուրս յեկավ ճանապարհը, նայեց ծայրից ծայր, բարձրացավ բլուրը, կանչեց իր Փրկարարին ամենամտերիմ ձայներով, բայց շունը չկար... Ցեվ նա հուսահատ վերադարձավ տնակը...

Մյուս որը ծեգին, նորից դիտեց բակը, նայեց սենյակը, կանչեց ավելի մտերիմ և մի պահ կանգ առավ։ Ինչ-վոր մի միտք հանկարծ ցնցեց նրան և նա շարժվեց դեպի աղբյուրը...

Աղբյուրի ափին Հանես ամին հուզված վրա ընկավ իր սիրելի շանը։ Նա վերցրեց արյունապատ գետնից, ափսոսանքով նայեց նրա փակված աչքերին. շան մարմնին նկատեց արջի ճանկերի տեղերը, ասես այդ նույն վերքն իր սրտում լիներ, այնքան խոր ցավ զգաց Հանես ամին և աչքերից թափվեցին դառն արցունքներ։ Նա խեղդված ձայնով հեկեկաց։

Արջին սպանելու պատմությունն անցնում էր բերնե-բերան։ Զոմանք գալիս եյին ստուգելու։ Ցերը խրճիթի դռան մոտ տեսնում եյին հսկայամարմին արջը, իսկ թախտին՝ ձգված Փրկարարը,— մարդիկ հարց ու փորձ եյին անում Հանես ամուն, սակայն նրա արամադրությունը տեղը չեր։ Աչքերը կարմրել եյին...

— Ինչու՞ յես լաց յեղել, Հանես ամի՛, արջը խո չի՞ զոռել...— խեղդված ձայնով հարցրեց Մուկուչը՝ զգալով նրա հոգեկան ծանր վիճակը։

Հանես ամին վոչինչ չպատասխանեց, միայն նայեց իր Փրկարարի կողմը։ Այդ հայացքով ասես ուզում եր ամեն ինչ ասել, բայց Մուկուչը միայն տեսավ անշունչ Փրկարարին և զարմացավ։

— Հանես ամի՛, եղ ով սպանեց... —հաղիվ հարցրեց նրան։

— Արջը...

Ու նորից հեկեկաց...

Իսկ յերեկոյան դեմ մի փոս փորեց թթենու տակ, վորտեղ հաճախ պառկում եր շունը, ապա թախտից վերցնելով՝ վերջին անգամ իր գիրկն առավ «Փրկարարին», արտասվալից աչքերով նայեց նրա փակված աչքերին և ափսոսալով իջեցրեց նրան այդ նոր բացված փոսը։

— Լավ շուն եր հա,— ասաց ներկա գանվողներից մեկը։

— Մարդը վորդու պես եր սիրում,— ասացին մյուսները։

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Մութն իր անտեսանելի վոտքերով աշխարհն եր
կոխել։ Այդ գիշեր յեթե մատդ մեկի աչքը կոխեյիր,
դարձյալ չեր տեսնի։ Յերկինքը խոժոռադեմ եր սև
ու մութ ամպերով ծածկված, ոդը՝ խոնավ ու ծանր։
Մադին հրացանը ձեռքին կանգնած եր և նայում եր
չորս կողմը։ Շուրջն ամեն ինչ անորոշ եր։

Կոլանտեսության նոր պահեստը լիքն եր հազա-
րավոր փութ հացահատիկով։ Հսկում եր Մադին՝ լուռ,
ամբողջովին լսողություն դարձած։ Հոգին անգամ չեր
շարժվում տերևների մեջ և վոչ մի շշուկ չեր լսվում։

Ուրախ եր Մադին։ Նա մտքովն անց եր կացնում
նույն որվա զեկուցումը բերքաբաշխման մասին ու
իր հասանելիք աշխորերը, ապա ամեն մի աշխորին
ընկնող ցորենը, ամբողջը միասին բավականին ար-
դյունք եր անում։ Վաղն իր տունը հացահատիկով
կլցվեր։ Ու սիրտը պարուրվում եր քաղցր հույսերով,
և նրա դեմքով մի յերջանիկ ժպիտ եր անցնում։

«Ո՞վ գիտի, հենց հիմա տանը լամպի ապակին
ոճորքից լիս և տալիս ու պատեֆոնն էլ անուշ կլկլոց
և զցել—մտածում եր նա, ապա, մտքով խոսում կնոջ
հետ.— հը՛, վոնց է, Վարդիշաղ, եսպես լավ է, չէ՞։
Կոլխոզ չեյիր գալիս, գե՛, ապրիր մարդավարի, հացը՝
բոլ լիսը՝ ծով. ու ամեն որ յերգ ու կլկլոց... Ո՞վ

կասի, թե յես մի վախտ նոքար եմ յեղել, կին ու յերեխեքս սև հացի կարոտ։ Թող հսոր դուրս դա Զոփուրենց Մոսին, հետո վոտ ձգի»...

Նա մի պահ կանգ առավ ու մտքում ծիծաղեց։

«Հա՛, հայ ժամանակ... Իսկ առաջ,—շարունակեց նա,—նրա ձեռքի տակ նոքար եյի, ծերը ծերին հացնել չեր լինում։ Ցնաքանդը հենց կուլ եր տալիս մեր արյուն-քրտինքը։ Դե, հիմի կողք-կողքի կանգնած գործ ենք անում, աշխատեր ինչքան կարաս ապրիր։

Նա կանգ առավ։ Ինչ-վոր շշուկ լավեց։ Մադին ամբողջ լսողությունը լարեց և յերբ համոզվեց, վոր տերևների շրշյունն եր, սկսեց քայլել պահեստի շուրջը։ Նա քայլում եր ու նորից մտածում։

«Զե՛, ել մեզ հետ վոտ մեկնել չեն կարող, մենք աշխատանքի քուրա ընկած՝ թրծված ենք, իսկ նրանք՝ հով տեղին սովոր։ Դե՛, կարին մեզ հետ լուծ քաշել։ Դրա համար ել ուզում են, վոր ելի մեր աշխատանքով ապրեն։ Շատ չեն դրանք։ Ա՛յ, Զոփուրենց Մոսին, Զալենց Արշակը, Գզրենց Մինասը»...

Ու նա սկսեց մատների վրա հաշվել նրանց։ Հիշեց այդ որվա ժողովը ել։

Մադին հենց իր աչքով նկատեց, յերբ կոլտնտեսության նախագահը ղեկուցումը վերջացրեց, Զալենց Արշակն ուզեց ձայն վերցնել, բայց բուռն ծափահարությունից հանկարծ շփոթվեց։ Նա ասես հետ կանգնեց իր քայլից։ Իսկ յերբ Զոփուրենց Մոսին մի յերկու անգամ հրմշակեց նրան՝ «Վեր կաց, վեր կաց», Արշակը ձայն խնդրեց։

— Խնդրեմ,—պատասխանեց ժողովի նախագահը։

Նա առաջ գնաց, մոտեցավ սեղանին ու քիչ մտածելուց հետո սկսեց խոսել։

— Հա՛, քո ասածը շատ լավ է,—դիմեց կոլտնտեսության նախագահին.—մեր նախկին չքավոր գյուղացիք հիմի ունեվոր են դարձել ուստ սարք ու կարգ են առել, հսոր-հզուց ել հարյուրավոր փութ ցորեն են ստանալու։ Ա՛յ, որինակ Մադին, մարդն ամեն ինչ տեղ արեց, ու լավ է, վոր յերեք հարյուր փութ ցորեն ել պիտի ստանա. բայց... Ետեղ մի ուրիշ վախ կա...

— Եղ յես հասկացա, Արշակ,—տեղից գոչեց ինքը՝ Մադին։

— Թողեք, մի ասի՝ ինչ վախ կա։

Ակումբում լռություն տիրեց։ Կոլտնտեսականները աչքերը հարցականորեն հառեցին նրան։

— Են վոր, յես վախում եմ, չլինի՞, թե մեր կոլխոզի քիչ աշխատող ձեռք ունեցող շատավոր ոջախները դեռ ձմեռվա կեսին սովի առաջ կանգնեն։

— Ա՛յ, ինչ եմ ասել, հենց եղ է, վոր կա,—լսվեցին մի քանի հավանության փսփսոցներ։

— Հետո, դրանով ինչ ես ուզում ասել,—դիմեց նախագահը։

— Ա՛յ, ախպեր Ջան, մենք հո սոցիալիզմի համար ենք պայքարում։ Յեթե եղպես է, բա վենց կարելի յի մի կոլխոզնիկին յերեք հարյուր փութ ցորեն տալ, մյուսին՝ քսան փութ։ Եղ հո չեղավ. մեկը բոլոր ուտի ու դեռ հալա ուրիշ բան ել առնի, իսկ մյուսը սոված՝ նրա փշրանքները հավաքի...

Ժողովականների միջից լսվեցին բողոքներ։

— Ե՛դ լոդբերի թագավորին միք թողնի...

— Կուլակի պոչն է...

— Ուրիշի բերնից է խոսում...

— Ե՛յ, փնթի,— խիստ բարկացավ բրիգադիրը.— ինչ է, ուզում ես ուրիշի հաշվին ապրես։ Յեթե գործ չես արել, ինչ պիտի ստանաս...

— Ընկերներ, սպասեցեք մի.. — ուզում էր լռեցնել նախագահը։

— Զենք ուզում .. Թող չխոսի...

— Գիտենք դրա փորացավը...

Մի քանիսն էլ բողոքների թվում սկսեցին ձեռք առնել Արշակին.

— Մարդը սոցիալիզմից խոսեց, վոր խոսքը ճիշտ եր...

— Լավ էլ ճշտեց, առանց քրտինքի վոտը մեզ հետ է մեկնում...

Բողոքն ու դայրույթը, հեգնանքն ու ծիծաղը բռնել եր ամբողջ ակումբը, նախագահն իզուր եր աշխատում լռեցնել կոլտնտեսականներին։ Զալենց Արշակը շփոթված ու մինչ ականջները կարմրած՝ նստեց տեղը։ Նախագահի յերեսն էլ շիկնել եր, նա հազիվ կարողացավ հանդստացնել ազմկոտ ժողովը։ Ապա տասնյակ ձեռքեր վեր յելան, բոլորն էլ ձայն խնդրեցին։

Խոսեց Մագին։

— Եղ վաղ եր, ե՛, Զալենց Արշակ,— այսպես սկսեց նա.— հիմի լոդբի ու թամբալի տարին չի։ Տղա յես, մեյդան դուրս արի, կոդքիս կանգնիր ու գործ արա։ Բա վոնց, յես քո նոքարն եմ՝ գիշերներ անքուն մնամ, դատեմ ու քեզ տամ։ Հիմի ապրուստն աշխատողինն է, ով կաշխատի՝ նա կուտի։ Ե՛լ ինչի յես նեղանում, թե՝ Մագին յերեք հարյուր փութ ստացավ, յես քսան փութ.. վոնց չէ, դու վոր եղպես ձեռքերդ ծալած մնաս դրանից ավելի կստանաս...

— Իսկի էլ չէ,— խառնվեց Արշակը.— թե կուզես իմանալ, բոլորս էլ աշխատում ենք. մեկը կուշտ պետք է ուտի, մեկն էլ, վոր շատ ուտող ձեռք ունի, սոված պետք է մնա։ Յես չեմ ուզում, վոր շատերը հերվա պես սոված մնան։

— Պահ, մարդը շատերի դարդիցն է խոսում,— ծիծաղեցին մի քանիսը։

— Վոնց չէ...

— Զուր տեղը չեք ուզում հասկանալ, յես ճիշտ եմ ասում,— նորից ուզեց հաստատել Արշակն իր խոսքը։

— Գիտեմ վոնց ես ճիշտ ասում,— հեգնեց նախագահը.— դու պատճառ ես բռնում, թե՝ բոլորս էլ աշխատում ենք։ Յես էլ գիտեմ, վոր բոլորդ էլ աշխատում եք, բայց թե ինչպես...

— Դի վոր աշխատում ենք ու ճիշտ չի գրվում... — այս անգամ ասաց Արշակը։

— Սուտ է,— աղմկեցին ժողովականները։

— Կեղծում է...

— Դուրս ժողովից...

— Մեր թշնամին է...

Արշակն այլևս բան չպատասխանեց, գլուխը կախ գցեց ու դուրս յելավ ակումբից...

Այժմ Մագին դանդաղ պտտվում եր պահեստի շուրջը։ Յերբ հոգնեց քայլելուց, յելավ-կանգ առավ

պահեստի դռանը, հրացանը վայր բերեց ուսից ու հենվեց վրան։ Այդ ժամանակ ինչ-որ չիկոց լսվեց կալերի կողմից, ասես մի չոր ճյուղ ջարդվեց։ Մադին հրացանը բարձրացրեց ու կանչեց.

— Հե՛յ, ո՞վ կա եղեղ։

Ձայն չլսվեց։ Մադին շունչը պահած սկսեց ուշադիր լսել։ Շշուկը չկրկնվեց բավական ժամանակ։ Հետո միայն մի խուլ վտանգաձայն հառավ։ Մադին արդեն համոզվեց, որ կալերում մեկը կա։

— Հե՛յ, ո՞վ ես, ձեն հանիր...—Նորից կանչեց նա, սակայն յերբ պատասխան չստացավ, սպառնաց.— Ձեն հանիր, թե չե՝ կխփեմ։

Մութն եր, վոչինչ չեր յերևում։ Մադին առաջ շարժվեց, և տեսավ մի մարդու։

— Եստեղ ինչ ես շինում,—սկսեց հանդիմանել նա.— բա՞ որ կանչում եյի, ինչի՞ ձեն չեյիր հանում...

Յեվ առաջն առած՝ բերեց պահեստի մոտ։ Այդ ժամանակ մի ուրիշը դաշույնի մի հարված իջեցրեց նրա գլխին։ Մադին անքաց, փակագակը չիկացրեց, բայց դաշույնի հարվածը կրկնվեց։ Գնդակն սպարդյուն վզաց և Մադին թուլանալով, ծնկաչոք ընկավ գետին։

—Թյո՛ւհ, վոնց արաքացրեց... —ատամները կրճատացրեց առաջինը։

— Շուտ, նավթը լցրու... —շատակցրեց մյուսը։

Յերկու հոգի արագ մոտեցան դռանը։ Կրակը հանկարծ բռնկվեց ու սկսեց լիզել պահեստի դուռը։ Շուտով հարայ-հրոցն ընկավ, լսվեցին տհեղ ձայներ.

— Հե՛յ, կրակը, կրակը...

— Պահեստն է այրվում... շո՛ւտ-շո՛ւտ...

Բնակարան դուրս եյին վազում ֆերմայից դեպի պահեստը։ Հրացանի տրաքոցը մի բոպեյում հավաքեց կոլտնտեսականներին։

— Ջո՛ւր, ջո՛ւր...

Յերիտասարդներն ուղղակի կրակն եյին նետվում, ասես չեյին վախենում այրվելուց։ Գ րծում եյին բահերն ու կացինները։ Վոչինչ չեյին խնայում՝ ահագին ցորենը փրկելու համար։ Իսկ մի ուրիշ խումբ սկսեց քանդել ու խրամատներ բանալ պահեստի ու խոտի վառվող դեզի շուրջը, որ ֆերման և մնացած դեզերը փրկվեն կրակից։

— Մինք վախի, տղերք ջան, դեռ կրակը ներս չի խուժել, — սիրտ տվեց կոլտնտեսության նախագահը։

— Միջի բենզինից եմ վախում, թե կրակը հասավ նրան, տուններս քանդվելու յե,— ասաց պահեստապետը։

—Շո՛ւտ թաղիքը թրջեք,— մռայլված դեմքով գոչեց նախագահը։

Զուր եր, որ շաղ եյին տալիս կրակին։ Բլոկներն ու կացինները շտապով գործում եյին։ Իրար հետևից պոկվեցին դռան այրվող սախտակները և պահեստի դուռն ամբողջապես քանդվեց։

— Պիտի ներս գնալ,—ասաց նախագահը՝ թաղիքը գլխին գցելով։

— Ա՛յ մարդ, կայրվես,—լսվեցին մի քանի ձայներ։

— Բան չկա,— ասաց նա ու ներս նետվեց։

Շրջանակի վառվող մի սախտակ ընկավ նրա գլխին, բայց նա իրեն չկորցրեց։ Մի յերկու պտույտ

գործելուց հետո գտավ բենզինի լիքը տակառն ու սկսեց թաղիքով ծածկել։ Մի քանի հոգի հետևից հասան, դուլլերով ջուր տարան։ Թաղիքն ամբողջովին չեր պատում. նախագահն իսկույն բլուզը հանեց, նրան հետևեցին մյուսներն ել։ Ջրով թրջելով չորս կողմից պատեցին տակառը, ապա նորից ջուր ցանեցին վրան։

— Մթերքները դուրս հանեմք, — հարցրին նախագահին։

— Թող մնա, կրակն արդեն բռնված է։

Մարդիկ կարի վառվող փայտերը մի կողմ եյին թափում լինդի հալվածներով, որ առաստաղը չբռնկվեր։ Փայտերը խշշալով իջնում եյին լայնարձակ բակը և կայծերը յերկնքից ընկնող աստղերի նման շաղ եյին գալիս ոդում։ Հաճախ ել, ջրից սկըսում եյին թշշալ։

Կրակն սկսեց պտտվել, նահանջեց իր գիրքերից։ Կողքի դեզն այրվել վերջացել եր և փորված խրամատը փակել եր կրակի ճամբան։

— Պրծանք, տղերք ջան, — ասաց նախագահը և աղտոտ շունչ քաշեց։

— Պրծանք, — հանդստացան բոլորը։

— Ո՞վ է կրակ տվել...

— Մադին ել չկա...

— Հա, Մադին... Մի բան արած կլինեն, թե չե՝ պահեստին վոնց կմոտենային, — կարծիք հայտնեց նախագահը։

Ընկերները լապտերներով մեն յեկան ու կալերի մոտ գտան Մադուն՝ վիրավոր։

Մյուս որը, յերբ լույսը բացվեց, գյուղում լուր ընկավ.

— Զոփուրենց Մոսուն և Զալենց Արշակին բռնել են...

— Ա՜յ, սրիկաներ...— ասացին տղերքը։

— Ա՜յ, թե ինչու եյին քարոզները կարդում...

— Խոսքով չկարացին, գործի անցան...

Մադին ուշք յեկած՝ հազիվ ավարտեց գիշերվա դեպքի պատմությունը...

ՑԱՆԿ

		Եջ
1.	Ճանապարհը	5
2.	Մատանի հողը	27
3.	Զիկորը	43
4.	Կամուրջը	57
5.	Անխոս մարդը	77
6.	Զին Մոսին	95
7.	Ընկերոջս հուշատետրից	109
8.	Սեվիլմիշ դայի	117
9.	Հանես ամին	137
10.	Լուսաբացին	151

А. 1939 г.
Акт № 146
Вкладн. л.

А. МУРВАЛЯН
Рассказы
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.

Պատ. խմբագիր՝ Բաբլոյան
Հեղ. խմբագիր՝ Հար. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալբուրյան
Սրբագրիչ՝ Մ. Մարտիկյան

Գլավլիտի լիազոր՝ Տ. 1677 Հրատ. № 4648.
Պատվեր 497. Տիրաժ 3000.
Թուղթ 72×105 Տպագր. 5 մամ.
Մեկ մամ 51200 նշան.
Հանձնված է արտադրության 25 մայիսի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 21 նոյեմբերի 1938 թ.

Պետհրատի I տպարան, Երևան. Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0359639

44965